Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2270
2271

84
Ц-82

№ 1809.

Ann. IV
Fo 169.

9011

1209 14 2

ԱԼԾԵՏ ՏԷ ՄԻԼՍԻ

ԴԱՐՈՒՍ ՄԷԿ ՁԱՒԱԿԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Գ.Բ. ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Զմիւռնիա

ՏԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ ՏՊԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԷՏԷԵԱՆ

1873

ԱԼԵՔՍԵՏ ՏԷ ՄԻՒՍԷ

ԴԱՐՈՒՍ ՄԷԿ ԶԱՒԱԿԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Գ.Ր. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

1002/5318
9

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Զմիւռնիա

ՏԷՐ-ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷՆԱՆ

1873

1040

ԴԱՐՈՒՍ ՄԻԿ ՁԱՒՍԿԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ՄԱՄՆ ՁՈՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

ՀԱՐԱՒ պիտի պատմեմ սիրոյս ինչ վախճան ունենալը և ինչ փոփոխութիւն կրելը։ Ինչ պատճառ կրնամ տալ այս մասին։ Պատճառ չունիմ ամենևին. կը պատմեմ միայն և կրնամ ըսել. «Այս է ճշմարտութիւնը»։

Ճիշդ երկու օրէն 'ի վեր տիկին Բիէրսօնին սիրողն էի։ Երեկոյեան ժամը տասնումէկին քաղանիքէն կ'ելնէի և դիշերն ուր օգը պայծառ և շքեղ էր՝ Ճեմարանէն կ'անցնէի իր տունն երթալու համար։ Մարմնովին այնպիսի բերկրութիւն և հոգևին այնքան գոհունակութիւն կ'զգայի որ քայլելու ատեն ուրախագին կը ցայտէի և թեւերս դէպ երկինք կը տարածէի։ Սանդուղքին վերի կողմը կը գտնէի տիկին Բիէրսօնը որ վանդակին վրայ կռթնած կ'ըլլար, և քովը գեղջիկը դրած մում մը կ'ունենար։ Ինձ կ'սպասէր, և զիս նշմարելով կը վազէր և կը դիմաւորէր զիս։ Խակոյն իր սենեակը կը մտնէինք, և դուռը կը կղպէինք։

Տիկին Բիէրսօն կը ցուցնէր ինձ թէ ինչպէս փոխած էր իր գլխու զարդը որ հաճելի չէր ինձ, և թէ ինչպէս օրն անցուցած էր իր մայերուն տալու համար այն ձևը զոր կ'ուզէի, թէ ինչպէս ննջեկէն վերցուցած էր սև շրջանակով յուռի պատկեր մ'որ սոսկալի կ'երևար ինձ. թէ ինչպէս նորոգած էր իր ծաղիկները. և սենեկին ամեն կողմը ծաղիկ կար. կը պատմէր այն ամեն բաները զոր ըրած էր այն առենէն 'ի վեր որ գիրար կը ճանչէինք, կ'ըսէր թէ տեսած էր ինչպէս տառապիլը, կը պատմէր նաև օրքան տառապանք կրելը. թէ ինչպէս հազար անգամ ուզած էր բոլորովին մեկնիլ այն երկրէն և խոյս տալ իր սէրէն. թէ ինչպէս այնքան զգուշութիւններ երևակայած էր ինծի դէմ. թէ խորհուրդ առած էր իր օրաբոյրէն, Մերգանսօնէն և ժողովրդապետէն. թէ ինքնին երդում ըրած էր մեռնելու քան թէ ընկրկելու. թէ սակայն այս ամեն բաները թուեր էին այն ինչ խօսքին վրայ զոր ըսեր էի իրեն, այս ինչ նայուածքին, այն ինչ պարագային վրայ, և մեն մի խոստովանութեան հետ համբոյր մը կար։ Իր սենեկին մէջ ինչ որ ճաշակիս յարմար կը գտնէի, իր սեղանները ծածկող մանր մունր իրերուն մէջ ինչ որ ուշադրութիւնս կը գրաւէր, տիկին Բիէրսօն կ'ուզէր ինձ տալ, ըսելով որ իրիկունն իսկ հետս տանիմ և չմնանիս վրան դնեմ. ինձ կը թողուր հաճութեանս համեմատ կարգադրել ինչ որ ինքը պիտի ընէր այսուհետև առաւօտները, առջի գիշերները, վերջապէս ամեն ժամանակ, ըսելով թէ ոչինչ իր հոգն է, թէ հասարակութեան խօսքերը բանի տեղ չդներ. թէ այս խօսքերուն առեն մը հաւատալ ձևացուցած էր լոկ գլխ հեռացնելու դիտաւորութեամբ, թէ կ'ուզէր միայն երջանիկ ըլլալ և ականջները խփել. թէ երեսուն տարեկան հասակը մտած է, և թէ իսկ սիրուելու շատ ժամանակ չունի։

— Բայց դուն, կ'ըսէր ինձ, երկար առեն պիտի սիրես գիս։ Մի թէ փոքր ինչ ճշմարիտ են այն գեղեցիկ խօսքերն որով այնքան սաստիկ զգլխեցիր գիս։»

Ապա կ'սկսէր անոյշ անոյշ յանդիմանութիւններ ընել, ըսելով թէ ուշ կը գայի, թէ պչրասէր էի. թէ բաղնիքին մէջ խնկուեր էի կամ շատ կամ ոչ բաւական, և կամ ոչ իր ուզած կերպովը.

թէ ինք շղուական հագած կեցեր է որպէս զի իր մերկ ոտքը տեսնեմ, և թէ ոտքն ալ ձեռքին պէս սպիտակ է. թէ սակայն և այնպէս գրեթէ գեղեցիկ չէր ինք. թէ կ'ուզէր հարիւր անգամ աւելի գեղանի ըլլալ, ինչպէս եղած էր տասնուհինգ տարեկան հասակին մէջ։ Տիկին Բիէրսօն կ'երթար ու կը դար սիրով գլխովին արբշիռ, ուրախութեամբ բոլորովին շառագոյն, և ինչեր երևակայելը, ինչեր ընելը, ինչեր ըսելը չէր գիտեր՝ հոգևին և մարմնովին ինձ յանձնուելու, գարձեալ յանձնուելու և ամեն ունեցածն ինձ տալու համար։

Բաղնիքին վրայ պառկած էի։ Տիկին Բիէրսօնին մէն մի խօսքին հետ անցեալ կեանքիս մէկ ժամուան ընկնիլը և իմմէ զատուիլը կ'զգայի։ Կը նայէի սիրոյ աստղին դաշտիս վրայ ծագելուն, և կը թուէր ինձ ըլլալ հիւթեղ ծառ մ'որ հովին իր չորաբեկ տերևները կը ցնցէ նորանոր տերևներով զարդարուելու համար։

Սիրուհիս դաշնակին առջևը նստելով ըսաւ թէ Սթրատելլային մէկ եղանակը պիտի նուագէ։ Սրբազան երաժշտութիւնը ամեն բանէ աւելի կը սիրեմ, և շատ գեղեցիկ երևած էր ինձ Սթրատելլային այն կտորը զոր տիկին Բիէրսօն արդէն նուագած էր ինծի համար։

— Բայց ինձ նայէ, ըսաւ երբ աւարտեց եղանակը, կատարելապէս խաբուեցար. եղանակն իմմէն է, և քեզի խափեցի։

— Քեզմէ՞ն է։

— Ա՛յո, հաւատացուցի քեզ թէ Սթրատելլայէն է այն, տեսնելու համար թէ ինչ պիտի ըսես։ Երբէք չեմ նուագեր այն երաժշտական եղանակները զոր երբեմն կը շարադրեմ. սակայն ուզեցի փորձ մ'ընել, և կը տեսնես որ յաջողեցայ, քանի որ պարզապէս հաւատացիր թէ Սթրատելլան է հեղինակը։

Մարդս հրեշային մեքենայ մ'է։ Ասկից աւելի անմեղ բան մը կա՞ր։ Փոքր ինչ ուշեղ տղայ մ'ալ կրնար այս խորամանկութիւնը երևակայել իր վարժապետը խաբելու համար։ Տիկին Բիէրսօն յաժարակամ կը խնդար ասի ըսելով ինձ. սակայն յանկարծ զգացի թէ կարծես ամպ մը կը տարածուէր վրաս. երեսիս գոյնը փոխուեցաւ։

— Ինչ ունիս, ինչ կ'ըլլաս, ըսաւ տիկին Բիէրսօն։

— Ոչինչ. անգամ մ՚ալ նուագէ այդ եղանակը։

Մինչդեռ ինք կը նուագէր, ես յաջ և յահեակ ժուռ կը դայի. ձեռքս ճակատս կը տանէի կարծես անկէ մէգ մը հեռացնելու համար. ոտքովս գետինը կը զարնէի, ուսերս վեր կ՚ընէի խենդութեանս համար. վերջապէս գետինը նստայ բարձի մը վրայ որ ընկած էր. քովս եկաւ տիկին Բիէրսօն։ Մէկ կողմէն կ՚ուզէի կուռիլ խաւարին ոգիին հետ որ սոյն պահուն կը դրաւէր զիս, միւս կողմէն սակայն թանձր խաւարը գլխուս վերևը կը կրկնապատկուէր։

— Իրա՞, այսքան քա՞ջ կը ստես։ Ինչ. այս եղանակը քեզմէ՞ն է, այսքան դիւրաւ ստելու կարող ես ուրեմն։

Ինձ նայեցաւ զարմանալով։

— Բայց ինչ է ատի, ըսաւ։

Անմեկնելի վրդովում մը ծաւալեցաւ իր դէմքին վրայ։ Անշուշտ չէր կրնար կարծել թէ այսքան պարզ կատակի համար զինքը ատուդապէս մեղադրելու չափ խենդ էի. ուստի այս իրողութեան մէջ իր ստուգապէս տեսածն ոչ այլ ինչ էր բայց միայն զիս դրաւող տրտմութիւնը. բայց այս տրտմութեան պատճառը չնչին ըլլալուն պատճառաւ իսկ ևս աւելի զարմանալու տեղի կը տար։ Պահ մը ուզեց կարծել թէ ես ալ կատակ մը կ՚ընէի. բայց երբ տեսաւ թէ միշտ տժգոյն էի և պատրաստ նուաղելու, բերանաբաց և մարմնովին ծռուած մնայ արձանի մը պէս։

— Աստուա՞ծ իմ Աստուա՞ծ, կարելի՞ է այս, գոչեց։

Ընթերցող, թերևս կը ժպտիս այս տողերը կարդալով, բայց ես՝ որ գրեցի զանոնք՝ տակաւին սարսուռ կ՚ըզգամ։ Դժբաղդութիւններն ալ հիւանդութեանց պէս ախտանշան ունին, և չկայ բան մ՚որ այնքան զարհուրելի ըլլայ ծովին վրայ որքան է հորիզոնին վրայ տեսնուող սև կէտ մը։

Երբ ցորեկուան լոյսն երևցաւ, սիրելի Պրիժիթս սպիտակ փայտէ բոլորակ սեղանիկ մը քաշեց դէպ՚ի սենեկին միջևը. վրան դրաւ ինչ որ պէտք էր ընթրելու, կամ լաւ ևս է ըսել՝ նախաճաշելու համար, վասն զի արդէն թռչունները կ՚երգէին և մեղուները կը բզզային ծաղկոցին վրայ։ Պրիժիթ ինքը պատրաստած էր ամէն բան, և ամէն անգամ որ գինի կը խմէի, նախ ինքն իր շուրթերուն

կը մօտեցնէր բաժակը։ Ցորեկին կապտանման լոյսը՝ գոյնզգոյն կտաւէ վարագոյրները ճղքելով կը լուսաւորէր իր շնորհալի երեսը և մեծ աչերը որք սակաւ ինչ կտրուած էին. քնանալու փափաք կ՚ըզգար, և զիս համբուրելէն ետք բիւր սիրաւէտ խօսքերով թողուց որ գլուխս ուսերուս վրան ընկնի։

Չէի կրնար դիմանալ այսքան զմայլելի վստահութեան մը, և սիրտս վերստին կը բացուէր ուրախութիւնը ընդունելու. կարծեցի թէ բոլորովին ազատեցայ այն յոռի երազէն զոր տեսեր էի, և ներումն խնդրեցի իրմէ պահ մը յիմարութիւն ըրած ըլլալուս համար, որուն պատճառը չէի կրնար հասկնալ։

— Սիրելիդ իմ, ըսի սրտիս խորէն, շատ դժբաղդ եմ անմեղ կատակի մը պատճառաւ քեզի անիրաւ յանդիմանութիւն մ՚ընելուս համար. բայց եթէ կը սիրես զիս, երբէք սուտ մի՛ խօսիր և ոչ իսկ ամենափոքր իրերու վրայ. սուտը տոսկալի կ՚երևայ ինձ, և չեմ կրնար դիմանալ ստախօսութեան։

Պրիժիթ պառկեցաւ. առաւօտուան ժամն երեք էր, և ըսի իրեն թէ կ՚ուզէի կենալ մինչև քնանալը։ Իր գեղեցիկ աչերուն գոցուիլը տեսայ. առջի քունին մէջ ժպտելով հանդերձ մրմնջելը լսեցի, մինչդեռ իր մնարին վրայ ծռուելով մնաս բարևի համբոյրը կը տայի։ Վերջապէս դուրս ելայ սիրտս հանդարտ, միտքս դնելով երանութիւնս վայելել և ըսելով իւրովի թէ այսուհետև ոչինչ պիտի վրդովէր զայն։

Սակայն հետևեալ օրն իսկ Պրիժիթ պատահաբար ըսաւ ինձ։

— Հաստ տետրակ մ՚ունիմ ուր գաղափարներս, մտքէս անցած ամէն բաները կը գրեմ, և կ՚ուզեմ քեզ տալ տետրակը որպէս զի կարդաս ինչ որ քու վրայօք գրեցի այն առաջին օրերն ուր քեզի տեսայ։

Միասին կարդացինք ինձ վերաբերող գրուածները, և բիւր յիմարութիւններ աւելցուցինք անոնց վրայ. ապա սկսայ անտարբեր կերպով տետրակը թղթատել. մինչդեռ արագօրէն կը դարձնէի եռմները, մեծ գիրերով տողուած խօսք մ՚աչքիս զարկաւ. որոշապէս կարդացի քանի մը բառ որք բաւական անուշն էին՝ և ընթերցումս պիտի շարունակէի երբ Պրիժիթ ըսաւ

«Մի՞ կարդար ատի։»

Տեսրակը կահի մը վրայ նետեցի։

— Իրաւունք ունիս, ըսի, ըրածս չգիտեմ։

— Ասոր՝ ալ կարևորութիւն կը տաս, պատասխանեց խնդալով, անշուշտ տեսնելով թէ հիւանդութիւնս վերստին կ'երևար. նորէն սա՛ այն տետրակը. կ'ուզեմ որ կարդաս։

— Ա՛լ չխօսինք այդ տետրին վրայ։ Ինչ հետաքրքրական բան կրնամ գտնել անոր մէջ։ Գաղտնիքներդ քուկդ են, սիրելիդ իմ։

Տետրակը կահին վրան էր, և որքան ալ աշխատէի չտեսնել զայն, աչերս չհեռացան վրայէն։ Ցանկարծ կարծես լսեցի ձայն մը որ ականջիս կը փսփսար, և թուեցաւ ինձ տեսնել Տէժընէին չորրաբեկ երեսը որ իր սառնահար ժպիտովը դէմքը կը ծռմռէր առջևս։

«Տէժընէն ինչ բան ունի հոս, հարցուցի իւրովի, իբր թէ իրապէս տեսած ըլլայի զինքը։ Երևած էր ան ճիշդ այնպէս ինչպէս երևած էր զիշեր մը, այսինքն ճակատը ճրագիս վրայ ծռուած երբ իր կծու ձայնովն ինձ կը յայտնէր իր անառակի վարդապետութիւնը։

Միշտ տետրակին վրան էր աչքս, և յիշողութեանս մէջ անորոշապէս կ'զգայի չգիտեմ ինչ մոռցուած խօսքեր որք ատենօք լսուած էին և որք սակայն սիրտս ճմլեր էին։ Կասկածի ոգին՝ որ գլխուս վերևն 'ի կախ կ'սպասէր՝ երակներուս մէջ կամիլ մը թոյն թափեց նոյն պահուն. թոյնին շողին ուղեղս կը զարնէր, և չարադործ գինովութեան մը սկզբնաւորութեան մէջ կիսովին կ'երերայի։ Պրիժիթ ինչ գաղտնիք կը պահէր ինքն։ Աղէկ գիտէի որ բաւ էր ինձ ծռուիլ և տետրը բանալ գաղտնիքը հասկնալու համար, բայց ո՞ր երեսն էր. ինչպէս ճանչէի այն թերթը որու հանդիպեր էի պատատահաբար։

Սակիչ 'ի զատ հպարտութիւնս չէր ուզեր որ տետրակը առնէի. բայց ստուգիւ հպարտութիւնս էր չուզողը։

«Ո՛ Աստուած, ըսի սոսկալի տրտմութեամբ, մի՞թէ անցեալն ուրուական մ'է. մի՞թէ իր գերեզմանէն կ'ելնէ։ Ա՜հ, ապիրատ, մի՞թէ ալ պիտի չկրնամ սիրել։»

Ցանկարծ եկան մտքէս անցան այն ամէն արհամարհական գաղափարները, ծաղրասիրական անձնազոհութեան այն ամէն խօսքերը զոր անառակութեանց ժամանակ կիներուն դէմ կրկներ էի իբր դաս մը, իբր դերասանական խաղ մը, և, ի՛նչ զարմալի բան, միշտ առաջներն այս գաղափարները և խօսքերը ունենալ ձևացնելով չէի հաւատար անոնց, հիմա կը թուէր ինձ թէ ստոյգ էին, կամ թէ ստոյգ եղեր էին անոնք։

Տիկին Բիէրսօնը չորս ամիսէ 'ի վեր կը ճանչէի, բայց ոչինչ գիտէի իր անցեալ կեանքին նկատմամբ, և այս մասին ամենևին տեղեկութիւն չուզեր էի իրմէն։ Անսահման վստահութեամբ և ուանդով անձնատուր եղեր էի իր վրայ ունեցած սիրոյս։ Տեսակ մը վայելում գտեր էի իր վրայօք ամենևին հարցում մը չընելով ոչ ուրիշին և ոչ իսկ իրեն. ասկից 'ի զատ ընտրութեամբ այնքան քիչ կասկածոտ և նախանձոտ եմ որ կասկած և նախանձ զգալով ես աւելի կը զարմանայի քան թէ Պրիժիթ՝ այն զգացումները յիս գտնելով։ Առաջին սիրահարական յարաբերութեանս, ինչպէս նաև կեանքի սովորական յարաբերութեանս մէջ երբէք անվստահ չեղեր էի, ընդհակառակն համարձակ եղած էի և կրնայ ըսուիլ թէ որ և է նկատմամբ կասկած չունեցեր էի։ Հարկ եղած էր աչքովս տեսնել տարփուհիս մատնութիւնը՝ հաւատալու համար թէ ան կրնար խաբել զիս։ Տէժընէն անգամ՝ ինձ խելքովը խրատ ու յորդոր կարդալովը հանդերձ շարունակ կը ծիծաղէր այն գիւրութեան վրայ որով իբր միամիտ կը խաբուէի։ Ամբողջ կեանքիս պատմութիւնը կը հաստատէր թէ աւելի գիւրահաւան քան թէ կասկածոտ էի. ուստի այս տետրակին տեսքն երբ այսպէս յանկարծ ուշս դրաւեց, թուեցաւ ինձ թէ նոր էութիւն մ'և տեսակ մ'անծանօթ իրողութիւն ունենալ կ'զգայի. միտքս կը զայրանար այս զգացումս զէմ, չէի համարձակեր հարցնել իւրովի թէ ինչ պիտի ըլլար այս ամէն բաներուն վերջը։

Սակայն սակաւին սրտիս մէջ կեցեր էին այն վիշտերը զոր կրեր էի, այն նենգութեանց յիշատակը, որոնց ականատես եղեր էի, այն սոսկալի ապաքինութիւնը զոր ես կամքիս հակառակ ստացեր էի, բարեկամներուս խօսքերը, ապականակիր ընկերութիւնն որու մէջէն

անցեր էի, տրամալի ճշմարտութիւնները զոր տեսեր էի, նաև այն ճշմարտութիւնները զոր առանց ճանչելու հասկցեր և գուշակեր էի աղետալի ուշիմութեամբ մը, վերջապէս անառակութիւնը, սիրոյ դէմ արհամարհանքը, ամեն բանի զեծումը, ահա ասոնք սրտիս մէջ դեռ կը կենային առանց մտքէս անցնելու թէ տակաւին կը կենան, և այն միջոցին ուր կը հաւատայի թէ վերստին յոյս և կեանք կ'առնում, այս թմրած ամեն դժոխային ընդդաները կոկորդէս բռնելով կը դոչէին թէ տակաւին հոն են։

Ծռուելով տեսարակը բացի, ապա իսկոյն զոցեցի և նորէն սեղանին վրայ նետեցի։

Պրիժիթ ինձ կը նայէր. իր գեղափողփող աչերուն մէջ ոչ վերաւոր հպարտութիւն, և ոչ բարկութիւն կար, այլ միայն սիրաւէտ վրդովում մը, իբր թէ հիւանդ ըլլայի։

— Մի՛թէ կը հաւատաս թէ դաղտնիք ունիմ, հարցուց համբուրելով զիս։

— Ո՛չ, ըսի, բան մը չեմ հաւատար, կը հաւատամ միայն թէ գեղանի ես և թէ կ'ուզեմ քեզի սիրելով մեռնիլ։

Տունս երթալով երբ ճաշելու վրայ էի, հարցուցի Լարիվին.

— Բայց ինչ է այս տիկին Բիէրսօնը։

Լարիվ ետին դարձաւ բոլորովին զարմացած։

— Շատ տարիներէ 'ի վեր այս քաղաքին մէջն ես դուն, ըսի, ուստի հարկաւ իզմէ աղէկ կը ճանչես տիկին Բիէրսօնը։ Հոս ինչ կ'ըսուի, գիւղին մէջ ինչ կը խորհին անոր վրայօք. զինքը ճանչէիս առաջ ինչ կեանք կը վարէր. ինչ մարդերու հետ կը տեսնուէր։

— Ստուգիւ, պարո՛ն, տիկին Բիէրսօնին հիմակ ամեն օր ըրածն ընելը տեսեր եմ միայն, այսինքն ձորին մէջ ման գալը, հօրաքոյրին հետ քէֆ խաղալը, և աղքատներուն ողորմութիւն ընելը։ Գիւղացիները Պրիժիթ Վարդը կ'անուանեն զինքը. ամենևին մէկո՛ւր անոր դէմ խօսիլը չլսեր եմ. գիտեմ միայն թէ դաշտերը կ'երթայ բոլորովին առանձին, ցորեկուան և գիշերուան ամեն ժամին. բայց ո՞րքան զովելի նպատակով է երթալը։ Երկրին նախախնամութիւնն է։ Իսկ իր հետը տեսնուող անձերն են գրեթէ լոկ ժողովրդապետան և հանդստեան ժամանակ Պ. տը Տալան։

— Ո՞վ է այդ Պ. տը Տալան։

— Սա լեռին ետևը գղեակ մը կայ, որու տէրն է ան. միայն որսորդութեան համար կը գայ հոս։

— Երիտասարդ է։

— Այո՛, պարո՛ն։

— Տիկին Բիէրսօնին հետ ազգականութիւն ունի՞.

— Չէ. իր էրիկին բարեկամն էր։

— Մի՞թէ շատ ատենէ վեր մեռած է էրիկը։

— Ամենասրբոյին հինգ տարի անցած պիտի ըլլայ. լաւ մարդ մ'էր ան։

— Եւ այդ Պ. տը Տալանը զինքը սիրե՞ր է, կ'ըսեն։

— Այրի կինը, պարո՛ն։ Չգիտեմ, շիտակը խօսելով . . . (շփոթուն կերպով մը կանգ առաւ։)

— Պիտի խօսի՞ս։

— Ոմանք ըսին, ոմանք ալ չըսին . . . : Բան մը չգիտեմ, ամենևին բան մը չեմ տեսեր։

— Սակայն քիչ մ'առաջ չըսի՞ր ինձ թէ այս քաղքին մէջ իր վրայ չեն խօսիր։

— Սակայն ուրիշ բան չըսին, և կը կարծէի թէ դուք գիտէք այս բանը։

— Վերջապէս Տը Տալանին զան սիրելը կ'ըսե՞ն թէ չեն ըսեր։

— Այո՛, պարո՛ն, գէթ ես այնպէս կը կարծեմ։

Սեղանէն ելայ և ճեմարանն իջայ. հոն էր Մերգանսօն։ Կը յուսայի թէ պիտի զգուշանար իզմէն. սակայն ընդհակառակն քովս եկաւ։

— Պարո՛ն, անցեալ օր ինձ բարկութեան այնպիսի նշաններ տուիր զոր իմ պաշտօնս ունեցող մարդ մը չկրնար յիշողութեանը մէջ պահել։ Ներումն կը խնդրեմ անժամանակ յանձնարարութիւն մը կատարելու յանձնառու, (իր սովորութիւնն էր երկայն բառեր գործածելը) և ընթացքիդ այնքան անպատեհութեամբ խոչընդոտեցած ըլլալուս համար։

Ես ալ իրմէն ներումն խնդրեցի, կարծելով թէ այս ներումին ճրայ պիտի թողու զիս. սակայն սկսաւ քովէս քայլել։

«Տալա՛ն, Տալա՛ն, կը կրկնէի խրովի, ո՞վ պիտի խօսի ինձ Տալանին վրայ։»

Վասն զի Լարիվիին ինձ ըսածն ոչ այլ ինչ էր բայց եթէ ինչ որ սպասաւոր մը կրնայ ըսել։ Ուսկէ՞ գիտէր, ո՞ր գեղջուհիէն կամ ո՞ր գեղջուկէն իմացած էր իրողութիւնը։ Պէտք էր ինձ վկայ մ՚որ Տալանը տիկին Բիէրսօնին տունը տեսած ըլլար և կարենար այս մասին աղէկ տեղեկութիւն տալ։ Այս Տալանը մարէս չէր ելներ և չկրնալով ուրիշ բանի վրայ խօսիլ՝ իսկոյն Տալանին վրայ խօսեցայ Մերգանսօնին հետ։

Երբէք յայտնապէս չհասկցայ թէ Մերգանսօն չարասիրտ մարդ մ՚էր, ապո՞ւշ մ՚էր կամ խորամանդ մը. յայտնի էր սակայն թէ կը պարտաւորէր ատել զիս, և թէ հեռս կրցածին չափ չարասրտութեամբ վարուեցաւ։

Տիկին Բիէրսօն որ մեծ բարեկամութիւն կը յուսնէր ժողովրդապետին (և իրաւացի էր այս բարեկամութիւնը), վերջապէս իր կամքին հակառակ անոր եղբօրորդւոյն ալ սկսած էր բարեկամ ըլլալ։ Մերգանսօն պարծանք մը կը սեպէր իրեն այս բարեկամութիւնը, և անով կը նախանձէր։ Սէրը միայն նախանձ կը տայ. ընորհ մը, բարեսիրական խօսք մը, գեղանի բերնի ժպիտ մ՚ինչ ինչ անձանց կրնայ մինչև իսկ կատաղի նախանձ մը ներշնչել։

Լարիվիին պէս Մերգանսօնն ալ նախ զարմացած երևցաւ այն հարցումներէն զոր կ՚ընէի իրեն։ Ես իսկ ևս աւելի զարմացած էի այս մասին։ Բայց ո՞վ ինքզինքը կը ճանչէ այս աշխարհիս մէջ։

Քահանային առաջին պատասխաններէն տեսայ որ ան կը հասկընար ինչ որ կ՚ուզէի գիտնալ, գիտեցի որ որոշած էր չըսել ինձ գիտցածը։

— Պարո՛ն, դուն որ այսքան երկար ատենէ՝ ի վեր կը ճանչես տիկին Բիէրսօնը, դուն որ բաւական մտերմական կերպով կ՚ընդունուիս իր տունը (գէթ այս է կարծիքս) ի՞նչպէս կ՚ըլլայ որ Պ. ը Տալանին չհանդիպեր ես իր տունը։ Բայց կ՚երևայ թէ այսօր իր վրայօք տեղեկութիւն ուզելու պատճառ մ՚ունիս զոր ինձ չվերաբերիր գիտնալ։ Իմ կողմէ սա միայն կրնամ ըսել քեզ թէ Պ. ը Տալան պարկեշտ ազնուական մը, խիստ բարեսէր և գթոտ անձ

մ՚էր, քեզի պէս, պարո՛ն, շատ մտերիմ էր տիկին Բիէրսօնին հետ, շուներու ահագին հոյլ մ՚ունի, և իր տունը զայրոյները մեծ պատիւով մեծարանքով կ՚ընդունի։ Քեզի պէս, պարո՛ն, տիկին Բիէրսօնին տունը խիստ լաւ կերպով նուագ կ՚ածէր։ Իսկ իր ողբրմասիրական պարտիքը ճշդապէս կը կատարէր. երբ այս կողմերը բնակէր, քեզի պէս, պարո՛ն, տիկին Բիէրսօնին հետ կ՚երթար պտոյտ ընելու։ Իր ընտանիքը Բարիզի մէջ պատուական անուն մ՚ունի, գրեթէ ամեն անդամ որ այս տիկնոջ տունը կ՚երթայի, հոն կը գտնէի Պ. ը Տալանը, իր բարքը քաջալաւ կը կարծուի։ Բայց, պարո՛ն, այս ամեն բաները քեզ ըսելով միտս ոչ այլ ինչ է բայց եթէ խօսիլ պարկեշտ ընտանութեան մը վրայ, այն ընտանութեան որ կը վայելէ այս արժէքն ունեցող անձերու։ Կարծեմ թէ Պ. ը Տալան միայն որսորդութեան համար կը գայ. երիկին բարեկամն էր. կ՚ըսուի թէ շատ հարուստ և վեհանձն է. սակայն գրեթէ չեմ ճանչեր զինքը, գիտցածս լսեր եմ . . . . »

Դժնդակ դահիճն որքան խառնաշփոթ խօսքերով տաղնապեց զիս. Իրեն կը նայէի՝ մտիկ ընելուս ամչնալով, ոչ չհամարձակելով ամենևին հարցում մ՚ընելու, ոչ ալ իր շաղակրատութիւնը կարելու, ուզածին չափ դաղտնապէս և երկար ժամանակ զրպարտեց. իր ողբրուն դաշոյնը սիրտս մխեց ամենայն ազատութեամբ. այս գործը կատարելէն ետք հեռացաւ գնաց. չկրցայ կեցնել զինքը. սակայն Մերգանսօն այս ամեն խօսքերովը վերջապէս ոչինչ ըսած էր ինձ։

Մինակ մնացի ճեմարանը. դիշերուան մութը կ՚սկսէր ծաւալիլ։ Զգիտեմ թէ աւելի կատղութիւն կ՚զգայի թէ աւելի տրտմութիւն։ Կարի քաղցր և բնական երևցած էր ինձ այն վստահութիւնն որով կուրօրէն անձնատուր եղեր էի սիրելի Պրիժիթին վրայ ունեցած սիրոյս, ուստի չկրցայ համարձակիլ կարծելու թէ այսքան երանութիւն խաբած էր զիս։ Լոկ այն բնական և դիւրահաւան զգացումն որով տիկին Բիէրսօնին մօտեր և յարեր էի առանց հակառակիլ կամ երբէք կասկածիլ ուզելու, տիկին Բիէրսօնին սոյն զգացման արժանի ըլլալը հաստատեր էր ինծի համար. ուրեմն կարելի էր որ այս կարի երջանկաւէտ չորս ամիսներն արդէն միայն երազ մ՚ըլլային։

«Բայց վերջապէս, ըսի յանկարծ իւրովի, այս կինը խիստ շուտ անձնատուր եղաւ։ Արդեօք խաբէութիւն չկա՞ր իզմէ խոյս տալու դիտաւորութեան մէջ զոր 'ի սկզբան յայտնած էր ինձ և զոր խօսք մ'անելեւոյթ ըրած էր։ Մի՞ գուցէ հանդիպած ըլլամ այնպիսի կնիկի մ'որոնց այնքան նմանները կը տեսնուին։ Այո՛, այն կիներուն ամենքն ալ այսպէս կը վարուին, նահանջել կը ձեւացնեն որպէս զի իրենց հալածուիլը տեսնեն։ Եղներն իսկ այսպէս կը վարուին. էգին բնազդումն է այս։ Ո՞չ ապաքէն ինքն ինքնին յայտնեց ինձ իր սէրը այն միջոցին ուր կը կարծէի թէ բնաւ իս չպիտի ըլլար Պրիժիթ։ Առաջին օրէն իսկ որ տեսայ զինքը, չհաւանեցա՛ռ առանց զիս ճանչելու՝ թեւս մտնել թեթեւութեամբ մ'որ պարտ կը դնէր իմ վրայ չվստահիլ իրեն։ Եթէ այս Տալանն իր սիրողն եղաւ, տակաւին ըլլալը հաւանական է. ասի աշխարհիս այն սիրահարութեանց կարգէն է որք ոչ կ'սկսին և ոչ կը վերջանան. երբ կը տեսնուին, վերստին կը սիրուին, և երբ կը զատուին, փոխադարձապէս կը մոռցուին։ Եթէ հանդստեան ժամանակ այս մարդը գայ, Պրիժիթ անշուշտ նորէն պիտի տեսնուի հետը, և հաւանական է թէ առանց կտրելու հետս ունեցած յարաբերութիւնը։ Ի՞նչ է, ո՞վ է այս հօրաքոյրը, ի՞նչ է այս գաղտնի կեանքն որու յայտագիրն է ողորմութիւնը, ի՞նչ է այս որոշուած աղատութիւնն որու հոգը չէ որ և իցէ խօսք։ Մի՞ գուցէ երկու բաղդախնդիր ըլլան այս երկու կիներն որք իրենց պզտի տունովը, լաւութեամբն և խոհեմութեամբն այսքան շուտով մարդիկը կը խաբեն և դարձեալ աւելի շուտ երեւան կը հանեն իրենց խաբէութիւնը։ Ստուդիս, ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ, աչքս գոցելով բռնուեր եմ տարփական յարաբերութեան մը զոր սիրավէպ մը սեպեցի։ Բայց հիմակ ի՞նչ ընեմ։ Հոս ոչ այլ զոք կը տեսնեմ բայց եթէ սա քահանան որ չուզեր յայտնապէս խօսիլ ինձ, կամ իր հօրեղբայրն որ գուցէ ասնոր չափ անդամ չպիտի խօսի։ Ո՛ Աստուած իմ, ո՞վ պիտի աղատէ զիս, ինչպէս իմանամ ճշմարտութիւնը։»

Այսպէս կը խօսէր նախանձը. այսպէս՝ մոռնալով ամէն թափած արտասուքս և կրած տառապանքս՝ երկու օրէն ետք հասեր էի այն վիճակին ուր վրդով կը պատճառէր ինձ Պրիժիթին անձնատուր ե-

ղած ըլլալը։ Այսպէս՝ ամէն կասկածողներուն պէս՝ արդէն մէկի կը ձգէի զգայումները և խորհուրդները՝ իրողութեանց հետ վիճելու, մեռած տարին յարելու և սիրածս մանրամասնապէս քննելու համար։

Խորհրդածութեանս մէջ ընկղմելով հանդերձ յամրաքայլ կը հասնէի Պրիժիթին տունը։ Վանդակաղուռը բաց դտայ, և գաւիթէն անցնելու ժամանակ տեսայ որ լոյս կար խոհանոցին մէջ։ Միտքս եկաւ սպասուհիին հարցափորձ ընել։ Ուստի դէպ 'ի խոհանոցին կողմը դարձայ, դրպանիս մէջ քանի մը դրամ բռնելով դէպ 'ի սեմը յառաջեցի։

Պժգումի տպաւորութիւն մը յանկարծ կեցուց զիս։ Այս սպասուհին նիհար և խորշոմուտ պառաւ մ'էր. կռնակը միշտ ծռուած, ինչպէս են միշտ դաշտի մէջ աշխատող անձինք։ Տեսայ որ խոհակերոցին անօթները կը շարժէր կեղտոտ լուացարանի մը մէջ։ Պժգալի ճրագ մ'իր ձեռքը կ'երերար. իր բոլորտիքը կային սաներ, պնակներ, ճաշին մնացորդներն որու այցելութիւն կ'ընէր ինծի պէս ամշնալով մտնող թափառական շուն մը. խոնաւ պատերէն տաք և նողկալի հոտ մը կ'ելնէր։ Պառաւն երբ նշմարեց զիս ժպտելով ինձ նայեցաւ մտերմական կերպով մը, վասն զի առտու իր տիրուհիին սենեկէն դաղտնապէս դուրս ելնելս տեսած էր։ Նողկումով սարսռեցայ ինքն իրմէս, նաև այն դիտաւորութենէս զոր եկեր էի 'ի գործ դնելու այնպիսի տեղ մ'որ այնքան բարեյարմար էր միտքս դրուած անարժան գործին։

Փախայ այս պառաւին քովէն իբր թէ նախանձիս անձնաւորութիւնն ըլլար ան, և իբր թէ իր խոհանոցի անօթներուն դարշելի հոտն իմ սրտէս ելնէր։

Պրիժիթ պատուհանն էր, ուր իր ամենասիրական ծաղիկները կը ջրէր. մեր դրացուհիներուն մէկին տղեկը՝ թիկնաթոռին մէջը նստելով և բարձերուն մէջ թաղուելով անոր մէկ թեւովը կ'որօրուէր, բերանը լի էր շաքարեղէնով, զուարթաղին և անիմանալի լեզուով մը Պրիժիթին կը խօսէր տակաւին խօսիլ չգիտցող մանկանց յատուկ մեծ ճառ մը։ Քովը նստայ, և մանկան մտեղ այաերէն սպաղիկ մ'աւի՝ կարծես սրտիս փոքր ինչ անմեղութիւն տա-

լու համար։ Պրիժիթ վեհերոտ կերպով մ'ընդունեցաւ զիս։ Նայուածքիս մէջ իր պատկերին արդէն պղտորուած ըլլալը կը տեսնէր։ Ես ալ կ'զգուշանայի իր նայուածքէն. քանի կը հիանայի իր գեղեցկութեան և անմեղ կերպարանքին վրայ, այնքան կ'ըսէի իւրովի թէ այսպիսի կին մ'եթէ հրեշտակ մը չէ՝ նենգութեան հրեշ մ'է։ Կը ջանայի Մերդանսօնին մէն մի խօսքը յիշելու, և այս մարդուն բանսարկութիւնները կարծես կերպիւ մը կը բաղդատէի սիրուհիս դիմական գիծերուն և իր երեսին սիրուն շրջանակներուն հետ։

«Շատ գեղանի է ան, կ'ըսէի իւրովի, շատ վտանգաւոր է եթէ խաբել դիտէ. սակայն պիտի տանջեմ զինքն և դիմադրեմ իրեն, և ով ըլլալս պիտի հասկնայ։»

— Սիրելիդ իմ, ըսի Պրիժիթին՝ երկարատև լռութիւն մը պահելէն ետք, պահ մ'առաջ ինձ խորհուրդ հարցնող բարեկամի մը խրատ մը տուի։ Բաւական պարզամիտ երիտասարդ մ'է ան. կը դրէ ինձ թէ իրեն անձնատուր եղող կնկան մը մի և նոյն միջոցին ուրիշ սիրող մ'ունենալը դիտեր է, և կը հարցնէ թէ ի՞նչ կը պարտաւորի ընել։

— Ի՞նչ պատասխան տուիր։

— Երկու հարցում. Աղո՞ր է կինը, և կը սիրե՞ս զան։ Եթէ կը սիրես, մոռցի՛ր զինքը. իսկ եթէ աղոր է և չես սիրեր, պահէ զինքը հաճոյիդ համար. միշտ ժամանակ պիտի ունենաս ձգելու այդ կինը եթէ միայն իր գեղեցկութիւնն է քեզի համար կարևոր կէտը, և ինչ արժէք որ ունի ուրիշ կին մը, նոյնը ունի ատ ալ։»

Պրիժիթ այսպէս խօսիլս լսելով թող տուաւ տղեկը ղը կը բռնէր, ապա դնաց սենեկին ներսը նստաւ։ Ճրագ չունէինք. լուսինը որ կը լուսաւորեր քիչ մ'առաջ Պրիժիթին կեցած տեղը՝ սաստիկ ստուերը մը կ'արձակէր այն բազմոցին վրայ ուր նստած էր ան։ Ըսած խօսքերս այնքան խիստ և անպատրաստ նշանակութիւն մը ունէին որ ինձ իսկ սաստիկ վիշտ կը տային և սիրտս դառնութեամբ կը համակուէր։ Տղեկը վրդովելով Պրիժիթը կը կանչէր, և մեղ նայելով կը տրտմէր։ Իր զուարթագին ճիչերը, փոքրագոյն շաղակրատութիւնը սակաւ առ սակաւ դադրեցան. թիկնաթոռին վրայ

քնացած էր ան։ Այսպէս երեքնիս ալ լուռ կեցանք, և լուսնին վրայէն ամպ մ'անցաւ։

Սպասուհի մը ներս մտնելով տղեկը բռնուեց. Ճրագ բերուեցաւ։ Ոտք ելայ, նոյն միջոցին նաև Պրիժիթ ելաւ. բայց իւր երկու ձեռները սրտին վրայ դրաւ, և անկողնին ստորոտին քովը գետինն ընկաւ։

Քովը վազեցի ահարեկ. չնուաղած էր Պրիժիթ, և աղաչեց որ մարդ չկանչեմ։ Ըսաւ թէ ենթակայ էր սրտի սաստիկ բախումներու որք պատանութեան հասակէն 'ի վեր կը տանջէին և այսպէս յանկարծ կը դրաւէին զինքը, թէ սակայն այս յարձակումներն ամենևին վտանգ չունէին, ոչ ալ որ և իցէ դարման բոյժ գտնելու։ Իր քովն էի ծունկի վրայ. Պրիժիթ թևերը բացաւ կամաց մը. գլուխը բռնեցի և ուսիս վրան դրի։

— Ա՜խ, բարեկա՛մ, ըսաւ Պրիժիթ, կը յաւիմ քու վրայ։»

— Մտիկ ըրէ, ըսի ականջին, ապիրատ խենդ մ'եմ, բայց չեմ կրնար ոչինչ պահել սրտիս մէջ։ Ո՞վ և ի՞նչ է Տալան անունով մէկն որ լեռան վրայ կը բնակի, և որ երբեմնակի կը գայ հետդ կը տեսնուի։

Այս անունը տալս լսելով զարմացած երևցաւ։

— Տալա՞ն, ըսաւ, Էրիկիս բարեկամներուն մին է ան։

Պրիժիթ ինձ կը նայէր՝ կարծես շարայարելու համար.

— Բայց ի՞նչ յարմարութեամբ այդ անունը կը տաս։

Թուեցաւ ինձ թէ իր երեսը նսեմ գոյն մ'առաւ։ Շուրթս խածի։

«Եթէ կ'ուզէ զիս խաբել, ըսի մտապէս, աղէկ չըրի խօսելովս։»

Պրիժիթ ոտք ելաւ դժուարութեամբ. իր հովահարն առաւ և սենեկին մէջ մեծաքայլ երթևեկեց։ Սաստկութեամբ շունչ կ'առնուր. վիրաւորեր էի զինքը։

Ժամանակ մը խորհուն դիրքով մնաց, և երկու կամ երեք անգամ իրարու նայեցանք գրեթէ յուրտ կերպով և թշնամաբար։ Պրիժիթ իր դրասեղանին քովը գնաց, բացաւ զայն, նամակներու ծրար մը հանեց որ մետաքսով կապուած էր, և առջևս նետեց առանց խօսք մ'ըսելու։

Բայց ոչ իրեն կը նայէի, ոչ ալ նամակներուն. պահ մ'առաջ

13
1002
5318

քար մը նետեր էի անդունդի մը մէջը, և անոր արձագանքին որոտալը կը լսէի։ Պրիժիթին վիրաւոր հպարտութիւնն երեսին վրայ երևած էր. առաջին անգամ էր երևալը։ Նայուածքին մէջ մշ ոչ վրդովում, ոչ դթութիւն կար, և ինչպէս նոյն միջոցին անցեալէն բոլորովին տարբեր անձ մ'ըլլալս զգացեր էի, այնպէս ալ Պրիժիթ երևած էր ինձ իբր կին մը զոր դեռ չէի ճանչեր։

— Կարդա՛ այս նամակները, ըսաւ վերջապէս։

Յառաջ անցայ և ձեռքս երկնցուցի։

— Կարդա՛, կարդա՛, կրկնեց Պրիժիթ սառնաբեկ ձայնով մը։

Նամակները բաներ էին։ Սոյն միջոցին իր անմեղութեանը նկատմամբ այնքան համոզուիլ զգացի, և ինքզինքս այնքան անիրաւ կը գտնէի որ բոլորովին զղջացեր էի։

— Կը յիշեցնես ինձ, ըսաւ Պրիժիթ, թէ կը պարտաւորիմ յայտնել քեզ կեանքիս պատմութիւնը. նստի՛ր և պիտի գիտնաս զայն։ Ապա այս գրոցները պիտի բանաս, և պիտի կարդաս այն ամեն բաները որք հոս գրուած են իմ կամ օտարականներու ձեռքով։

Պրիժիթ նստաւ և թիկնաթոռ մը ցուցուց ինձ։ Տեսայ այն ջանքը զոր կ'ընէր խօսելու համար։ Մահուան պէս դունատ էր ինք։ այլայլուն ձայնը դժուարութեամբ կ'ելնէր, և իր կոկորդը կը կարկամէր։

— Պրիժի՛թ, Պրիժի՛թ, գոչեցի, յանուն Աստուծոյ, մի՛ խօսիր։ Վկայ է Աստուած թէ 'ի ծնէ չեմ այնպէս ինչպէս կը կարծես թէ եմ. կենացս մէջ երբէք ոչ կասկածոտ և ոչ անվստահ եղած եմ։ Քիս խանդարեցին, սիրտս աւրեցին։ Ողբալի փորձառութիւն մ'անդունդ մը սարաւ դիս, և տարիէ մ'ի վեր աշխարհիս միայն դէշութիւնները տեսած եմ։ Վկայ է Աստուած թէ մինչև այսօր ես ինքս ալ չէի կարծեր թէ կարող եմ այս անարժան պաշտօնը վարելու, ամէն պաշտօններու յետինը, այսինքն նախանձոտի մը պաշտօնը։ Վկայ է Աստուած թէ կը սիրեմ քեզի, և թէ աշխարհիս մէջ դուն միայն կրնաս անցեալս բուժել դիս։ մինչև հիմա հանդիպած եմ միայն այնպիսի կիներու որք դիս խաբեցին կամ անարժան էին սիրուելու։ Անառակի մը կեանքը վարեցի։ սրտիս մէջ կան յիշատակներ որք բնաւ չպիտի ջնջուին։ Մի՞թէ իմս է յանցանքն երբ զրպարտութիւն մը, խիստ անայտ ամբաստանութիւն մը, բոլորովին անարդարանալի ամբաստանութիւն մ'այսօր այսօր այս սրտին մէջ կը հանդիպի այնպիսի թելերու որք հիւսուած են տակաւին և պատրաստ ընդունելու վշտին նմանող ամեն բաները։ Այս իրիկուն ինձ խօսեցան մարդու մը վրայ զոր չեմ ճանչեր, և որու էութիւնն անծանօթ էր ինձ. լսին ինձ քու և անոր վրայօք ըսուած խօսքեր որք ամենևին բան մը չեն հաստատեր. չեմ ուզեր բնաւ քեզի հարցուփորձ ընել այս մասին. այն ըսուած խօսքերէն վշտացայ. խոստովանեցայ լսածս, և աններելի յանցանք մ'է այս ընթացքս։ Սակայն նախապատիւ է ինձ այդ ամեն նամակները կրակը նետել քան թէ հաւանիլ առաջարկութեանդ։ Ա՛խ, սիրելի՛դ իմ, մի՛ դձեր զիս, ինքզինքդ արդարացնելու աստիճանին մի՛ հասնիր. մի՛ պատժեր զիս վշտանալուս համար։ Ինչպէս կրնամ սրտով կասկածիլ թէ կը խաբես զիս։ Ձէ՛, դեղանի ես, անկեղծ ես դուն. Պրիժի՛թ, քու նայուածներուդ միայն մեն ամեն ապացոյցէ աւելի կը համոզէ զիս քեզի սիրելու։ Եթէ գիտնայի՛ր թէ ի՛նչ նոդկալի իրեր, ի՛նչ հրեշային նենգութիւններ տեսած է այն տղան որ առջևդ է. եթէ գիտնայի՛ր թէ մարդիկ ի՛նչպէս վարուեցան իր հետ, թէ ի՛նչպէս ծաղրեցին անոր ամեն բարի յատկութիւնները, թէ ի՛նչպէս հոգ տարին սորվեցնելու անոր այն ամեն բաները որոնցմէ կրնան կասկած, նախանձոտութիւն, յուսահատութիւն հետևիլ։ Ափսո՛ս, ափսո՛ս, սիրելի՛դ իմ սիրուհիս, եթէ գիտնայի՛ր թէ ով է սիրածդ։ Մի՛, մի՛ մեղադրեր զիս. ինձ կարեկից ըլլալու արիութիւնը ունեցի՛ր. հարկաւորութիւն ունիմ մոռնալու թէ քեզմէ զատ էակներ կան։ ով գիտէ թէ ի՛նչ փորձեր կրելու, ի՛նչ սոսկալի վշտերով լի վայրկեաններ անցունելու պիտի պարտաւորիմ տակաւին։ Մաքէս չէր անցներ թէ կրնար այսպէս ըլլալ վիճակս, չէի կարծեր թէ պիտի պարտաւորիմ կռուիլ։ Իմս ըլլալդ 'ի վեր կը նշմարեմ թէ ի՛նչեր ըրած եմ. քեզի համբուրելով զգացի թէ որքան աղտոտեր են շուրթերս։ Յանո՛ւն Աստուծոյ, օգնէ՛ ինձ որ ապրիմ։ Աստուած ասկէ լաւագոյն ստեղծած է զիս։»

Պրիժիթ թևերն ինձ երկնցուց, ամենասիրագին կերպերով զգուեց զիս։ Ողջէց որ պատմեմ իրեն այն ամեն բաները որք տեղի տուեցի։

էին այս տեսարանին։ Ըսի իրեն միայն ինչ որ Լարիվէն ըսեր էի, և չհամարձակեցայ խոստովանելու թէ այս մասին Մերդանսօնին հարցուփորձ ըրեր էի։ Պրիժիթ բացարձակապէս ուզեց որ ըսեմ իր տալու բացատրութիւնները։ Պ. տը Տալան սիրած էր զինքը. սակայն թեթեւաբարոյ, խիստ զեղխ և անհաւատարիմ մարդ մ'էր ան. Պրիժիթ հասկցուցեր էր անոր թէ չուզելով նորէն կարդուիլ կրնար լոկ աղաչել անոր որ իր լեզուն փոխէ, և Պ. տը Տալան յօժարակամ ընդունած էր այս աղաչանքը. սակայն այն օրէն 'ի վեր ևս քան զևս սակաւադէպ եղեր էին իր այցելութիւնները, և հիմակ ալ չէր գար։ Տիկին Բիէրսօն ծրարէն նամակ մը հանեց և ինձ ցուցուց. թուականը նոր էր. չկրցայ չկարմրիլ Պրիժիթին ինձ ըսած խօսքերուն ապացոյցը սոյն նամակին մէջ տեսնելով. հաստատեց ինձ թէ կը ներէր յանցանքս, և՝ իբր միակ պատիժ՝ պահանջեց իրմէ խօսք տալ թէ այսուհետև անմիջապէս պիտի իմացնեմ իրեն ինչ որ կրնար իր վրայօք կասկած տալ ինձ։ Մեր դաշնագիրը համբոյրով մը կնքուեցաւ, և երբ առաւ մեկնեցայ, երկուքնիս ալ մոլեր էինք թէ Պ. տը Տալան կենդանի է։

ԳԼՈՒԽ Ը

Անառակները սովորաբար տեսակ մը մնայուն անշարժութիւն կ'ունենան որ դառն ուրախութեամբ մը կը գունաւորի։ Այս անշարժութիւնը կը հետևի կամահաճութեամբ վարուած կեանքէ մ'ուր ամեն բան կը կարգադրուի, չէ թէ մարմնոյն պիտոյիցն այլ մտքին քմահաճութեանցը համեմատ, և ուր մարդս կը պարտաւորի միշտ պատրաստ ըլլալ միւսին (մարմնոյն) հնազանդելու։ Երիտասարդութիւնն և կամքը կրնան ծայրայեղութեանց դիմադրել. սակայն բնութիւնն իր վրէժը կ'առնու լռին, և այն օրն որ կ'որոշէ նորոգել իր ոյժը, կամքը կը մեռնի ոյժին սպասելու և նորէն զայն չարաչար գործածելու համար։

Մարդս անատեն իր չորս դին վերստին գտնելով այն ամեն առարկաները, որոնցմէ օր մ'առաջ կը հրապուրուէր, և սկ զանոնք գրաւելու ոյժը չունենալով կը հարկադրուի միայն պժգումով ժպտիլ զինքը շրջապատող իրերու։ Ասկից 'ի զատ ամենին անխուով չմօտիր այն առարկաներուն իսկ որք երեկ իր ցանկութիւնը կը գրգռէին. անառակը բռնութեամբ կը գրաւէ իր ամեն սիրածները. տենդ մ'է իր կեանքը. իր գործարանները՝ վայելումը ընտրելու համար՝ կ'ստիպուին ժամանակին գործ կատարել եռուն ըմպելիքով, բոզերով և տքուն դիշերներով. ուստի իր ձանձրոյթի և ծուլութեան օրերն ուրիշ մարդէ մ'առելի կ'զգայ թէ շատ մեծ հեռաւորութիւն մը կայ իր անկարողութեան և հրապոյրներուն մէջ, և այս հրապոյրներուն դիմադրաւելու համար պէտք է որ իր հպարտութիւնը օգնութեան հասնի և հաստատէ իրեն թէ առոչինչ կը համարէ զանոնք։ Ահա այսպէս իր կեանքին ամեն խնճոյիցը վրայ կը թքնէ, և մէկ կողմէ բուռն ծարաւով և միւս կողմէն ալ սաստիկ յղփութեամբ մը համակուած՝ կ'առաջնորդուի հանդարտ մտաֆառութենէն և կը հասնի դէպ 'ի գերեզմանը։

Թէև ալ զեղխ մը չէի, սակայն օր մը յանկարծ մարմնոյս յիշեց թէ զեղխ եղած էր ատենօք։ Մինչև անատեն անցեալ զեղխութեանս հետևանքը չնշմարելս խիստ բնական բան մ'էր։ Հօրս մահուանն առջև կրեր էի վիշտ մ'որու առջև 'ի սկզբան ամեն բան լուռ կեցած էր։ Սաստիկ սէր մ'եկած էր, քանի որ առանձնապէս կ'ապրէի, ձանձրոյթը կռիւ ընելու չէր հարկադրուեր։ Մինակ ապրողին հոգն է օրին տխուր կամ զուարթ ըլլալը։

Ինչպէս զինկն որ կէս-մեռաղ է և կը հանուի այն կապուտանման երակէն ուր զրպարտութեան մէջ կը քնանայ, ինչպէս զինկը, կ'ըսեմ, ինքն իրմէն արևի ճառագայթ մը կը ժայթքեցնէ՝ անտաշ պղինձին մօտելով, նոյնպէս Պրիժիթին համբոյրները սակաւ առ սակաւ սրտիս մէջ արթնցուցին ինչ որ հոն պահուած կը կենար։ Պրիժիթին հետ դէմ առ դէմ գտնուելուս պէս նշմարեցի թէ ի՛նչ էի։

Կային ինչ ինչ օրեր ուր առաւօտէն սկսելով կ'զգայի մտքի այլանդակ տրամադրութիւն մ'որու անկարելի է անուն մը տալ։ Առանց պատճառի կ'արթննայի իբր այնպիսի մարդ մ'որ օր մ'առաջ ծայրայեղապէս ուտել խմելովը մաշուած է։ Դուրսի ամեն զգա-

յութիւններն անտանելի յոգնութիւն մը կը պատճառէին ինձ. ամեն ծանօթ և սովորական առարկաները տաղտուկ և ձանձրոյթ կը տային ինձ. եթէ խօսէի, կը խօսէի ծաղրելի գարձնելու համար ինչ որ ես իմ վրայ կը խորհէի։ Անատեն՝ բաղմաբանի մը վրայ երկննալով և կարծես շարժում ընելու անկարող ըլլալով յատկապէս 'ի դերև կը հանէի շրջապատութեամբ զբօսնելու այն ամեն օրոշումները զոր առջի օրն ըրեր էինք. կ'երևակայէի յիշողութեանս մէջ բնաւել այն խիստ զգայուն խօսքերը և անկեղծապէս սիրաւէտ բաները զոր մեր բարի վայրկեաններուն մէջ ըսեր էի սիրելի տարփուհիս, և անատեն միայն գոհ կ'ըլլայի երբ հեգնալի կատակներս խանդարած և թունաւորած կ'ըլլային երջանիկ օրերու այս յիշատակները։

— Չե՞ս կրնար թողուլ ինձ այդ յիշատակները, կը հարցնէր Պրիժիթ տրտմապէս։ Եթէ կայ 'ի քեզ իրարմէ այդքան տարբեր երկու մարդ, չե՞ս կրնար բարին մոռնալը բաւական համարիլ երբ յուլին կը զարթնու։

Սակայն այս մոլորումներուն դէմ Պրիժիթ կը համբերէր, և իր համբերութիւնն ալ աւելի կը գրգռէր սոսկալի զուարթութիւնս։ Ինչ զարմանալի բան է տառապող մարդու մ'իր սիրուհին ալ տառապեցնել ուզելը։ Մարդուս ինքն իր վրայ այսքան քիչ իշխանութիւն ունենալն ո՞չ ապաքէն հիւանդութեանց յոռեգոյնն է։ Կա՛յ բան մ'որ այնքան անագորոյն ըլլայ կնիկի մը համար որքան է տեսնել որ քիչ մ'առաջ իր գիրկէն ելնող մարդն աննրելի այլանդակութեամբ կը հեգնէ երջանկաւէտ դիշերներուն ամենէն նուիրական և ամենէն խորհրդաւոր իրողութիւնը։

Սակայն Պրիժիթ խոյս չէր տար քովէս. քովս կը կենար իր օթոցին վրայ ծռուած, մինչդեռ ես գաղանական յօժարութեամբս այսպէս կը ծաղրէի սէրը, և կը հաւանէի որ խենդութիւնս մրմռայ բերնի մը վրայ որ այն սիրոյ համբոյրներէն առած խոնաւութիւնը տակաւին կը պահէր։

Այս տրամադրութիւնը ունեցած օրերս՝ սովորութեանս հակառակ Բարիզի վրայ խօսելու և զեղխութեամբ անցուցած կեանքս իրը աշխարհիս լաւագոյն բանը նկարագրելու դրդում կ'զգայի։

— Դու միայն ջերմեռանդուհի մ'ես, կ'ըսէի Պրիժիթին խնդալով, դու չգիտես թէ ի՛նչ է զեղխութեամբ ապրիլը։ Այսպէս կ'ապրին լոկ այն անձինք որք անհոգ են և որք կը սիրեն առանց սիրոյ հաւատալու։

Ասի՛ ո՞չ ապաքէն կը նշանակէր թէ ես ալ չէի հաւատար սիրոյ։

— Լա՛ւ, ուրեմն, կը պատասխանէր Պրիժիթ, սորվեցո՛ւր ինձ քեզի միշտ հաճելի ըլլալու կերպը։ Թերևս ես ալ աղօր եմ այն տարփուհիներուդ չափ որոնց յիշատակը ցաւ կը տայ քեզ. եթէ ես չունիմ անոնց այն հանճարամտութիւնը որով անոնք քեզի կը զուարճացնէին իրենց յատուկ կերպովը, կ'ուզեմ ունիլ։ Վարուէ հետս այնպէս ինչպէս պիտի վարուէիր եթէ չսիրէիր զիս, և առանց բնաւ բան մ'ըսելու այդ մասին թող որ ես քեզի սիրեմ։ Եթէ ջերմեռանդ եմ եկեղեցիին մէջ, ջերմեռանդ եմ նաև սիրոյ մէջ։ Ի՞նչ ընել պէտք է որ հաւատաս այս սիրային ջերմեռանդութեանս։»

Եւ ահա Պրիժիթ հայլիին առջևը կ'երթար, ցորեկ ատեն կը հագուէր կը շքուէր կարծես պարահանդէսի կամ տօնախմբութեան մը համար. կը ձևացնէր այնպիսի պչրասիրական կերպեր որոնց սակայն չէր կրնար համբերել, կ'աշխատէր ճիշդ ինծի պէս ձայնելու և խօսելու, կը խնդար 'և սենեկին մէջ հոն հոս կը ցատկրտէր.

— Ցարմար եմ ճաշակիդ, կ'ըսէր ապա։ Ըսէ՛ նայիմ կարծիքդ, ո՞ր տարփուհիդ կը նմանիմ։ Մարդուս սիրոյ տակաւին հաւատալ կարենալը քեզի մոռցնելու չափ զեղեցիկ եմ։ Անհոգի մը կերպարանքն ունիմ։

Ապա կը տեսնէի որ այս շինովի ուրախութեանը միջոցին կռնակը կը դարձնէր ինձ, և ակամայ սարսուռէ մ'իր մազերուն վրայ կ'երերային գլուխը դրած ծաղիկները։

Անատեն իր ոտքը կը նետուէի.

— Դադրէ՛, կ'ըսէի, քաջ կը նմանիս որու որ կ'ուզես նմանիլ, և աղէկ կը նմանիս այն բանին զոր անարդ բերանս կը համարձակի առջևդ յիշելու։ Հանէ՛ այդ ծաղիկները, հանէ՛ այդ բոպան։ Անկեղծ արտասուքով մը լուանք այս զուարթութիւնը. մի՛ յիշեցներ ինձ լոկ անառակ որդին ըլլալս. անցեալը քաջ դիտեմ։»

Սակայն այս գիղջն անգամ անգործոյն էր, վասն զի Պրիժիթին կը հաստատէր թէ բոլորովին իրական էին այն ուրուականներն որք սրտիս մէջ կը կենային։ Զգջալովս, պժգումի շարժում մ՚ընելովս ոչ այլ ինչ կ՚ընէի բայց եթէ յայտնապէս կ՚ըսէի իրեն թէ իր համակերպութիւնն և ինձ հաճելի ըլլալու խղճը լոկ պիղծ պատկեր մը կ՚ընծայէին ինձ։

Եւ ասի իրաւ էր։ Պրիժիթին տունը կը հանդէի սաստիկ ուրախութեամբ համակուելով, ցաւերս և անցեալ կեանքս իր գիրկը մոռնալու երդում ընելով. մինչև իր անկողնին ստորոտն երկու ծունկի վրայ երթալով երդում կ՚ընէի թէ կը յարգեմ զինքը. իր անկողինը կը մտնէի սրբավայր մը մտնելու պէս. թևերս իրեն կ՚երկնցնէի արտասուք թափելով. ապա Պրիժիթ այն ինչ շարժումը կ՚ընէր, այս ինչ կերպով բոպան կը հանէր, այն ինչ խօսքը կ՚ըսէր ինձ մօտելով. և յանկարծ կը յիշէի այն ինչ բոզը որ գիշեր մ՚իր բոպան հանելով և անկողնիս մօտելով նոյն շարժումը բրած, նոյն խօսքն բրած էր։

Խե՜ղճ անձնուէր հոգի, անատեն որքան կը տառապէիր առջևդ ժամգունիլս տեսնելով, ե՛րբ՝ քեզի ընդունելու պատրաստ թևերս շնորհաձև և թարմագեղ ուսիդ վրայ կ՚ընկնէին կարծես կենդանութենէ զրկուած, ե՛րբ համբոյրը շուրթիս վրայ կը դոցուէր, և ե՛րբ սիրով զեղուն նայուածքը, որ Աստուծու լոյսին անարատ Ճառագայթն է, աչերուս մէջ կը նահանջէր հովէն այլուր դարձող ալաքի մը պէս։ Ա՜խ, Պրիժիթ, ինչպիսի գոհարներ կը հոսէին բիբերդ, բոլորովին գթալի սէրդ համբերատար ձեռքով մ՚ինչպիսի՜ վսեմ ողորմութեան դանձերէ կը քաղէիր։

Երկար ժամանակ բարի և գէշ օրերն իրարու յաջորդեցին կանոնաւորապէս. փոփոխակի տարդի և ծաղրասէր, սիրուն և անձնուէր, ցամաք և հպարտ, ապաշաւող և հնազանդ կ՚երևայի։ Անընդհատ մտքիս առջևն էր Տէժրնէին կերպարանքն որ ամենէն առաջ ինձ երևած էր բռնելու ընթացքս կարծես իմացնելու համար։ Այն օրերն՝ որ կասկածոտ և անտարբեր էի՝ կերպիւ մը կը խօսակցէի Տէժրնէին հետ. շատ անգամ, Ճիշդ այն միջոցին ուր անգութ հեգնութեամբ մը Պրիժիթը վիրաւորած կ՚ըլլայի, իւրովի կ՚ըսէի.

— Եթէ իմ տեղս ըլլար Տէժրնէ, ինքն ալ այսպիսի հեգնութիւններ պիտի ընէր անշուշտ։

Երբեմն ալ՝ Պրիժիթին տունն երթալու համար գլխարկս դնելով հայելին կը նայէի և կ՚ըսէի իւրովի.

— Մի՞թէ մեծ ճնաս մը կայ։ Ինչ կ՚ուզէ ըլլայ, աղբոր տարփուհի մ՚ունիմ, անառակի մ՚անձնատուր եղաւ ան. թող սեպէ ինչ որ եմ։

Ծպիտն 'ի շուրթ Պրիժիթին տունը կը հասնէի, թիկնաթոռի մը վրայ կը նստուէի անհոգ և համաձայն կերպարանով մը. ապա Պրիժիթին մեծ, աղու և անհանդարտ աչերուն ինձ մօտիլը կը տեսնէի. ձեռներուս մէջը կ՚առնէի իր սպիտակ պզտի ձեռները, և անհուն մտախոհութեան մը մէջ կը սուզուէի։

Ի՞նչպէս կարելի է անուն մը տալ անանուն բանի մը։ Բարի՞ էի թէ չար. կասկածո՞տ էի թէ խև։ Պէտք չէ ասոր վրայ խորհիլ. պէտք է երթալ. այս այսպէս է։

Դադիհաս դրացուհի մ՚ունէինք որ տիկին Դանիէլ կ՚անուանէր. բաւական գեղանի, բաւական ալ պչրասէր էր ան. աղքատ էր և կ՚ուզէր հարուստ սեպուիլ. Ճաշէն ետք կը դար մեր հետը տեսնուելու, և միշտ մեծկակ գումարներ կը դնէր մեզի դէմ խաղալու ատեն, թէև իր կորուստները նեղութեան մէջ կը ձգէին զինքը. կ՚երդէր ան, և ձայն չունէր։

Տիկին Դանիէլ գրօսումի անլուր ծարաւով մը կը տանջուէր այս անայտ գիւղին ներսն ուր իր յոսի ճակատագրէն կը բռնադատուէր թաղուելու։ Յարաժամ Բարիզի վրայ կը խօսէր ուր տարին երկու կամ երեք օր ոտք կը կոխէր, կ՚ուզէր նորաձևութեանց հետևիլ. սիրելի Պրիժիթս կրցածին չափ այս մասին անոր կ՚օգնէր, կարեկցաբար խնդալով հանդերձ։ Իր երիկը կալուածներու պաշտօնատան մէջ պաշտօն ունէր. տօնի օրերն իր կնիկը նահանգին գլխաւոր քաղաքը կը տանէր, և պզտիկ կինն իր ամեն զարդ ու յարդերով բեռնաւորուած հոն կուսակալին պալատին մէջ յօժարակամ կը պարէր բոլոր պահանջող գինուորներուն հետ։ Ասյա ետ կը դառնար փղփղոցն աչերով և յոգնաբեկ մարմնով. անատեն մեր տունը կը գար մեզ պատմելու համար իր քաջագործութիւնները և այն

մանը վիշտերը զոր պատճառած էր։ Իր միւս ժամանակները վիպասանութիւն կարդալով կ'անցունէր, ամենևին չտեսած ըլլալով իր տան վերաբերող իրերն, թէև ախորժելի տուն մը չէր իր տունը։

Ամեն անգամ որ կը տեսնէի տիկին Դանիէլը անպատճառ կը ծաղրէի զինքը, վասն զի բոլորովին ծաղրելի կ'երևար ինձ այն կեանքը զոր կը կարծէր թէ կը վարէ. իր հանդէսի զրոյցները կ'ընդհատէի հարցունելու համար թէ ինչպէս են էրիկն և կեսրայրը, որոնց դէմ մասնաւոր առելութիւն ունէր, վասն զի մին էրիկն էր, միւսն ալ լոկ դեղջուկ մը, վերջապէս գրեթէ ամեն անգամ որ միասին գտնուէինք, միշտ վէճ կ'ունենայինք նիւթի մը վրայ։

Դէշ օրերուս մէջ խորհեցայ սիրաբանել այս կնկան հետ մի միայն Պրիժիթը վշտացնելու համար։

— Տես, կ'ըսէի, թէ տիկին Դանիէլ ինչպէս կեանքը կը հասկնայ կատարելապէս։ Քանի որ այսպիսի զուարթագին բնաւորութեան մը տէր է ան, մարդս կրնա՞յ լաւագոյն տարփուհիի մը փափաքիլ։

Ինատեն կ'սկսէի գովեստներ տալ տիկին Դանիէլին. կ'ըսէի թէ անշուշտ շատախօսութիւնը կատարելապէս անփութութիւն մ'է. թէ իր ծայրայեղ պահանջոտութիւնը հաճելի ըլլալու բոլորովին բնական փափաք մ'է. ի՞րն է յանցանքն եթէ աղքատ է. դէթ միայն հեշտութեան տուած է իր խելքը, և անկեղծաբար կը խոստովանի այսպէս ըլլալը. քարոզներ չէր տար և ուրիշներուն քարոզներուն ալ ուշ չէր դներ։

Այսքանը բաւական չհամարելով կը համարձակէի Պրիժիթին ըսելու նաև որ օրինակ ընէ իրեն տիկին Դանիէլը, և թէ բոլորովին այս տեսակ կիներն էին ինձ հաճելի։

Խեղճ տիկին Դանիէլը Պրիժիթին նայուածքին մէջ թախծութեան քանի մը նշաններ նշմարեց դաղտնի։ Այս կնիկը տարօրինակ արարած մ'էր. բարի և անկեղծ էր երբ իր սին և ոչինչ դաղափարները կը թողուր. նոյնքան ալ ապուշ էր երբ իր մտքին մէջն ըլլային անոնք։ Այս առթիւ անի բոլորովին իրեն նման, այսինքն բարի ու միանդամայն ապուշ ընթացք մ'ունեցաւ։ Օրին մէկը անտառին մէջ մինչդեռ Պրիժիթին հետ բոլորովին առանձին մտն կը դար, ասոր դիրքը նետուելով ըսաւ թէ իր հետը սիրաբանելու

ակսիլս կը նշմարէր, թէ իրեն այնպիսի խօսքեր կ'ուզէի որոնց դիտաւորութիւնն անկասկած էր. թէ սակայն գիտէր ինք ուրիշի մը սիրողն ըլլալս, և թէ՝ ինչ կ'ուզէր թող ըլլար՝ լաւագոյն կը սեպէր մեռնիլ քան թէ բարեկամի մ'երանութիւնը տապալել։ Պրիժիթ շնորհակալ եղաւ իրմէն, և տիկին Դանիէլ՝ իր խիղճն այսպէս հանգստացնելէն ետք կրցածին չափ զիս չարչարելու համար սկսաւ աչք ունք ընել ինձ։

Երբ երեկոյին մեկնեցաւ ան, Պրիժիթ խիստ կերպով մ'ըսաւ ինձ անտառին մէջ տեղի ունեցող իրողութիւնը, և աղաչեց որ այնպիսի նախատինք չընեմ իրեն։

— Ասի ըսելով մի՛ կարծեր թէ կարևորութիւն կը տամ, կը հաւատամ այդ կատակներուն. բայց եթէ քիչ մը սէր ունիս իմ վրայ, ինձ կ'երևայ թէ անօգուտ է երբորդի մ'խնայնել ամեն օր նոյն սէրը չունենալդ։

— Կարելի է, պատասխանեցի խնդալով, որ այդ բանը կարևորութիւն մ'ունենայ։ Քաջ կը տեսնես որ կ'ուզեմ այդ կնկան քթէն բռնել և ժամանակս անցունել։

— Ա՛խ, բարեկամ, բարեկամ, ըսաւ Պրիժիթ, դժբաղդութիւն մ'է ժամանակ անցունելու հարկաւորութիւնը։

Քանի մ'օրէն ետք առաջարկեցի Պրիժիթին որ մենք ալ կուսակալին պալատն երթանք տիկին Դանիէլին պարելը տեսնելու համար, ակամայ հաւանեցաւ առաջարկութեանս։ Մինչդեռ ան վերջ կը տար իր յարդ ու զարդին, ես չմնէայինքովն էի, և քանի մը յանդիմանութիւն ըրի ըսելով թէ իր առաջուան զուարթութիւնը կը կորուսէր։

— Ինչ ունիս, հարցուցի (ինչ ունենալը գիտէի իրեն պէս). ինչո՞ւ հիմա երեսդ կը կախես և տրտում կ'երևաս միշտ։ Ցիրաւի փոքր ինչ տրտմալի առանձնութեան մէջ պիտի ապրեցնես մեզի։ Աղջի աղեներն աւելի ուրախ, աւելի համարձակ և աւելի անկեղծ բնաւորութիւն մ'ունէիր, ինչպէս տեսեր եմ. ինծի համար գրեթէ պատիւ մը չէ այդ բնաւորութիւնդ փոխած ըլլալս։ Սայիսն վանական ոգի ունիս. վանքին մէջ ապրելու համար ծնած ես։

Դիրակի էր այն օրն ուր կուսակալին պալատը գացինք. երբ

հրապարակէն անցանք, Պրիժիթ կառքը կեցնել տուաւ բարև տալու համար քանի մը բարեսիրտ բարեկամուհիներու, ասոնք գիւղացի առոյգ և քաջ աղջիկներ էին, և Թիլեոյլ կ'երթային պարելու։ Պրիժիթ այս աղջիկներէն զատուելէն ետք գլուխը կառքին դռնակէն ներս չառաւ երկար ատեն. իր պզտի պարահանդէսը սիրելի էր իրեն. թաշկինակը հանելով աչքը սրբեց։

Կուսակալին պալատը հասանք. հոն գտանք տիկին Դանիէլը որ իր ուրախութեամբը համակուած էր գլխովին։ Սկսայ բաւական ստէպ պարել հետը որպէս զի նշմարուի պարելս. բիւր ողջագլի ձևերով վարուեցայ հետը, և տիկին Դանիէլն ալ կրցածին չափ կը պատասխանէր այս ձևերուս։

Պրիժիթ մեր դէմն էր. նայուածքը չէր զատուեր մեզմէ։ Դժուարին է ըսել թէ ի՞նչ կ'ըղձայի. զուարճութիւն և ցաւ էր զգացածս։ Յայտնապէս կը տեսնէի թէ կը նախանձէր ան, սակայն փոխնակ արդահատութիւն զգալու այս նախանձին վրայ՝ զինքն աւելի վրդովելու համար ըրի ինչ որ կրցայ ընել։

Կը յուսայի թէ 'ի դարձին Պրիժիթ յանդիմանութիւններ պիտի տար ինձ. ոչ միայն չտուաւ, այլ նաև հետևեալ օրն և միւս օրը տխուր և անմռունչ կեցաւ։ Երբ իր տունը կը դայի, զիս դիմաւորելով կը համբուրէր, ապա դէմ առ դէմ կը նստէինք, փոխադարձապէս մտահոգ ըլլալով և հաղիւ հաղ քանի մ'անհնչուն խօսք ըսելով իրարու։ Երրորդ օրը խօսեցաւ, դառնադառն յանդիմանութիւններ ըրաւ, ըսաւ թէ անմեկնելի էր ընթացքս, թէ այս ընթացքէս ոչ այլ ինչ կը հասկնար բայց եթէ ամ զինքը չսիրելս. թէ սակայն չէր կրնար այս կեանքին հանդուրժել, թէ որոշած էր ամեն բանի յանձնառու ըլլալ քան թէ համբերել այլանդակութիւններուս և ցուրտ ընթացքիս։ Պրիժիթին աչերը լի էին արտասուքով, և ես պատրաստ էի ներումն խնդրելու իրմէն երբ յանկարծ բերնէն այնքան դառն խօսքեր փախան որ հպարտութիւնս զայրացաւ։ Ես ալ միևնոյն դառնութեամբ պատասխանեցի, և մեր կռիւը սաստիկ կերպարանը մ'առաւ։ Ըսի թէ ամենէն սովորական գործերու նկատմամբ իմ վճիռս յանձնառու ըլլալու չափ տարփուհիս վստահութիւն ներշնչել չկարենալս ծիծաղելի բան էր.

թէ տիկին Դանիէլ պատրուակ մ'էր լոկ. թէ ինք քաջ գիտէր այս կնկան վրայ ստուգապէս չխորհիլս. թէ իր կարծեցեալ նախանձոտութիւնը խիստ իրական բռնաւորութիւն մ'էր, և թէ վերջապէս եթէ տաղտուկ կը տար իրեն այս կեանքը, իր ձեռքն էր վերջ տալ անոր։

— Լա՛ւ, պատասխանեց Պրիժիթ։ Ես ալ քովդ ըլլալէս 'ի վեր քեզի բոլորովին փոխուած կը տեսնեմ. անշուշտ կեղծաւորի դեր մը խաղցիր համոզելու համար զիս թէ սէր ունիս իմ վրայս. հիմակ այս դերը ձանձրալի կը դայ քեզ, և ինձ ալ դէշութիւն ընելու միայն կը հարկադրիս։ Այս կամ այն խօսքը լսելով կը կասկածիս թէ կը խաբեմ քեզի, և իրաւունք չունիմ համբերելու նախատինքի մը զոր կ'ընես ինձ։ Ա՛լ չես այն մարդը զոր սիրեցի։

— Գիտեմ թէ ինչ են վիշտերդ։ Մէն մի առած քայլիս այդ վիշտերուն չնորոգուիլն ինչ բանէ կախում ունի։ Եթէ այսպէս երթանք, տանէ մ'ետք ամ քեզմէ զատ որ և է մէկու մը խօսք ուղղելու արտօնութիւն պիտի չունենամ։ Թշնամանք կրած ըլլալ կը ձևացնես որպէս զի դուն կարենաս նախատել. կը պնդես թէ բռնաւոր եմ ես, որպէս զի զերի մ'ըլլամ։ Քանի որ հանդստութիւնդ կը վրդովեմ, ապրէ՛ 'ի խաղաղութեան. ամ չպիտի տեսնես զիս։

Բարկութեամբ զատուեցանք, և օր մ'անցուցի առանց Պրիժիթը տեսնելու։ Հետևեալ օրը կէս գիշերի մօտ այնպիսի տրտմութեամբ մը համակուիլ զգացի որ չկրցայ դիմանալ։ Հեղեղապէս արտասուք թափեցի. ինքնին ինծի դէմ բիւր թշնամանք ըրի որոնց Ճիշդ արժանի էի։ Ըսի իւրովի թէ խե՜ւ եմ, թէ չարասիրտ խևերու տեսակէն էի քանի որ արարածներու ազնուագունին, լաւագունին ցաւ և վիշտ կը տայի։ Պրիժիթին տունը վազեցի իր ոտքը նետուելու համար։

Պարտէզը մտնելով տեսայ որ լոյս կար իր սենեկին մէջ, և մարէս կասկածոտ խորհուրդ մ'անցաւ։

« Պրիժիթ այս միջոցիս ինձ չսպասեր, ըսի իւրովի, ինչ կ'ընէ արդեօք։ Երեկ կը լար ան երբ հեռացայ դացի. բայց հիմա թերևս պիտի տեսնեմ որ ան երգել սկսած է՝ առանց բնաւ հոգ ը-

նելու կամ միտքը բերելու թէ ես էութիւն ունիմ։ Թերևս այս միջոցիս կը հաղուի, կը շքուի Դ-ոյն պէս։ Պէտք է որ կանայ մը ներս մտնեմ և հասկնամ Ճշմարտութիւնը։»

Ռաքիս ծայրովը յառաջացայ, և կրցայ Պրիժիթը տեսնել առանց իրմէ տեսնուելու, վասն զի իր սենեկին դուռը պատահաբար կէս մը բաց մնացեր էր։

Պրիժիթ իր սեղանին առջևը նստած էր և գիր կը գրէր Ճիշդ այն տեսարակին մէջ որ իր նկատմամբ առաջին կասկածներուս տեղի տուած էր։ Զախ ձեռքը սպիտակ փայտէ պղտի տուփ մը կար որու մերթ ընդ մերթ կը նայէր տեսակ մը ջղային սարսուռով։ Զգիտեմ թէ ինչ սպալի հանդամանք մ'ունէր այն առերևոյթ հանդարտութիւնն որ կը տիրէր սենեկին մէջ։ Իր դրասեղանը բաց էր, և թուղթի բազմաթիւ ծրարներ շարուած էին մէջը. տեսնողը կը կարծէր թէ դեռ պահ մ'առաջ կարդի դրուեր էին անոնք։

Դուռը հրելով ձայն մը հանեցի։ Պրիժիթ ոտք ելաւ, դնաց դրասեղանը դոցեց, ապա քովս եկաւ ժպտելով։

— Օղթավ, ըսաւ, աղայութիւն է մեր ըրածը, բարեկամ։ Մեր կռիւը խելքի մաթի դէմ է, և եթէ դուն չզայիր այս գիշեր, ես պիտի դայի տունդ։ Ներէ՛ ինձ, ես եմ յանցաւորը։ Տիկին Դանիէլ վաղը մեր հետը Ճաշելու պիտի դայ. եթէ կ'ուզես զղջացուբ դիս այն ընթացքիս նկատմամբ զոր դու բռնաւորութիւնս կ'անուանես։ Երջանիկ եմ, բաւական է որ սիրես զիս. մոռնանք ինչ որ անցաւ դնայ, և չխանգարենք մեր երանութիւնը։

ԳԼՈՒԽ Գ

Կրնայ ըսուիլ թէ մեր վէճն ոչ այնքան տրտմալի եղած էր որքան մեր հաշտութիւնը. Պրիժիթ հետս հաշտուեցաւ այնպիսի դաղանիքով մ'որ նախ վախ տուաւ ինձ և որ ապա անընդհատ վրդովումով մը համակեց սիրտս։

Ամեն ջանադրութեանցս հակառակ ես քան զիս կը զարդանային սրտիս մէջ դժբաղդութեան այն երկու տարրերը զոր անցեալէն ժառանգեր էի. այսինքն երբեմն յանդիմանութիւններով և թշնամանքով լի սաստիկ նախանձոտութիւն մը. երբեմն ալ անագորոյն զուարթութիւն մը, շինովի թեթևութիւն մ'որ կատակներով կը նախատէր ինչ որ ամենասիրելի էր ինձ։ Այսպէս անողոքելի յիշատակներ անդադար կը հալածէին զիս. այսպէս Պրիժիթ տեսնելով թէ իր հետը կը վարուէի երբեմն իբր սիրանենդ տարփուհի, երբեմն ալ իբր պահծու բոզի մը հետ, սակաւ առ սակաւ կը դրաւուէր այնպիսի տրտմութենէ մ'որ մեր բոլոր կեանքը կ'աւերէր. բայց աւելի դէշ բան մը կար. ըսել կ'ուզեմ թէ ինծի ալ ոչ նուազ նեղութիւն կը տար այս տրտմութիւնը՝ թէև գիտէի սոյն տրտմութեան պատճառը, թէև կ'զդայի թէ ես էի պատճառն ու յանցաւորը։ Երիտասարդ էի և կը սիրէի զբօսանքը. այսպէս ամեն օր հասակաւ իրմէ մեծ կնիկի մը հետ առանձնակի խօսակցիլը, կին մ'որ կը տաւապէր և կը մաշուէր, իր ևս քան զևս խստադիծ դէմքը զոր միշտ առ ջևս ունէի, վերջապէս այս և ասոնց նման բաներ զայրոյթ կը պատճառէին երիտասարդութեանս և ատենօր ունեցած աղատութեանս նկատմամբ դառն յաւեր կը տային ինձ։

Գեղեցիկ լուսնկայի մը ժամանակ երբ անտառէն կ'անցնէինք յամբաբար, Պրիժիթ և ես սաստիկ թաղծութեամբ մը համակուիլ կ'ըզդայինք։ Ան ինձ կը նայէր դթութեամբ։

Կ'երթայինք կը նստէինք ապառաժի մը վրայ որ ամայի կրճի մը վրայ կը նայէր. հոն ժամերով կը կենայինք. Պրիժիթին կիսովին սքողուած աչերն իմիններուս մէջէն անցնելով սրտիս խորը կը սուզէին, ապա իր նայուածքը բնութեան, երկնից և անտառին կ'ուղղէր։

«Ա՛խ, սիրելի՛ զաւակս, կ'ըսէր, որքան կը յաւիմ վրադ. զիս չես սիրեր։

Այս ապառաժը հասնելու համար պէտք էր անտառներուն մէջէն երկու մղոն քայլել, նոյնքան ևս քայլել ետ դառնալու համար։ Պրիժիթ ոչ յոդնութենէն և ոչ դիշերուան մութէն կը վախնար։ Դիշերուան ժամը տասնումէկին կը մեկնէինք, և երբեմն առաւ ետ կը դայինք։ Երբ հարկ ըլլար ասանկ երկար շրջադայութիւններ ընել, Պրիժիթ կապտադոյն պլուզա և մարդու դդեստներ կը հաղ-

նէր, զուարթութեամբ ըսելով թէ իր սովորական հագուստը մայրաքաղաքներու համար եղած չէր։ Առջևէս աւաղին վրայէն կ'երթար համարձակ քայլով մ'և կնային փափկութեան ու մանկային յանդգնութեան այնպիսի սիրուն խառնուրդով մ'որ ամեն բոպէ կանգ կ'առնէի իրեն նայելու համար։ Ճամբայ ելնելէն ետք կը թուէր թէ դժուարին այլ նուիրական գործ մը կատարելու պարտաւոր էր Պրիժիթ. առջևէն կ'երթար զինուորի մը պէս թևերը օրելով և միտքն եկած ամեն երգ երգելով շարունակ. ապա յանկարծ ետ կը դառնար, քովս կը գար և կը համբուրէր զիս. երթալն այսպէս էր. իսկ 'ի դարձին թևիս վրայ կը կոթնէր. անատեն մը երգ չկար, հապա խոստովանութիւններ, յաճ ձայնով սիրաշունչ խօսքեր, թէ և երկուքնիս ալ քաղքէն երկու մղոնէն աւելի հեռի ըլլայինք։ Ի դարձին փոխադարձապէս ըսուած խօսքերէն չեմ յիշեր խօսք մը որ սիրային կամ բարեկամական չըլլար։

Գիշեր մը այն ապառաժը հասնելու համար մեզմէ հնարուած ճամբայէ մ'այսինքն առանց սովորական ճամբէն երթալու անտառներուն մէջէն գացեր էինք։ Պրիժիթ այնքան յօժարակամ կը քայլէր, և խարտեշագեղ մեծ մազերուն վրայ դրած իր թաւշեայ փոքրիկ գլխարկը յանդուգն ստամբակի այնպիսի քաջայարմար կերպարանք մը կը տար իրեն որ իր կին ըլլալը կը մոռնայի երբ գժուարին տեղէ մ'անցնիլ հարկ կ'ըլլար։ Բազմիցս Պրիժիթ ստիպուած էր զիս ետ կանչելու որպէս զի օգնեմ իրեն ժայռերէն վեր մագլցելու, մինչդեռ ես՝ առանց խորհելու իր վրայ՝ արդէն շատ վեր նետուեր էի։ Անկարելի է նկարագրել այն ազդեցութիւնը զոր անատեն պայծառ և շքեղ գիշերի մ'և անտառներու միջևը կ'ունենար այս կիսովին ողբագին կնական ձայնը, ձայն մ'որ մորենիներէ և ծառերու կոճղերէ կախուող և մ'քայլելու անկարող այս գպրոցական աշկերտին պզտի մարմնէն կ'ելնէր։

— Օ՛ն, տիկին, կ'ըսէի խնդալով, քաջ և արթուն, պզտի և աղուոր լեռնական մ'ես, բայց սպիտակ ձեռներուդ կաշին կը սկրդուի, և թէև երկաթաւոր հաստատ մուճակներ, գաւազան մ'և առնական կերպարան մ'ունիս, բայց և այնպէս կը տեսնեմ որ պէտք է առնուլ սանիլ քեզի։

Հասանք բոլորովին շնչասպառ. մէջքս փոկ մը փաթթեր էի և ուրիշ սրուակի մը մէջ լմպելի մ'ունէի։ Երբ ապառաժին վրան հասանք, սիրելի Պրիժիթս սրուակը ուզեց. բայց կորուսեր էի սրուակը, ինչպէս նաև հրահան մ'որ մեզ ուրիշ բանի մը կը ծառայէր. այսինքն անոր լոյսովը կը կարդայինք մարդակներուն վրայ գրուած ճամբաներու անունները երբ շեղած ըլլայինք, և իրօք շարունակ կը շեղէինք։ Անատեն մարդակներուն վրայ կը մաղլցէի, և հարկ էր հրահանը վառէ ճիշդ անանկ յարմար միջոցի մ'ուր կարենայի մինչև լոյսին մարիլը շուտով մը կարդալ կիսովին սրբուած տառերը. այս ամեն բաները զուարթութեամբ և տղայաբար կ'ընէինք, ինչպէս իրօք երկուքնիս ալ տղայ էինք։ Պէտք էր մեզի տեսնել քառուղիի մը մէջ երբ հարկ կ'ըլլար չէ թէ մէկ այլ հինգ կամ վեց մարդակի վրայ գրուած ճամբու անունները գժուարութեամբ կարդալ մինչև որ լաւը գտնուի։ Բայց այն գիշեր մեր ամեն ճամբու ծրարները խոտին մէջ մնացեր էին։

— Ինձ նայէ, ըսաւ Պրիժիթ, հոս պիտի անցունենք գիշերը. ես ալ շատ յոգնած եմ։ Այս ապառաժը փոքր ինչ կարծր անկողին մ'է, չոր տերևներով անկողին մ'ընենք զայն։ Նստինք և մ'չխօսինք այս նիւթին վրայ։

Գիշերը հոյակապ էր. լուսինը մեր եռևէն կը ծագէր. տակաւին ձախ կողմէս կը տեսնեմ զայն։ Պրիժիթ անտառուտ բլուրներէն հորիզոնին վրայ գծագրուող ատամնաձև սեւաթոյր քանդակներէն լուսնին ելնելուն նայեցաւ երկար ատեն։ Ստղին պայծառութիւնը թանձր անտառներէն զատուելով հեռահետ երկնից վրայ ծաւալելու ժամանակ Պրիժիթին երգն ալ ևս քան զևս յամր և մելամաղձային կը դառնար։ Պրիժիթ շուտով ծուռեցաւ, և թևերը վիզս փաթթելով ըսաւ.

— Մի կարծեր թէ չեմ հասկնար սիրդ, և թէ յանդիմանութիւններ կ'ընեմ քեզ այն վիշտերուն համար զոր կրել կը տաս ինձ։ Ցանցանքը քուկդ չէ, բարեկամ, երբ անցեալ կեանքդ մոռնալու ոյժ չես ունենար. զիս անկեղծութեամբ սիրեցիր, և՝ եթէ մահուանս պատճառն ըլլայ սէրդ՝ դարձեալ չպիտի զղջամ և չպիտի ցաւիմ այն օրուան վրայ ուր քեզ անձնատուր եղայ։ Կարծեցիր թէ

վերստին պիտի ծնէիր և դիրկս պիտի մոռնայիր այն կիներու յիշատակն որք կործանեցին քեզի։ Բարէ, Օգթամ, ատենօք ժպտեցայ այն կանխահաս փորձառութեան վրայ զոր կ'ըսէիր թէ ստացեր ես և որու համար բոլորովին անգէտ տղայոց պէս պարծիլդ կը լսէի։ Կը կարծէի թէ միայն ուզելս կը բաւէր, և թէ առաջին համբոյրս քաղելուդ պէս շուրթերուդ վրայ պիտի երևային սրտիդ ամեն բարի յատկութիւնները։ Դուն ալ այս կարծիքն ունէիր, և երկուքնիս ալ սխալեցանք։ Ո՛ պատանիդ դու, սրտիդ մէջ ունիս վէրք մ'որ չուզեր բոյժ գտնել. հարկաւ շատ, կարի՛ շատ սիրեր ես քեզի մատնող այն կնիկը, այո՛, իզմէ աւելի, իզմէ շատ աւելի սիրեր ես այն կինը, քանի որ, բարէ, իմ խեղճ սիրոս չեմ կրնար անոր պատկերը ջնջել. հարկաւ ան նաև անգթարար մատնած է քեզի, քանի որ 'ի նանիր է քեզ հաւատարիմ մնալս։ Եւ միւսները, այն միւս ապիրատ կիներն ինչ ըրին երիտասարդութիւնդ թռնաւորելու համար։ Շատ սաստիկ և կարի՛ սոսկալի էին այն հեշտութիւնները զոր անոնք վաճառեցին քեզ, վասն զի կ'ուզես որ անոնց նմանիմ։ Իմ քով կը յիշե՛ս այն կիները։ Ա՛խ, որդեակ իմ, ատի խիստ անգութ ընթացք մ'է, լաւագոյն կը համարիմ անիրաւ և բարկալի ըլլալդ, երևակայական ոճիրներու համար զիս յանդիմանելդ և առաջին տարփուհիդ տեսած դէշութեանդ վրէժը իզմէն լուծելդ տեսնել քան թէ երեսիդ վրայ գտնել այն սոսկալի զուարթութիւնը, ծաղրասէր անառակի այն կերպարանքը որ բռաշէն դիակի մը պէս յանկարծ կը դայ կը տեղաւորի քու շրթերու և իմիններուս միջև։ Ըսէ՛ ինձ, Օգթամ, ինչ է ատոր պատճառը. ինչ են պատճառ այն օրերուն ուր արհամարհանօք կը խօսիս սիրոյ վրայ, և ուր մեր սրտին մինչև իսկ ամենէն սիրաշունչ և փափուկ զգացումները կը ծաղրես։ Գրգռելի ջիղերուդ վրայ ուրեմն ինչ իշխանութիւն ստացեր է քու այն վարած սոսկալի կեանքդ քանի որ այսպիսի հայհոյութիւններ քու կամքի հակառակ տակաւին կը ծփան շուրթերուդ վրայ։ Այո՛, քու կամքի հակառակ, կ'ըսեմ, վասն զի ազնիւ է սիրտդ. դուն իսկ կ'ամչնաս ըրածէդ, զիս այնքան շատ կը սիրես որ չես կրնար համբերել այդ ընթացքիդ, վասն զի կը տեսնես որ այդպէս վարուելուդ համար կը վշտահա-

բիմ։ Ո՛հ, հիմա կը ճանչեմ քեզի։ Երբ առաջին անգամ քեզի այդպէս տեսայ, համակուեցայ այնպիսի սարսափով մ'որու վրայ ոչինչ կրնայ գաղափար մը տալ։ Կարծեցի թէ դուն լոկ խաբերայ էիր առերևոյթ սիրով մը զոր չէիր զգար, և թէ քեզի կը տեսնէի իբր ինչ որ ստուգապէս էիր։ Ո՛ բարեկամ իմ, ուզեցի մեռնիլ, ինչպիսի՛ դիշեր անցուցի։ Կեանքս չես գիտեր. չգիտես թէ ես որ կը խօսիմ՝ աշխարհիս նկատմամբ ստացած փորձառութենէդ աւելի անոյշ փորձառութիւն առած չեմ։ Բարէ, քաղցր է կեանքը, սակայն քաղցր է այն անձանց որք չեն ճանչնար զայն։

«Սիրելի՛ Օգթամ, առաջին սիրած մարդս դուն չես։ Սրտիս խորն աղեստալի պատմութիւն մը կայ զոր գիտնալդ փափաքելի է ինձ։ Երբ տակաւին մատաղահաս էի, հայրս իս հին բարեկամի մը միածին զաւկին սահմանած էր։ Գիւղի գրացիներ էին անոնք և երկու կալուածք ունէին գրեթէ հաւասար արժէքով։ Երկու ընտանիքն ամեն օր կը տեսնուէին և կարծես միասին կ'ապրէին։ Հայրս մեռաւ. արդէն երկար ատենէ վեր մայրս ալ մեռած էր։ Մնայի հօրաքոյրիս պահպանութեան ներքև. կը ճանչես զինքը։ Հօրաքոյրս ժամանակէ մ'էտք ճամբորդութիւն մ'ընելու ստիպուելով, հարկադրուեցաւ ինքն ալ ապագայ կեսրայրիս յանձնելու զիս։ Սա իր աղջիկը կ'անուանէր զիս միշտ. երբէք ուրիշ անուն չէր տար, և իր տղուն հետ կարգուելու պարտաւորիս այնքան յայտնի էր քաղքին մէջ որ մեզի, այսինքն զիս և իր տղան միասին թողուցին ամենամեծ աղատութեամբ։

«Այս երիտասարդը, որու անունը տալն անօգուտ է, միշտ իս սիրել ձևացուցած էր։ Ինչ որ տարիներէ 'ի վեր մանկութեան բարեկամութիւն մ'էր, սէր եղաւ ժամանակ անցնելով։ Երբ առանձին ըլլայինք, կ'սկսէր խօսիլ ինձ այն երանութեան վրայ որ մեզ կ'սպասէր. իր անհամբերութիւնը կը նկարագրէր ինձ։ Իրմէն տարի մը միայն պզտիկ էի. սակայն մերձաբնակ մարդու մը հետ ճանչնորութիւն ըրած էր. յոռի բարուց տէր այս մարդը տեսակ մը խաբերայ և նենգաւոր մ'էր որու խրատներուն ուշ դրած էր ան։ Մինչդեռ տղայի մը յատուկ վստահութեամբ անձնատուր կ'ըլլայի իր սիրային զգուանաց, որոշեց իր հայրը խաբել, մեզ՝ ամենուս՝ ուսակ խոստումը ուտել և զիս կործանելէն ետք թողուլ։

«Իր հայրն առաջ մ'իր սենեակը բերել տուած էր մեզի, և հոն բոլոր ընտանեայ առջև իմացուցած էր մեզ մեր ամուսնութեան օրուան որոշուած ըլլալը։ Նոյն օրն իրիկուն տղան ինձ հանդիպեցաւ պարտէզին մէջ, սաստիկ զոյներով նկարագրեց իմ վրայ ունեցած սէրը, ըսաւ թէ քանի որ ամուսնութեան օրն որոշուած էր, ինքզինքն իմ էրիկս կը սեպէր և թէ Աստուծու առջև արդէն ամուսին էր ծնած օրէն 'ի վեր։ Զմեղադրուելու համար՝ պատանութիւնս, տգիտութիւնս և ունեցած վստահութիւնս առջև բերի. անձնատուր եղայ իրեն առանց տակաւին իր կինն եղած ըլլալու, և ութ օր ետք իր հօրը տունէն գնաց. փախաւ կնիկի մը հետ զոր ճանչցած էր իր նոր բարեկամին միջոցով. գրեց մեզ թէ կը մեկնէր դէպ Ալմանիա, և անկից 'ի վեր ալ իր երեսը չտեսանք։

«Մէկ խօսքով ահա այս է կեանքիս պատմութիւնը, զոր էրիկս իմացաւ, ինչպէս գուն ալ հիմա գիտես։ Շատ հպարտութիւն ունիմ, սիրելի՛դ իմ, ուստի առանձնութեանս մէջ երդում ըրեր էի թէ մարդ մ'երբէք երկրորդ անգամ կրնայ պիտի չտայ ինձ այն վիշտերը զոր անտանելի կրեր էի։ Քեզի տեսայ և երդումս մոռցայ, առանց սակայն ցաւս մոռնալու։ Պէտք է քաղցրութեամբ վարուիլ հետս. եթէ հիւանդ ես, նաև ես հիւանդ եմ. պէտք է հոգ տանիլ ինձ ալ քեզ ալ։ Ահա կը տեսնես, Օղթա՛մ, որ ես ալ գիտեմ թէ ինչ բան է անցելոյն յիշատակը։ Այս յիշատակն ինձ ալ քովդ անհնարին սարսափով լի վայրկեաններ կը տայ. քեզմէ առնլի արիութեան պէտք պիտի ունենամ, վասն զի թերևս առնլի տառապեր եմ։ Ինձ պիտի պատկանի սկսիլ. սիրտս շատ քիչ վստահութիւն ունի ինքն իր վրայ. տակաւին տկար եմ. գուն այս գլուղը չեկած կեանքս որքան հանդարտ էր հոս. որքան ինքնին խոստացեր էի ամենևին փոփոխութիւն չտալ այն կեանքիս։ Այս ամեն իրողութեանց պատճառաւ պահանջող կ'ըլլամ։ Այլ սակայն, հոգ չէ, քուկդ եմ։ Թարեշուք ժամերուդ մէջ ըսիր թէ Նախախնամութիւնը քու վրայ մայրաբար հսկելու պաշտօն տուաւ ինձ։ Ճշմարիտ է ասի, բարեկա՛մ. ամեն օր տարփուհիդ չեմ. կան շատ օրեր ուր մայրդ եմ, ուր կ'ուզեմ մայրդ ըլլալ։ Այո՛, երբ կը վշտացընես զիս, ա՛լ սիրողս չեմ տեսներ 'ի քեզ. ա՛լ ինծի համար հիւանդ, կասկածոտ կամ խստասիրտ պատանի մ'ես զոր կ'ուզեմ դարմանել կամ բուժել՝ նորէն գտնելու համար այն երիտասարդը զոր կը սիրեմ և զոր կ'ուզեմ միշտ սիրել։ Իցի՛ թէ Աստուած այս ոյժը տար ինձ, շարայարեց Պրիժիթ՝ երկինք նայելով։ Իցի՛ թէ Աստուած որ մեզի կը տեսնէ, որ խօսիլս կը լսէ, իցի՛ թէ մայրերու և սիրուհիներու Աստուածը թոյլ տար ինձ կատարելու այս պաշտօնը։ Եթէ պարտաւորիմ ընկճիլ այս պաշտօնին առջև, եթէ հպարտութիւնս որ կը զայրանայ, եթէ խեղճ սիրտս որ կամքիս հակառակ ճղակտոր կ'ըլլայ, եթէ բոլոր կեանքս . . . »

Ձաւարտեց խօսքը, արտասուքը կեցուց իր լեզուն։ Ո՛ Աստուած, Պրիժիթը իր ծունկերուն վրայ կռկռուած, ձեռնամած, քարին վրայ ծռուած տեսայ. հոլէն առջևս կ'երերար ան մեզի շրջապատող հաւամրդկներուն պէս։ Դիւրաբեկ և վե՛հ արարած, որ իր սիրոյն համար աղօթք կ'ընէր։ Վեր ընելով գիրկս առի զինքը։

— Ո՛ միակ բարեկամուհիս, գոչեցի, ո՛ սիրուհիս, մայրս և քոյրս, աղօթք ըրէ նաև ինծի համար որպէս զի կարող ըլլամ սիրելու քեզի այնպէս ինչպէս արժանի ես սիրուելու։ Խնդրէ՛ որ կարենամ ապրիլ, որ սիրտս արտասուքովդ լուացուի, անարատ և սուրբ նշխար մ'ըլլայ, և միասին ճաշակենք զայն առաջի Աստուծու։

Քարին վրայ ընկանք երկուքնիս ալ։ Խորունկ լռութիւն մը կը տիրէր մեր շրջան գլին. մեր գլուխներուն վերևն աստղափայլ երկնից տարածութիւնը կար։

— Կը ճանչնա՞ս այս երկինքը, ըսի Պրիժիթին, կը յիշե՞ս առաջին օրը։

Փա՜ռք Աստուծու, այն գիշերէն ետք ա՛լ երբէք չդայնինք այն ժայռը։ Խորան մ'է այն որ անարատ մնայ. կենացս ուրուականներէն այս միայն տակաւին ճերմակներ հագած կ'երևայ երբ առջևէս կ'անցնի։

ԳԱՂՈՒԻՐ Գ

Իրիկուն մ'երբ հրապարակէն կ'անցնէի, երկու մարդ տեսայ որք կեցեր էին և որոնց մին միւսին կ'ըսէր բաւական բարձր ձայնով.

— Կ'երևայ թէ չարաչար վարուեցաւ այն կնոջ հետ։

— Իրն է յանցանքը. ինչու այնպիսի մարդ մ'ընտրեց. այս մարդը միայն բողերու հետ տեսնուած է. ուրեմն տիկինն իր յիմարութեան պատիժը կը կրէ։»

Մութին յառաջացայ որպէս զի այսպէս խօսողները ճանչեմ և աշխատիմ աւելի լսելու. սակայն զիս տեսնելով հեռացան խօսողները։

Պրիժիթը վրդովումի մէջ դտայ. իր հօրաքոյրը ծանրապէս հիւանդ էր. ինձ քանի մը խօսք ըսելու հաղիւ ժամանակ ունեցաւ։ Շաբաթ մ'ամբողջ չկրցայ տեսնել զինքը. իմացայ թէ Պրիժիթ Բարիզէն բժիշկ մը բերել տուած էր. վերջապէս օր մը մարդ ղրկելով զիս ուզեց.

— Հօրաքոյրս մեռաւ, ըսաւ. կորուսի այն անձը որմէ զատ ոչ ոք ունէի աշխարհիս վրայ։ Հիմա մինակ եմ աշխարհիս մէջ, և պիտի մնամ այս կողմերէն։

— Ուրեմն իրաւ ոչինչ եմ քեզի համար։

— Ընդհակառակն, բարեկամ, դիտես որ կը սիրեմ քեզի, և ատեպ կը հաւատամ թէ կը սիրես զիս։ Բայց ինչպէս կրնամ վստահիլ քու վրայ։ Սիրուհիդ եմ, բաբէ, առանց դուն իմ սիրողս ըլլալու. Շէյքսբիր քեզի համար ըսած է սա արտմալի խօսքը.

«Փոփոխուն սնդուսկ զգեստ մը շինել տուր քեզ, վասն զի սիրադ հաղարագոյն արևակնի կը նմանի։»

Եւ ես, Օղթա՛վ, շարայարեց Պրիժիթ՝ իր սուգի ըսպան ցոյց տալով, միայն մէկ զոյնի դատապարտուած եմ, և երկար ժամանակ ա՛ռ զոյնը չպիտի փոխեմ։

— Գնա՛, այս երկրէն, եթէ կ'ուզես, կամ պիտի մեռցնեմ ինքզինքս, կամ ետևէդ պիտի գամ։ Ա՛խ, Պրիժի՛թ, շարունակեցի ծունկի վրայ գալով իր առջև, ուրեմն կարծեցի՛ր թէ մինակ էիր հօրաքեռդ մեռնիլը տեսնելով։ Ատկից աւելի սաստիկ պատիժ չէիր կրնար տալ ինձ. հիմա, միայն հիմա ամենադառն վիշտով կ'զգամ քու վրայ ունեցած սիրոյս թշուառութիւնը։ Պէտք է որ ետ առնուս այդ սոսկալի կարծիքը. արժանի եմ այդ կարծիքին, բայց զիս կը մեռցնէ այն։ Ո՛ Աստուած, իրաւ է թէ ամենեւին բան մը չեմ կենացդ մէջ, կամ թէ եմ՝ քեզի ըրած դէշութեամբս միայն։

— Զգիտեմ թէ ո՛վ կը դիտէ մեզի. քանի մը ժամանակէ 'ի վեր այս գիւղին մէջ և շրջակաները տարօրինակ խօսքեր տարածուեր են։ Ոմանք կ'ըսեն թէ դէպ 'ի կորուստ կ'երթամ. կը պնդեն թէ անխոհեմ և խենդ եմ. ոմանք ալ իբր անգութ և վատնդաւոր մարդ կը նկարագրեն քեզի։ Զգիտեմ ինչպէս մեր ամենէն թագուն խորհուրդներն անգամ խուզարկուեր են. ամենուն յայտնի եղեր են այն բաները որք կը կարծէի թէ միայն ինձ ծանօթ են, նաև ընթացքիդ անհաւասարութիւններն և ասոնցմէ հետևող արտմալի տեսարանները. խեղճ հօրաքոյրս այս բաներուն վրայ խօսեցաւ ինձ, և երկար ատենէ 'ի վեր գիտէ եղեր զանոնք առանց բան մ'ըսելու մեզ։ Ո՞վ գիտէ, թերևս այս բաներն աւելի շուտով, աւելի դառնապէս դերեզմանն իջեցուցին զինքը։ Ճեմարանը պտոյտ ընելով երբ հին բարեկամուհիներուս կը հանդիպիմ, ցուրտ կերպով կը մօտին ինձ կամ կը հեռանան երբ կը մօտիմ. սիրելի դեղջուհիներս, այն բարեսիրտ աղջիկներն անգամ, որք այնքան կը սիրէին զիս, կիրակի օրերն արհամարհանօք իրենց ուսերը վեր կ'ընեն երբ կը տեսնեն թէ դատարկ է իմ այն տեղս ուր իրենց պզտի պարահանդէսին երաժիշտներուն մօտ սովորութիւն ունէի նստելու։ Ինչո՞ւ, ինչպէս կ'ըլլան այս բաները. չգիտեմ. անշուշտ դուն ալ չգիտես. բայց պէտք է որ մեկնիմ. չեմ կրնար համբերել այս իրողութիւններուն, մանաւանդ այս մահուան, այս յանկարծահաս և սոսկալի հիւանդութեան, և մանաւանդ այս առանձնութեան, այս դատարկ սենեկին։ Վհատութիւն կը գայ վրաս, բարեկամս, ո՛ բարեկամդ իմ, մի՛ լքաներ զիս։

Պրիժիթ կը լար. մօտակայ սենեկին մէջ խառն 'ի խուռն սպա-

ներ, գետինը արկղ մ'և Ճամբորդութեան պատրաստութիւններ յայտնող ուրիշ ամէն բաները նշմարեցի։ Ցայտնի էր թէ Պրիժիթ՝ իր հօրաքեռ մահուան բոպէին ուղած էր մէկնիլ առանց ինծի, և թէ սակայն այսպէս առանձնակի մեկնելու ոյժը չունեցած էր։ Իրօք վհատած էր Պրիժիթ որ դժուարաւ կը խօսէր. սոսկալի էր իր վիճակը, և ես էի իր վիճակն այսպէս ընողը։ Ոչ միայն դրժբաղդ էր ան, այլ նաև հասարակութեան մէջ կը նախատուէր, և իրեն համար վրդովումի և չարչարանաց աւելի բեղմնաւոր աղբիւր մ'էր լոկ այն մարդը յոր կը պարտաւորէր նեցուկ ու միանգամայն մխիթարիչ մը դտնել։

Անիրաւութիւններս այնքան սաստիկ զղացի որ ես ինքնիրմէս ամչցայ։ Այնքան խոստումներէ, այնքան անօգուտ եռանդներէ, այնքան նպատակներէ և այնքան յոյսերէ ետք վերջապէս ահա այս էր ըրածս, եւ դեռ երեկ ամիս անցած էր Պրիժիթը սիրելէս 'ի վեր։ Կը կարծէի թէ դանձ մ'ունիմ սրտիս մէջ, բայց սակայն այս սրտէն ոչ այլ ինչ արտադրուած էր, բայց եթէ դառն լեզի մը, երազի մը ստուերը և կնիկի մը դժբաղդութիւնը, կնիկի մը զոր կը պաշտէի։ Առաջին անգամ իրապէս դէմ առ դէմ դտնուեցայ ինքզինքիս հետ. Պրիժիթ ամենեին ամբաստանութիւն մը չէր ըներ ինձ. կ'ուզէր մեկնիլ և չէր կրնար. պատրաստ էր տակաւին տառապելու։ Ցանկարծ հարցուցի իւրովի թէ չէի՞ պարտաւորեր թողուլ այս կինը, թէ ինձ չէր պատկաներ խոյս տալ իրմէն և զինքն տղատել ժանտախտէ մը։

Ոտք ելայ և մօտակայ սենեակը մտնելով դացի Պրիժիթին արկղին վրայ նստայ։ Հոն ձեռներուս մէջն առի Ճակատս, և կեցայ կարծես բոլորովին շուարած և յոգնաբեկ։ Զորս դիս կը նայէի կիսովին պատրաստուած ծրարներուն, կարասիներուն վրայ դրուած զգեստներուն և սպասներուն. բարի, կը Ճանչէի ասոնց ամենն ալ. սրտէս փոքր ինչ ունէին այն ամէն բաներն որք Պրիժիթին դպեր էին։ Սկսայ հաշուել այն ամէն դէշութիւնները զոր պատճառեր էի իրեն. մանչիս առջևը բերի սիրելի Պրիժիթիս թմբլիներու ծառուղիէն անցնիլը, սպիտակ ուլին ետևէն վազելը։

«Ո՞վ մարդ, դոչեցի իւրովի, և ինչ իրաւամբ։ Հոս գալու և ձեռքդ այս կնկան վրայ դնելու յանդգնութիւնը որմէ՞ն առիր։ Ո՞վ հրաման տուաւ որ ուրիշը տառապի քեզի համար։ Հայլիիդ առջև կը սանտրուիս, և իբր բարեբաղդ քու վշտաբեկ սիրուհիդ տունը կ'երթաս, ծանծաղամիտ դու. կը նետուիս այն բարձերուն վրայ ուր պահ մ'առաջ աղօթք ըրած է ան քեզի և իրեն համար, և կամայ մը, համարձակ կերպարանով մը կը զարնես այն քնքուշ ձեռներուն որք տակաւին կը դողդոջեն։ Բաւական կրնաս խեղճ երևակայութիւն մը հրահրել, և սիրային բանդագուշանացդ ժամանակ բաւական եռանդով կը շատախօսես, զրեթէ այն փաստաբաններուն պէս որք լայած դուրս կ'ելնեն իրաւարանէ մ'ուր զէշ դատ մը կը կորուսեն։ Պզտիկ անառակ որդիին կերպերն և ընթացքն ունիս, վշտին հետ կատակ կ'ընես. կնային մեկուսարանի մէջ ասեղի ծայրով մարդասպանութիւն մ'ընելու մասին զուարճութիւն կը դտնես։ Ի՞նչ պիտի ըսես կենդանի Աստծու երբ դործդ աւարտած պիտի ըլլայ։ Ո՞ւր կ'երթայ, ի՞նչ կ'ըլլայ քեզի սիրող կինը։ Ո՞ւր կը սպրդիս, ո՞ւր կ'ընկնիս մինչդեռ ան քու վրայ կը կոթնի։ Ի՞նչ երեսով օր մը պիտի թաղես դունաբեկ և թշուառ սիրուհիդ, ինչպէս ինքն ահա թաղեց այն միակ անձը որու պաշտպանութեանը ներքևն էր։ Այո՛, այո՛, անտարակոյս պիտի թաղես այդ կինը, վասն զի սէրդ կ'սպանանէ և կը մաշէ զինքը. դժոխային Ճիւաղներուդ մատնեցիր խեղճը, և ինք կը հանդարտէ զանոնք։ Եթէ այդ կնիկին հետն երթաս, պիտի մեռնի քու պատճառաւ։ Զդուշացի՛ր. իր բարի հրեշտակը կը վարանի. իր տունն եկաւ այս հարուածը տալու որպէս զի աղետալի և ամօթալի կիրք մ'արտաքսէ անկից. այս մեկնելու դաղափարը ան տուաւ Պրիժիթին. թերևս այս պահուս իր վերջին աղդարարութիւնը կը տայ անոր ականջին։ Ո՛ մարդասպան, ո՛ դահիճ, զդուշացի՛ր, խնդիրը կեանքի՛ և մահո՛ւ վրայ է։»

Այսպէս կը խօսէի իւրովի. ապա դծաւոր պզտի բօպան մը տեսայ բազմոցին մէկ խորշն ուր արդէն ծալլուած կ'սպասէր՝ արկղը մտնելու համար։ Մեր միայն երջանիկ օրերուն մէկին ականատեսն եղած էր այս բօպան։ Բռնեցի և վեր բրի զայն։

«Ես թողում քեզի, ըսի բօպային, ես զրկում քեզմէ։ Ո՛ փոքրիկ զգեստ, մինակդ կ'ուզես մեկնիլ։»

«Զէ, չեմ կրնար Պրիժիթը լքել. այս լքումը վատութիւն մ'է սոյն միջոցիս։ Իր հօրաքոյրը կորոյս ան. ահա ան միայն է. չգիտեմ ո՞ր թշնամի խօսքերուն առարկան եղած է։ Այս թշնամին Մերդանսօնը կրնայ ըլլալ միայն. Տալանին վրայօք հետս ունեցած խօսակցութիւնը հարկաւ պատմած է ուրիշներուն, և օր մը տեսնելով թէ նախանձոտ եմ, միս ամէն բան հետևցուցած և գուշակած է։ Անտարակոյս օձ մ'է այն որ ամենասիրելի ծաղիկս վրայ իր լորձունքը կը ծորէ։ Նախ պէտք է ասոր փոխարէն պատժեմ զինքը. ապա պէտք է որ Պրիժիթին ըրած դէշութեանս դարմանը տանիմ։ Անմ՛տ եմ որ կը խորհիմ թողուլ զինքն երբ պէտք է կեանքս իրեն նուիրել, անիրաւութեանցս ապաշխարանքը կրել և իր աչերէն իմ պատճառաւ հոսող արտասուքներուն փոխարէն երանութիւն, խնամք և սէր տալ իրեն, երբ աշխարհիս մէջ իր միակ նեցուկը, միակ բարեկամը, միակ պաշտպանն եմ, երբ պարտքս է հետն երթալ մինչև աշխարհիս ծայրը, մարմնս ապաստանարան մ'ընել իրեն, մխիթարել զինքը՝ զիս սիրելուն և ինձ անձնատուր ըլլալուն համար։»

— Պրիժի՛թ, դուշեցի՝ մտնելով սենեակն ուր կեցած էր ան, սպասէ՛ ինձ. մինչև մէկ ժամ պիտի դամ։

— Ո՞ւր կ'երթաս, հարցուց։

— Սպասէ՛ ինձ, ըսի, մի՛ մեկնիր առանց ինծի։ Ցիշէ՛ Ռութին սա խօսքերը.

«Ուր որ երթաք, ձեր ժողովուրդն իմ ժողովուրդը, և ձեր Աստուածն ալ իմ Աստուածը պիտի ըլլայ. այն երկիրն ուր պիտի մեռնիք՝ պիտի տեսնէ իմ ալ մեռնիլը, և պիտի թաղուիմ ուր որ պիտի թաղուիք։»

Արագօրէն մեկնեցայ Պրիժիթին տունէն և Մերդանսօնին տունը վազեցի. ըսուեցաւ ինձ թէ դուրս ելած է ան, և իր սենեակը մտայ սպասելու համար որ դայ։

Քահանային սև և աղտոտ սեղանին առջևի կաշիէ աթոռին վրայ նստեր էի որ սենեկին մէկ խորշն էր։ Ժամանակն սկսաւ երկար երևալ ինձ, երբ յանկարծ միտքս եկաւ առաջին տարփուհիս պատճառաւ ըրած մնամարտութիւնս։

«Այն մնամարտութեան մէջ, ըսի իրովի, ատրճանակի լաւ կնտակ մը կերայ, և ծիծաղելի խենդ մը սեպուեցայ այս պատճառաւ։ Հոս ինչ ընելու եկայ։ Այս քահանան չպիտի մնամարտի հետս. եթէ հետը վէճ հանելու աշխատիմ, պիտի պատասխանէ թէ իր զգեստին ձևը հարկ չթողուր իրեն ինձ մտիկ ընելու, և մեկնելէս ետք քիչ մ'աւելի պիտի շաղակրատէ այս գործին վրայ։ Ասկից 'ի զատ ինչ են մեր վրայօք ըսուած խօսքերը։ Պրիժիթ ինչո՞ւ հոգ կ'ընէ անոնցմէ. կ'ըսուի թէ իր բարի անունը կը կորուսէ, թէ հեռը չարաչար կը վարուիմ և թէ ան իրաւունք չունի վշտանալու։ Ինչ խենդութիւն. ասի և ոչ մէկուն վերաբերող բան մ'է. ամենէն աղէկ ճանբան է թողուլ որ խօսին. ասանկ պարագայի մէջ այս տեսակ ողբմելի բաներու վրայ հոգ ընելն անոնց կարևորութիւն տալ է։ Կրնանք գաւառաբնակ անձերը արգիլել իրենց դրացիներուն վրայ զբաղելու։ Կրնանք արհամարհոտ կիներն արգիլել չարախօսելու սիրող մ'առնող կնիկի մը դէմ։ Տարաձայնութիւն մը դադրեցնելու ինչ միջոց կարելի է գտնել։ Եթէ կ'ըսուի թէ չարաչար կը վարուիմ Պրիժիթին հետ, ինձ կը պատկանի հակառակը ապացուցանել ընթացքովս և չէ թէ բռնութեամբ։ Մերդանսօնին հետ կռիւ ընել ուզելն և հասարակութեան շաղակրատութեան պատճառաւ այս երկրէն մեկնելը ծիծաղելի բան մ'է։ Զէ, պէտք չէ մեկնիլ այս երկրէն. անպատեհութիւն մ'է այս. եթէ մեկնինք, ամէն մարդ պիտի ըսէ թէ իրաւունք ունին մեզի դէմ խօսելու, և շաղակրատները յաղթած պիտի սեպուին։ Պէտք չէ մեկնիլ, ոչ ալ հոգ ընել տարաձայնութիւնները։»

Նորէն Պրիժիթին տունը դացի։ Հաղիւ կէս ժամի չափ անցած էր, և ահա երեք անգամ զգացում փոխեր էի։ Պրիժիթը համոզեցի 'ի գործ չդնելու իր նպատակը. պատմեցի իրեն Մերդանսօնին տունն երթալս և ինչո՞ւ զգուշանալս։

Պրիժիթ համբերութեամբ մտիկ ըրաւ. սակայն կ'ուզէր մեկնիլ. սոսկալի էր իրեն այս տունն ուր իր հօրաքոյրը մեռած էր. հարկ եղաւ ինձ շատ ջանք ընել հաւանեցնելու համար զինքն որ կենայ։ Վերջապէս յաջողեցայ համոզելու։ Ըսինք իրարու թէ կ'արհամարհինք վայրահաչութիւնները, թէ պէտք չէր ամենևին ընկրկիլ այս

վայրահաչուքեանց առջև, ոչ ալ փոփոխել մեր ապրելու սովորական եղանակը։ Երդում ըրի Պրիժիթին թէ սէրս իր ամէն յաւերէն պիտի մխիթարէ զինքը, և այս մխիթարութիւնը յուսալ ձևացուց։ Ըսի թէ այս պարագան անիրաւութիւններս այնքան յայտնապէս երևան հանած էր իմ առջև որ զղջալս ընթացքովս պիտի հաստատէի իրեն. թէ կ'ուզէի իբր ուրուական մ'արտաքսել սրտէս այն ամէն յոռի խմորը որ հոն կը գտնուէր. թէ այսուհետև վիշտ չպիտի կրեր ոչ հպարտութեանս և ոչ կամածին հաճոյից պատճառաւ, և այսպէս Պրիժիթ տրտում և համբերատար երևալով, միշտ վրէս կախուած մնալով հնազանդեցաւ պարզ քմահաճութեան մը զոր ես իսկ մոքիս մէկ լոյսը կը սեպէի։

ԳԼՈՒԽ Ե

Օր մը Պրիժիթին բնակարանը մտնելով բայց տեսայ պզտի սենեակ մը զոր իր աղօթանոցը կ'անուանէր. իրօք այս սենեկին մէջ փոքրիկ զրքակալ մը, պզտի խորան մը, խաչ մ'և քանի մ'ոսման ծաղիկ կար։ Պատերն ու վարագոյրները, վերջապէս ամէն բան ձիւնի պէս ճերմակ էր. Պրիժիթ երբեմն, բայց քիչ անգամ այս սենեկին մէջ կը մնար իր տունը ապրելու սկսելէս 'ի վեր։

Դուռէն դէպ 'ի ներս ծռուելով տեսայ որ Պրիժիթ գետինը նստած էր ծաղիկներու միջևը, զոր պահ մ'առաջ նետած էր։ Ձեռքը պզտի պսակ մը կար որ չորաբեկ տերևներէ պսակ մ'երևցաւ ինձ, և Պրիժիթ ձեռներուն մէջ կը փշրէր զայն։

— Ի՞նչ կ'ընես հոդ, հարցուցի։

Պրիժիթ սարսուռ մը կրեց և եկաւ։

— Ոչինչ, տղայի խաղալիկ մ'է, վարդաշէն հին պսակ մ'որ այս աղօթանոցին մէջ թօշնեցաւ, պատասխանեց. երկար ատենէ 'ի վեր հոս գրեր էի զայն. եկայ ծաղիկներս փոխելու։

Պրիժիթ երերուն ձայնով կը խօսէր և նուաղելու պատրաստ կ'երևար։ Ցիշեցի Վարդն Պրիժիթ անունը որուն իրեն տրուիլը լսեր

էի։ Հարցուցի թէ մի գուցէ իր վարդակերպ պսակն ըլլար այն զոր պահ մ'առաջ փշրած էր ձեռներուն մէջ։

— Զէ, պատասխանեց՝ տժգունելով։

— Այո, գոչեցի, այո, կ'երդնում թէ այն է. տուր ինձ անոր բեկորները։

Ժողովեցի պսակին փշրները և սեղանին վրայ դնելէն ետք լուռ կեցայ՝ այն բեկորներուն նայելով ակնապիշ։

— Եթէ պսակս ըլլար այն, ըսաւ, իրաւունք չունէի վար առնելու այս պատէն ուր կը կենար այսքան երկար ատենէ 'ի վեր։ Ի՞նչ բանի կը ծառայեն այս բեկորները։ Ա՛լ այս աշխարհիս չվերաբերիր Վարդն Պրիժիթ, ոչ ալ այն վարդերն որք զինքը մկրտեցին։

Դուրս եկաւ ապա, հեծկլտանք մը լսեցի, և դուռն իր ետևէն դոցուեցաւ. մնակ մնացի, ծունր կրկնեցի քարին վրայ և դառնապէս լացի։

Երբ Պրիժիթին սենեակը դացի, զինքը սեղանը նստած գտայ. ճաշը պատրաստ էր, և ինք ինձ կ'սպասէր։ Լռելեայն տեղս նստայ ես ալ, և ա՛լ մեր մէջ խօսքի առարկայ չեղաւ ինչ որ մեր սրտին մէջը կար։

ԳԼՈՒԽ Զ

Իրօք Մերկանսօն գիւղին մէջ և շրջակայ ապարանաց մէջ պատմեր էր Տալանին վրայ իր հետն ըրած խօսակցութիւնս և այն կասկածները զոր իմ կամքի հակառակ յայտնապէս խմացուցեր էի իրեն։ Գիտենք թէ չարախօսութիւններն ինչպէս գաւառներուն մէջ կը կրկնուին, բերանէ բերան կը թռին և չափանցօրէն կը մեծնան. անատեն ահա մեզի համար այսպէս եղաւ։

Պրիժիթ և ես իրարու նկատմամբ նոր կացութեան մը մէջ կը գտնուէինք։ Անի թէև տակաւ կերպով ուզած էր մեկնիլ, բայց վերջապէս ուզած էր։ Ապա ազաչանաց զիջանելով կեցած էր, ուստի այս մասին իմ կողմէ պարտականութիւն մը կար։ Խօսք տուեր էի իր հանգստութիւնը չվրդովելու ոչ նախանձոտութեամբս, ոչ

ալ թեթեւութեամբս. բերնէս փախող մէն մի ծանր կամ հեղնական խօսք յանցանք մ՚էր. իր ինձ ուղղած մէն մի տրտմաշունչ նայուածքը զգալի և արժանաւոր յանդիմանութիւն մ՚էր։

Պրիժիթ իր բարի և պարզասէր բնաւորութեան շնորհիւ նախ հրապոյր մ՚աւելի դառաւ իր առանձնութեան մէջ. կրնար գիս տեսնել ամեն ժամ և առանց զգուշութիւն ընելու պարտաւորութեան։ Թերևս այս գիւրութեան զլխովին հաւանեցաւ հաստատելու համար ինձ թէ իր սէրը իր համարումն վեր կը դասէ. կարծես կը զգՒար չարախօսներուն վայրահաչութիւններէն վշտացած ըլլալուն։ Ինչ և իցէ, փոխանակ մեր վրայ հսկելու և հետաքրքրութենէ զգուշանալու, սկսանք տեսակ մ՚աւելի ազատ և աւելի անհոգ կեանք մը վարել։

Պրիժիթին տունը կ՚երթայի նախաճաշի ատեն. ցորեկն ամենեին դործ չունենալուս համար իր հետը միայն դուրս կ՚ելնէի իր տունէն։

Գիս կը կեցնէր կէսօրին հետը ճաշելու համար. հետևաբար նաև մինչև գիշեր կը մնայի. երբ շուտով կը դար տունս դառնալու ատենը, հազար ու մէկ պատրուակներ կ՚երևակայէինք, հազար ու մէկ ցնորական զգուշութիւններ կ՚ընէինք որք իրապէս ցնորական չէին։ Վերջապէս կրնայ ըսուիլ թէ իր տունը կ՚ապրէի, և կը ձևացնէինք հաստատ թէ ոչ ոք կը նշմարէր այսպէս հոն ապրիլը։

Ժամանակ մը խօսքս բռնեցի, և ամենեին ամպ մը չվրդովեց մեր առանձնական կեանքը։ Երջանիկ օրեր ունեցանք, հարկ չկայ այն օրերուն վրայ խօսելու։

Գիւղին մէջ ամենուրեք կ՚ըսէին թէ Պրիժիթ Բարիզէն եկող առնառակի մը հետ կ՚ապրի յայտնապէս. թէ սիրոյն իր հետը չարաչար կը վարուի. թէ իրենց ժամանակը կ՚անցուցնեն իրարմէ զատուելով և նորէն իրարու մօտենալով, և թէ սակայն այս կենակցութիւնը գէշ կերպով պիտի վերջանայ։ Առաջ դովեստներ տուեր էին Պրիժիթին իր անցեալ կենացը համար. հիմակ այն բոլոր դովեստներուն փոխարէն կը պարսաւէին զինքը։ Ժամանակաւ ամեն դովեստներու արժանի այս ընթացքին մէջ իսկ չկար բան զոր չարախօսները չբնտռէին չարաչար մեկնելու համար։ Ցանկարծ անարդա-

լի խեղկատակութեանց և հեղնութեանց առարկայ եղան Պրիժիթին դէպ՚ի լեռներն բրած առանձնական շրջապատութիւններն որոց նպատակն էր ողջմտութիւն և որք բնաւ կասկածի մը տեղի չտուեր էին։ Կը խօսէին իր վրայ իբր այնպիսի կնիկի մը նկատմամբ որ մշ ամենեին չգիտեր թէ ինչ բան է պատկառիլը, ամչնալը, և որ իրաւամբ պիտի պարտաւորէր անխուսեալի և սոսկալի դժբաղդութեանց ենթարկուիլ։ Ըսեր էի Պրիժիթին թէ իմ կարծիքս էր ազատ թողուլ շաղակրատութիւնը, և չէի ուզեր այս վայրահաչութիւններէն հոգ ընելս յայտնել, բայց ճշմարիտ է որ անոնք անտանելի կ՚ըլլային ինձ։ Երբեմնակի յատկապէս դուրս կ՚ելնէի, և շրջակայ տեղերն այցելութիւն ընելու կ՚երթայի՝ որպէս զի աշխատիմ նախատինք մը սեպուելու չափ ծանր խօսք մը լսելու և հատուցում պահանջելու համար։ Սրահի մը մէջ՝ ուր կը դտնուէի՝ մտիկ կ՚ընէի ցած ձայնով ըսուած ամեն խօսքերը. բայց չէի կրնար ոչինչ լսել որոշակի. հանդստարար միսս ծամելու համար կ՚սպասէին որ մեկնիմ։ Անատեն Պրիժիթին տունը կ՚երթայի, կ՚ըսէի իրեն թէ այն ամեն առասպելաբանութիւններն ամենաչնչին բաներ էին. թէ խենդութիւն է անոնց նկատմամբ հոգ ընելը. թէ մարդիկ թող մեր հորը փորեն որքան որ կրնան և թէ չէի ուզեր ամենեին բան մը լսել այս մասին։

Մ՚թէ անասելի կերպով յանցաւոր չէի։ Եթէ անխոհեմ էր Պրիժիթ, մ՚թէ ինձ չէր պատկաներ խորհիլ և վտանգը իմացընել իրեն։ Ես ասոր բոլորովին հակառակ կերպով վարուեցայ, կրնայ ըսուիլ թէ հասարակութեան հետ իրեն հակառակորդ եղայ։

Ի սկզբան անհոգ երևեր էի, ապա իսկոյն չարասիրտ երևցայ։

— Ցիրաւի կ՚ըսէի Պրիժիթին, կը բամբասեն գիշերային շրջադայութիւններդ։ Աղէկ ապահով ես թէ անիրաւ են բամբասողները։ Ամենեին բան մը տեղի չունեցաւ այս վիպական անտառին ծառուղիներուն և քարայրներուն մէջ։ Երեկոյեան ժամանակ երբէք անծանօթի մը թևը մտած չեմ, ինչպէս հաւանեցար մտնելու իմ թևս։ Մ՚թէ ողջմտութիւնը լոկ աստուածուհի ըլլար քեզ այն դալարազարդ գեղեցիկ տաճարին մէջ ուսկէ այնքան քաջասրտութեամբ կ՚անցնէիր։»

Երբէք յիշողութենէս չպիտի ելնէ այն առաջին նայուածքը զոր Պրիժիթ ինձ ուղղեց երբ սկսայ այս ձևով խօսիլ. ինծի անգամ սարսուռ տուաւ այս նայուածքը։

«Բայց հոգս է, ըսի մտապէս, եթէ բոլորովին իր կողմը բռնեմ, առաջին սիրուհիս պէս պիտի վարուի. զիս մատովը պիտի ցուցնէ իբր ծիծաղելի ապուշ մը, և հասարակութեան առջև ամենուն տեղ ես պատժուած պիտի ըլլամ։»

Կասկածող մարդէն դէպ ուրացող մարդը գրեթէ անջրպետ չկայ։ Ամեն փիլիսոփայ անաստուածի մ'եղբօրորդին է։ Իր անցեալ ընթացքին վրայ տարակուսիլը Պրիժիթին ըսելէն ետք ստուգապէս տարակուսեցայ, և տարակուսիլ սկսելուս պէս ալ չհաւատացի անոր անցեալ ընթացքին։

Ալ սկսեր էի նաև կասկածիլ թէ Պրիժիթ կը խաբէ զիս, Պրիժիթ որմէ օրը ժամ մը չէի զատուեր. երբեմն բաւական երկարատև բացակայութիւններ կ'ունենայի դիտմամբ, և ինքնին կը խոստովանէի թէ Պրիժիթը փորձելու համար էր բացակայիլս. սակայն բուն պատճառն ոչ այլ ինչ էր բայց եթէ կերպիւ մ'և առանց իմ գիտութեան՝ կասկածելու և ծաղրելու առարկայ մը դտնել ինձ։ Անատեն գոհ էի երբ նշմարել կը տայի իրեն թէ ոչ միայն նախանձոտ չէի, այլ նաև ալ հոգ չէի ըներ ինձ այն անհիմն երկիւղները որք ատենօք մտքէս կ'անցնէին. սակայն ասով ըսել կ'ուզէի թէ զինքը բաւական չէի յարգեր և թէ հեռաւոր չէի նախանձեր։

Ի սկզբան ես ինծի համար պահեր էի ըրած դիտողութիւնները։ շուտով հաճելի եղաւ ինձ Պրիժիթին առջևն յայտնապէս ընել այն դիտողութիւնները։

Օրինակի աղագաւ, եթէ դուրս ելնելիք պտոյտ ընելու համար, կ'ըսէի. «Այդ բօսան աղոր է. կարծեմ թէ բարեկամուհիներուս մին, այն ինչ բոզը Ճիշդ ատոր նմանն ունի։»

Եթէ սեղանն ըլլայինք. «Օ՜ն, սիրելի՛դ իմ, հին սիրուհիս իր երգը մրգեղէնի միջոցին կ'երգէր։ Կը վայլէ որ անոր հետևիս։

Եթէ Պրիժիթ դաշնակին առջևը նստէր.

«Ա՜խ, շնորհք ըրէ, նուագէ այն վալսը որ անցեալ ձմեռ նոր էր, անի աղէկ ատենս կը յիշեցնէ ինձ։

Ընթերցող, այս ընթացքս վեց ամիս տևեց. վեցը ամիս ամբողջ Պրիժիթ՝ որ զրպարտութեան, հասարակաց թեան նախատանաց ենթարկուած էր՝ պարտաւորեցաւ նաև իրմէ կրել այն ամեն անարդանքն ու թշնամանքը զոր բարկասիրտ և անգութ անտակ մը կրնայ լիուլի ընել զինքը ստակով սիրող բոզի մը։

Այս սոսկալի իրողութիւններէն ետք ուր միտքս չարչարանքով կը մաշուէր և բուն իմ սիրտս կը ջախջախէր փոփոխակի ամաստանելով և ծաղրելով, բայց վշտանալու և դէպ անցեալ վերադառնալու ցանկալով շրջ, այն իրողութիւններէն ետք, կ'ըսեմ, տարօրինակ սէրէ մը, ծայրայեղապէս զրգռուած եռանդէ մը զրգռելով սիրուհիս կուռք մը, աստուածուհի մը կը սեպէի ինձ։ Զինքը նախատելէս քառորդ մ'ետք ծունկի վրայ կը գայի. երբ ալ կը դադրէի ամբաստանելէ, ներումն կը խնդրէր. երբ ալ չէի ծաղրեր, կը լայի։

Անատեն անլուր բանդագուշանքով, երանաւէտ անդով կը համակուէի. ուրախագին վիշտով գրաւուած կ'երևայի. եռանդալի հրճուանաց սաստկութեամբը գրեթէ խելքս կը կորուսի. ինչ ըսելս, ինչ ընելս, ինչ երևակայելս չգիտի ի բրած գէշութեանս դարման տանելու համար։ Պրիժիթը զիրկս առնելով, հարիւր անգամ, հազար անգամ կրկնել կը տայի իրեն թէ կը սիրէ զիս և կը ներէ ինձ։ Կ'ըսէի թէ անիրաւութեանս ապաշխարանքը պիտի կրեմ և ուղղս պիտի ջախջախեմ եթէ դարձեալ սկսիմ գէշ վարուիլ հետը։ Սրտի այս աւիւններն ամբողջ գիշերներով կը աւէին, ուր անդադար կը խօսէի, կը լայի, Պրիժիթին ոտքին առջև կը գլորուէի, անսահման, մեղկարար և անհեղեղ սիրով մը կ'արբշռէի։ Ապա առտու կ'ըլլար, արևը կը ծագէր. կ'ընդնէի ուժաթափ, կը քնանայի, և կ'արթննայի՝ ժպիտ ի շրթունս, ամեն բան ծաղրելով և ամենին բանի մը չհաւատալով։

Այս սոսկալի հեշտութեան գիշերները Պրիժիթ կարծես չէր յիշեր թէ իր առջև կեցող մարդէն տարբեր մարդ մ'էի ես։ Երբ ներումն կը խնդրէի իրմէն, ուսերը վեր կ'ընէր, իբր թէ ուզեր ըսել ինձ. «Զգիտե՞ս որ կը ներեմ»։ Կ'զգար թէ տենդոտս ինքն ալ կը հանակուի։ Քանի՛ քանի՛ անգամ տեսայ որ հեշտութեամբ և սի-

բով գունատ՝ կ'ըսէր ինձ թէ այսպէս ըլլալս կ'ուզէր, թէ իր կեանքն էին փոթորիկները. թէ կրած վիշտերը սիրելի էին իրեն քանի որ այսպիսի փոխարէն մը կ'ընդունէր, թէ ինաւ չպիտի դանդատի մեր սիրոյ մինչև կայծին սրտիս մէջ մնալը. թէ գիտէր որ այս սիրոյ մէջ պիտի դանէր իր մահը, թէ սակայն կը յուսար որ ես անով պիտի մեռնէի. թէ վերջապէս ամէն բան՝ երբ իրմէ կը դար՝ իրեն համար լաւ էր, քաղցր էր թէ նախատինքն և թէ արտասուքը, և թէ այս զմայլելի հրապոյրներն իր դերեզմանը պիտի ըլլային։

Սակայն օրերը կ'անցնէին, և ախտս անընդհատ կ'աւելնար. չարաբաստութեան և հեգնութեան յանկարծահաս ժամերս տխուր և վէս հանդամանք մը կ'առնէին։ Ցիմարութեանցս մէջ տենդի ստուգապէս յանկարծահաս ժամերս տխուր և վէս հանդամանք մը կ'առնէին։ Ցիմարութեանցս մէջ տենդի ստուգապէս յանկարծահաս վայրկեաններ ունէի որք շանթի պէս կը հարուածէին զիս. կ'արթընայի բոլոր անդամներովս դողալով և յուրա քրտինքով ողողուն։ Զարմացման շարժում մը, անակնկալ տպաւորութիւն մը զիս տեսնողները վախցնելու չափ սարսուռ կը տար ինձ։ Պրիժիթն ալ՝ առանց սակայն զանդատելու՝ սաստիկ այլայլումի մը նշանները կը կրէր իր երեսին վրայ։ Երբ կ'սկսէի գէշ վարուիլ հետը, դուրս կ'ելնէր անմռունչ, գոց սենեկին մէջ կը մնար մինակ։ Փոքր Աստուծու, երբէք ձեռքս վրան չտարի. ամենասաստիկ բարկութեանս միջոցներուն իսկ նախապատիւ կը սեպէի մեռնիլ քան թէ դպնալ անոր։

Գիշեր մ'անձրևն ապակիները կը մտրակէր. մինակ էինք և վարագոյրներն ալ գոց։

— Զուարթ տրամադրութիւն կ'զգամ, ըսի Պրիժիթին, այլ սակայն այս սոսկալի օդը կը տրամէ զիս կամքիս հակառակ։ [Պէտք չէ անտարբեր սպասել և եթէ համամիտ ես ինձ, պիտի զբաղնունք փոթորիկին հակառակ։»

Ելայ և վառեցի այն ամէն մոմերը որք աշտանակներուն վրայ կային։ Սենեակը բաւական պզտիկ ըլլալով յանկարծ լուսաւորուեցաւ. կարծես հանդիսի յատուկ լուսաւորութեամբ մը։ Նոյն միջոցին նաև բոցաբորբոք կրակ մը (ձմեռուան մէջն էինք) սաստիկ տաքութիւն մը կը ծաւալէր սենեկին մէջ։

— Ինձ նայէ, ըսի, մինչև ընթրելու ատենն ի՞նչ պիտի ընենք։

Անատեն միտքս եկաւ որ Բարիզի մէջ բարեկենդան էր այն ժամանակ։ Թուեցաւ ինձ թէ առջևէս կ'անցնէին պուլվարներուն վրայ դէմ առ դէմ եկնող դիմակաւորաց կառքերը։ Զուարթ բազմութեան թատրոններու դուռերուն առջև բիւր աղմկալի ձայներով խօսիլը կը լսէի. լիսի պարերը, դիմակաւորներու զոյնզոյն զգեստները, զինին և յիմարութիւնը կը տեսնէի. բոլոր երիտասարդական աշխոյժս թունդ հանեց սիրտս։

— Ծպտինք, ըսի Պրիժիթին։ Մենք միայն մեզի համար ծպտած պիտի ըլլանք, ի՞նչ վնաս ունի։ Եթէ դիմակաւորի զգեստներ չունինք, ունինք ինչ որ պէտք է ծպտումի, և այսպէս տելի հաճոյաբար պիտի անցունենք ժամանակը։»

Պահարանէ մը բոսպաներ, շալեր, վերարկուներ, գօտիներ, շինծու ծաղիկներ առինք. Պրիժիթ՝ ինչպէս միշտ՝ նոյնպէս նոյն միջոցին ալ համբերատար զուարթութիւն մը կը ցուցնէր։ Երկուքնիս ալ ծպտեցանք. Պրիժիթ ուզեց ինքն անձամբ գլուխս շակել. անգոյր քսուեր և փոշուեր (poudrer) էինք. անգոյրի հարկաւոր եղածն ու փոշին զտեր էինք հին արկղիկի մը մէջ որ կարծեմ հօրաքոյրինն էր։ Վերջապէս ժամ մ'ետք ալ մէկմէկ չէինք ճանչեր։ Երեկոյեան ժամանակը երկարելով, բիւր յիմարութիւններ ընելով անցուցինք. կէս գիշերէն մէկ ժամ չափ ետք ընթրելու ատենն եկաւ։

Ամէն պահարանները բացեր, խուզարկեր էինք. անանց մին որ քովս էր՝ կիսովին բաց մնացած ըլլալով, երբ սեղանը կը նստէի ընթրելու, այն պահարանին մէջ դարակի մը վրայ նշմարեցի այն տետրակը որու վրայ խօսեցայ արդէն և որու մէջ Պրիժիթ տէպ կը գրէր։

— Խորհրդածութեանցդ հաւաքածոյն չէ այն, հարցուցի թեև երկնցնելով և տետրակը առնելով։ Եթէ անխոհեմութիւն չէ, թող ինձ որ անգամ մ'աչքէ անցունեմ գրածներդ։»

Բացի տետրակը, թէև Պրիժիթ շարժում մ'ըրաւ չթողլու համար որ բանամ. առջի երեսին վրայ սա խօսքը տեսայ.

կտակս է ասի

Ամեն բան հանդարտ ձեռքով մը գրուած էր. նախ հոն գտայ Պրիժիթին՝ տարփո հիս ըլլալէն՝ ի վեր ինձի համար կրած վիշտերուն պատմութիւնը, որ ճշգրիտ, առանց դառնութեան և բարկութեան էր։ Մինչև զինքը սիրելէ դադրիլս ամեն բանի համբերելու և զինքը լքանելէս ետք մեռնելու հաստատ որոշումը կը յայտնէր։ Իր պատրաստութիւններն եղած էին. մանրամասնաբար կ'իմացնէր իր կեանքին օր առ օր ի՛նչպէս զոհուիլը, այսինքն իր ըրած կորուստները, ունեցած յոյսերը, այն սոսկալի առանձնութիւնը ուր կը դտնուէր մինչև անգամ ծոցիս մէջ, միշտ աւելցող այն արդելքը որ կար մեր մէջ, այն անզթութիւնները զոր իր սիրոյն փոխարէն կ'ընէի, և այս մասին իր համակերպութիւնը. այս ամեն բաները պատմուած էին առանց տրտունջի. ընդհակառակն կը ջանար արդարացնել ընթացքս, վերջապէս իր անձնական գործերուն մասին պարագաներուն վրայ կը խօսէր և կը կարգադրէր իր ժառանգորդներուն վերաբերող ամեն բաները։ Պրիժիթ կ'ըսէր թէ թոյնով վերջ պիտի տար իր կեանքին։ Իր յատուկ կամքովը պիտի մեռնէր, և յատկապէս կը պատուիրէր որ իր յիշատակն երբէք պատրուակ մը չըլլայ ինձի դէմ՝ շարժումի մը։ «Ղոթք ըրէք իրեն համար». այս էր իր վերջին խօսքը։

Պահարանին մէջ մի և նոյն դարակին վրայ պզտի տուփ մը գտայ զոր արդ ն տեսեր էի. այս տուփը լի էր աղի նման բարակ և կապուտանման փոշիով մը։

— Ի՞նչ է ասի, հարցուցի Պրիժիթին՝ տուփը շուրթերս տանելով։ Սոսկալի աղաղակ մը հանեց Պրիժիթ և վրաս նետուեցաւ։

— Պրիժիթ, ըսի, մնաս բարեաւ ըսէ ինձ։ Կ'առնում այս տուփը. զիս պիտի մոռնաս և ապրիս, եթէ կ'ուզես ազատ թողուլ իս սպանութենէ մը։ Այս գիշեր իսկ պիտի մեկնիմ. և քեզմէ նեղու�չեմ խնդրեր. եթէ ներում շնորհես իսկ, Աստուած չպիտի ուզէ։ Տուր ինձ վերջին համբոյր մը։»

Ծռուեցաւ Պրիժիթին վրայ և ճակատէն պագի։

— Տակաւին ո՛չ, գոչեց Պրիժիթ սաստիկ վշտով։»

Սակայն դէպ՝ ի բազմոցին վրայ հրելով զինքը սենեակէն դուրս նետուեցայ։

Երեք ժամ ետք պատրաստ էի մեկնելու, և իջևանի ձիերը հասսեր էին։ Անձրևը տակաւին կը շարունակուէր, և կառքը մտայ առ խարխափս։ Նոյն վայրկենին կառավարը մեկնեցաւ։ Մարմնոյս երկու թեւէ սեղմուիլը և հեծկլտումի մը շուրթերուս վրայ փակիլը զգացի։

Պրիժիթն էր կառքին մէջ այսպէս զիս գրկող և լացողը։ Ամեն ճիգ թափելու ստիպելու համար զինքը որ կենայ. կառապանին գոչեցի որ կանգ առնու. երևակայութեանս ներկայող ամեն բան ըսի Պրիժիթին համոզելու համար որ կառքէն դուրս երթայ. մինչև անգամ խօսք տուի օր մը գալու և զինքը գտնելու երբ ժամանակն ուշաբորդութիւնները ջնջած պիտի ըլլային իրեն ըրած գէշութեանս յիշատակը։ Ջանք ըրի հաստատելու իրեն թէ ինչ որ երեկ եղած էր, վաղն ալ պիտի ըլլար. թէ միայն դժբաղդ կրնայի ընել զինքը, ինձ յարիլը զիս մարդասպան մ'ընել է։ Աղաչեցի, երդումներ, սպառնալիք անգամ ըրի, բայց այն միայն մէկ պատասխան տուաւ. «Դուն կը մեկնիս, զիս ալ տար, մեկնինք այս կողմերէն, թողունք անցեալը։ Ա՛լ չենք կրնար հոս ապրիլ. ուրիշ տեղ երթանք, ուր որ կ'ուզես. երթանք երկրիս մէկ անկիւնը մեռնելու։ Պէտք է որ երջանիկ ըլլանք, ես քեզմով և դու իրմով։»

Այնպիսի անհնարին եռանդով մը համբուրեցի զինքը որ կարծեցի զգալ թէ սիրտս կտոր կտոր կ'ըլլայ։

— Մեկնէ՛ ուրեմն, գոչեցի կառավարին։ Իրարու գիրկը նետուեցանք, և ձիերը արշաւակի մեկնեցան։



ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

Եթէ ամբողջութիւն մ'ընելու որոշումով Բարիզ եկեր էինք. հարկաւոր պատրաստութիւններն և կարգադրուելու գործերը ժամանակի կարօտ էին, և հարկ եղաւ կահավարդ պանդոկի մը մէջ բնակարան մը վարձու բռնել մէկ ամիսուան համար։

Ֆրանսայէն մեկնելու որոշումն ամէն բանի կերպարանքը փոխած էր. ուրախութիւնը, յոյսը, վստահութիւնը, վերջապէս ամէն բան վերածներ էին միահաղոյն. մօտալուր ուղևորութեան գաղափարին առջև ալ ոչ վիշտ, ոչ կռիւ կար։ Խնդիրն ալ լոկ երանութեան երազներու, մշանջենապէս սիրելու երգումներու վրայ էր. վերջապէս ստուգապէս կ'ուզէի սիրելի սիրուհիս մոռցնել տալ իր կրած ամէն վիշտերը։ Ինչպէս կարելի էր ինձ դիմադրել այսքան կաթոգին սիրոյ մ'և այսքան քաջարի համակերպութեան մ'այս ամէն ապացոյցներուն։ Պրիժիթ ոչ միայն կը ներէր ինձ, այլ նաև կը պատրաստուէր զոհողութիւններուն մեծագոյնը ընել ինձ և ամէն բան թողուլ՝ հետս գալու համար։ Ինձ ցոյց տուած անձնուիրութեանն անարժան ըլլալս որքան կ'զգայի, նոյնքան կ'ուզէի որ սէրս վարձատրէ զինքը. վերջապէս բարի հրեշտակս յաղթանակած էր,

և սքանչացումն ու սէրը սրտիս մէջ յաղթող կը հանդիսանային։

Պրիժիթ՝ քովս ծռուելով քարտիսին վրայ կ'որոնէր այն տեղը ուր պիտի թաղուէինք. տակաւին չորոշեր էինք այն տեղը, և այս անորոշութեան մէջ այնքան սաստիկ և նոր հաճոյք մը կը զտնէինք որ կրնայ ըսուիլ թէ տեղ մը գտնելու անկարող ըլլալ կը ձևացընէինք։

Այս որոշումներուն ժամանակ մեր ճակատներն իրարու կը հպէին, թևովս Պրիժիթին մէջքէն կը բռնէի։

«Ո՞ւր պիտի երթանք. ի՞նչ պիտի ընենք. ուր պիտի սկսի նոր կեանքը։

Ի՞նչպէս ըսեմ թէ ի՛նչ կ'զգայի երբ այսքան յոյսերու մէջը երբեմնակի գլուխս վեր կ'ընէի։ Ինչպիսի՛ զիղջ կ'ըզգայի սրտագին երբ կը տեսնէի այս գեղեցիկ և հանդարտ երեսը զոր անցեալին վիշտերը տակաւին տժգոյն կը պահէին և որ ապագային կը ժպտէր։

Երբ այսպէս կը բռնէի Պրիժիթը, և երբ նոյն միջոցին իր մատն աշխարհագրական քարտիսին վրայ կը թափառէր, մինչդեռ ցած ձայնով կը խօսէր իր գործերուն վրայ զոր կը կարգադրէր, և իր փափաքներուն ու մեր ապագայ առանձնակեցութեան վրայ, կեանքս պատրաստ էի զոհելու իրեն։ Երանութեան նպատակնե՛ր, այս աշխարհիս մէջ գուցէ միակ երանութիւնը դուք էք։

Գրեթէ ութ օրէ՛ի վեր մեր ժամանակը շրջագայելով և հարկաւոր բաներ գնելով կ'անցուցէինք երբ մեր տունն երիտասարդ մ'եկաւ որ նամակներ բերած էր Պրիժիթին։ Այս երիտասարդն անոր հետ խօսակցելէն ետք տրտում և վշտատ գտայ Պրիժիթը. սակայն այս մասին ոչ այլ ինչ կրցայ իմանալ եթէ ոչ նամակներուն ն . . .էն եկած ըլլալը. ն . . . Ճիշդ այն քաղաքն էր ուր առաջին անգամ սիրոյս վրայ խօսեր էի և ուր կը բնակէին Պրիժիթին այն ազգականներն որոնցմէ զատ ալ ազգական չուներ։

Սակայն մեր պատրաստութիւններն արագօրէն կը տեսնուէին, և սրտիս մէջ միայն մեկնելու անհամբերութեան համար տեղ կար. մի և նոյն ժամանակ զգացած ուրախութիւնս ալ վայրկեան մը հանգիստ չէր թողուր զիս։

Երբ առտու կ'ելնէի և երբ արևը մեր պատուհանները կը լու-

սաւորէր, կ'զգայի այնպիսի եռանդագին հրճուանք որք կարծես կը գինով ին զիս. անսահմն ոաքիս ծայրովը քայլելով կը մանէի այն սենեակն ուր կը նիրհէր սիրուհիս։

Շատ անգամ Պրիժիթի արթննալով զիս իր անկողնին ստորոտը գտած էր ուր ծունկի վրայ գալով իր նիրհելուն կը նայէի և արցունքս չէի կրնար զսպել. անկեղծապէս զղջացած ըլլալուս նկատմամբ զինքս համոզելու համար ինչ միջոց գործածելս չգիտէի։ Առաջին տարփուհիս վրայ ունեցած սէրս եթէ ատենօք խևութիւններ ընել տուած էր ինձ, հիմա հարիւր անգամ աւելի խևութիւններ կ'ընէի։ Կատղութեամբ կը բնուէի այն ամեն տարօրինակ և բուն բաները զոր ծայրայեղապէս սաստկացած տրիփը կը ներշնչէ։ Պրիժիթը կը պաշտէի իբր աստուածուհիս, և թէև վեց ամիսէն աւելի էր իր սիրոյն ըլլալս, ամեն անգամ որ իրեն կը կը մօտէի, կը թուէր ինձ թէ առաջին անգամն է զինքը տեսնելս. կը համարձակէի հազիւ հաղ պաղնելու այս ինկան զգեստին ծայրը, կին մ'օրու հետ այնքան ժամանակ դէշ վարուեր էի։ Իր ամենափոքր խօսքերէն սարսուռ մը կ'զգայի՝ իբր թէ ձայնը նոր ըլլար ինձի համար. մերթ իր գիրկը կը նետուէի հեծկլտալով, և մերթ քահ քահ կը խնդայի առանց պատճառի, անցեալ ընթացիցս նկատմամբ սոսկումով և պժգումով կը խօսէի միայն, և կ'ուզէի որ տեղ մը սիրոյ յատկացեալ տաճար մը գտնուէր որպէս զի մկրտութեամբ մը լուացուիմ հոն և հաղնիմ յատուկ զգեստ մը զոր այնուհետև ոչինչ կարենար վրայէս կորզել։

Թիթիէնի* սուրբ Թովմասին մատը Քրիստոսի վէրքին վրայ դնելը տեսայ, և շատ անգամ իր վրայ խորհեցայ. եթէ համարձակէի սէրը մարդու մ'առ Աստուած ունեցած հաւատքին հետ համեմատեմ, կրնամ ըսել թէ սուրբ Թովմասին կը նմանէի։ Ինչ անուն ունի այն զգացումը զոր այս անհանգարտ, տակաւին գրեթէ տարակուսող և արդէն պաշտող զլուխը կ'արտայայտէ։ Սուրբ Թովմաս վէրքը կը շօշափէ. հայհոյութիւնը զարմանալով կանգ կ'առնու իր քայլերուն վրայ ուր աղօթքը կամայ մը կը տե-

*Պատկերահան։

ղաւորի։ Առաքեալ մ'է ան. ամբարիշտ մ'է. կը զղջայ այնքան որքան թշնամանք ըրած է։ Ոչ ան, ոչ պատկերահանը, ոչ ալ գուն՝ որ կը նայիս իրեն՝ բան մը չգիտէք այս մասին. Փրկիչը կը ժպտի և ամեն բան իբր շիթ մը յօղ կը ծծուի անբաւ բարութեան մէկ ճառագայթէն։

Ես ալ ահա այսպէս Պրիժիթին առջև անմռունչ կը կենայի և կարծես անընդհատ կը զարմանայի. կը գողայի որ Պրիժիթ տակաւին երկիւղներ չունենայ և կատածոտ չըլլայ այնքան փոփոխութիւններէ ետք զոր տեսած էր յիս։ Սակայն տասնուհինգ օրէ ետք Պրիժիթ յայտնապէս քնած և տեսած էր սիրոս. հասկցաւ թէ ինքզինքն անկեղծ տեսնելով ես ալ անկեղծ եղեր էի, և որովհետև սէրս իր քաջասրտութենէն յառաջ կը զար, չտարակուսեցաւ ոչ մէկին և ոչ միւսին նկատմամբ։

Մեր սենեակը լի էր խառն 'ի խուռն հանդերձներով, ալբոմներով, մատիտներով, գիրքերով, ծրարներով, և ասոնց ամենուն վրայ միշտ տարածուած կը կենար աշխարհագրական քարտէսը զոր այնքան կը սիրէինք։ Կ'երթայինք ու կը դայինք ամեն րոպէ. կանկ կ'առնէի Պրիժիթին ոտքն ընկնելու համար, որ ծոյլ կ'անուանէր զիս, խնդալով կ'ըսէր թէ իրեն հարկ էր ամեն բան ընել, և թէ ես բոլորովին անձարակ էի. և մինչդեռ արկղերը կը պատրաստուէին, ընթերցողը կ'երևակայէ թէ ի՞նչպէս նպատակներ կը կազմէինք։ Սիկիլիա շատ հեռի էր, բայց ձմեռն որքան ախորժելի էր հոն. կլիմաներուն ամենուն բարեբաղդն է այն։ Ծէն իր նկարուն տուներովը, որմայեց ծառերով, զարդարուն դալարաղեղ պարտէզներովն և իր ետևի Արիսեան լեռներովը շատ գեղեցիկ էր։ Սակայն որքան աղմուկ, ինչպիսի՞ բազմութիւն կար հոն։ Փողոցներէն անցնող երեք մարդուն մին վանական և միւսն ալ զինուոր է։ Փիորենցան տրտմալի է, միջին դարն է որ տակաւին կ'ապրի մեր մէջ։ Ինչպէս կարելի է համբերել իր վանդակապատ պատուհաններուն և այն սոսկալի թուխ դոյնին որով բոլոր տուներն աղտոտուած են։ Հռոմ երթանք ինչ ընենք. մեր Ճամբորդութեան նպատակն ոչ շլանալ է, ոչ ալ այս կամ այն բանը ուսնիլ։ Բէն գեղեցն եզերեն երթանք սրդէօք. բայց այն կողերուն եղանակն ա՛յնքան պի-

տի ըլլար, և թէև շատ մարդերու հանդիպիլ չենք ուզեր, բայց միշտ տրտմալի բան է սնոնց դացած տեղն երթալ երբ ալ հոն չեն անոնք։ Հապա Սպանիան. հոն շատ արդելքներ պիտի կեցնեն մեզի, Սպանիայի մէջ պէտք է քայլել իբր պատերազմի ժամանակ և հանգստութենէն 'ի զատ ամեն բան աչք առնուլ։ Զվիցերի երթանք. քանի որ այնքան անձինք հոն կ'ուղևորին, թող ապուշները արհամարհեն այն երկիրը. Աստուծու ամենէն սիրելի երեք գոյներն իրենց բոլոր պայծառութեամբը հոն կը ճառագայթեն, այսինքն երկնից կապույտը, դաշտերուն կանաչութիւնը և սառնակոյտներու դաղաթին վրայի ձիւներուն սպիտակութիւնը։

— Մեկնինք, մեկնինք կ'ըսէր Պրիժիթ, թռչունի պէս թռինք։ Երևակայենք, սիրելիդ իմ Օդթաղ, թէ երեկուանէ 'ի վեր կը ճանչենք զիրար։ Պարահանդէսի մը մէջ հանդիպեցար ինձ, հաճելի երևցայ քեզ, և կը սիրեմ քեզի. կ'ըսես ինձ թէ ասկից քանի մը մղոն հեռի չգիտեմ ի՛նչ պղտի քաղքի մը մէջ տիկին Բիէրսօն մը սիրեցիր. քու և անոր մէջ անցած կացած իրողութիւններուն և ոչ իսկ կ'ուզեմ հաւատալ։ Մտերմաբար պիտի պատմես ինձ թէ ի՛նչ սիրային յարաբերութիւններ ունեցար կնիկի մը հետ զոր թողուցիր ինծի համար։ Ես ալ իմ կողմէ բոլորովին մեղմիկ պիտի ըսեմ թէ ասկից քիչ մ'ատեն առաջ սիրեցի սրիկայ մ'որ բաւական դժբաղդ ըրաւ զիս. պիտի ցաւիս իմ վրայ, պիտի հրամայես որ լռեմ, և մեր մէջ որոշում պիտի ընենք ալ այս նիւթին վրայ չխօսելու բնաւ։»

Երբ Պրիժիթ այսպէս կը խօսէր, կ'զգայի այնպիսի բան մ'որ ապահութեան կը նմանէր. երերուն թևերով կը զրկէի զինքը։

«Աստուա՛ծ իմ, կը գոչէի, չգիտեմ թէ ուրախութենէս թէ ոչ վախէս կը սարսռիմ։ Պիտի առնում տանիմ քեզի, գանձդ իմ։ Այս անբաւ հորիզոնին առջև իմս ես. հիմա պիտի մեկնինք։ Մեռնի՛ երիտասարդութիւնս, մեռնի՛ն յիշատակները, մեռնի՛ն հոգերն ու ցաւերը։ Ո՛ բարեսիրտ և քաջդ իմ սիրուհիս, աղայ մը մարդ ըլլիր. հիմակ եթէ քեզմէ զրկուիմ, ալ բնաւ սէր չպիտի կրնամ ունենալ։ Թերևս քեզի ճանչելէս առաջ ուրիշ կին մը կարող ըլլար բոյժ տալու ինձ. սակայն հիմա դուն միայն աշխարհիս մէջ

կրնաս մեռցնել կամ փրկել զիս, վասն զի քեզի ըրած ամենդէշութեանցս վէրքը սրտիս մէջն է։ Ապերախտ, կոյր և անողորմ եղայ։ Օրհնեա՛լ ըլլայ Աստուած։ Դեռ կը սիրես զիս։ Եթէ երբէք վերստին երթաս այն գիւղն ուր թմբիներուն տակ տեսայ քեզի, նայէ սա ամայի տունին. անոր տունին մէջ ուրուական մը պիտի գտնուի, վասն զի նոյն տունէն քեզի հետ դուրս ելնող մարդը ներս մտնող մարդը չէ։

— Ճշմարի՛տ է ըսածդ, կը հարցունէր Պրիժիթ, և իր գեղափայլ Ճակատը՝ բոլորովին սիրով շողշողուն դէպ երկինք կը վերցնէր անատեն. Ճշմարի՛տ է քուկդ ըլլալս։ Այո՛, հեռի ապրելով այն զարշելի ընկերութիւններէն ուր ծերացար առանց տարիքդ առնելու, այո՛, պիտի սիրես, պատանի՛ դու. իմս պիտի ըլլաս այնպէս ինչպէս որ ես, և՝ աշխարհիս որ ծայրն ալ երթանք կնանքը գտնելու՝ հոն պիտի կրնաս առանց խիղճդ տաղնապելու զիս մոռնալ այն օրն որ ա՛լ պիտի չսիրես զիս։ Պաշտօնս կատարուած պիտի ըլլայ, և հոն վերը պիտի ունենամ միշտ Աստուած մ'այս մասին իրմէ շնորհակալ ըլլալու համար։»

Այս խօսքերը տակաւին ի՛նչպիսի կսկծալի և սոսկալի յիշատակով մը կը գրաւեն զիս։ Վերջապէս որոշեր էինք նախ Ժընէվ երթալ և Ալպեան լեռներուն սառրոտը հանդարտ տեղ մ'ընտրել դարնան համար։

Պրիժիթ արդէն գեղեցիկ լճին խօսքը կ'ընէր. արդէն սրտիս մէջ կը շնչէի այն լիճը շարժող հովին շունչը և դալարագեղ հովտին աղդու հոտը. արդէն Լօզան, Վրվէյ, Օպերլան, և Բօզ լեռան գագաթներուն անդիի կողմը գտնուող Լոմպարտիայի անբաւ դաշտը, արդէն մոռացումը, հանդիստը, փախուստը, մենական երջանկաւէտ վայրերու բոլոր ոգիները մեզի կը կանչէին և կը հրաւիրէին. արդէն՝ երբ երեկոյին ձեռնամած և լուին իրարու կը նայէինք, կ'ըզգայինք թէ մեր սրտերուն մէջ կը բարձրանայ տարօրինակ վեհութեամբ լի այն զգացումն որ երկարատև ուղևորութեանց նախորդ օրերը սիրտը կը գրաւէ, գլուխի գաղտնի և անմեկնելի պատճառ մ'օր աքսորին սարսափներէն ու միանգամայն ուխտաւորութեան յոյսերէն կ'արտադրի։ Ո՛ Աստուած, անատեն բուն քու ձայնդ կը կանչէ

մարդս և կ՚իմացնէ անոր թէ քովդ պիտի գայ ան։ Մարդկային մտքին մէջ կան թեւեր որք կը սաւառին, և հնչուն թեւերը որք կը ձգտին։»

Պրիժիթ յանկարծ տխրեցաւ. գլուխը ծռեց և լուռ կեցաւ։ Երբ կը հարցնէի իրեն թէ ցաւ մ՚ունի, ոչ, կը պատասխանէր անլսելի ձայնով մը. երբ մերնեյու օրուան խօսքը կ՚ընէի, անտարբերութեամբ և համակերպութեամբ ոտք երնելով իր պատրաստութիւնները կը շարունակէր. երբ երդում կ՚ընէի թէ երջանիկ պիտի ըլլայ և թէ կ՚ուզէի կեանքս իրեն նուիրել, առանձին սենեակ մտնելով կը լար. երբ կը համբուրէի զինքը, կը տժգունէր և աչերը կը դարձնէր՝ շուրթերը ինձ երկնցնելով. երբ կ՚ըսէի թէ տակաւին ոչինչ եղած է, թէ կրնար ՚ի բաց թողուլ մեր նպատակները, ունքը կը պուստէր դժնդակ և վայրենական կերպարանով. երբ կ՚աղերսէի զինքը որ սիրտը բանայ ինձ, երբ կը կրկնէի որ երանութիւնս եթէ իրեն ցաւ պիտի պատճառէր, պիտի զոհէի այն երանութիւնը եթէ նաև մահը անս պատճառն ըլլար այս զոհը, վիզը կը նեռուէր Պրիժիթ, ապա կանգ կ՚առնուր և գիս կը հրէր կարծես ակամայ։ Վերջապէս օր մ՚իր սենեակը մտայ ձեռքս բռնելով տոմսակ մ՚որու վրայ նշանակուած էին Պրանսօնի կառքին մէջ մեր նստելու տեղերը։ Մօտեցայ Պրիժիթին, տոմսակը իր ծունկին վրայ դրի, թեւերը երկնցուց ան, աղաղակ մը հանեց, և նուաղելով ընկաւ ոտքիս քով։

ԳԼՈՒԽ Բ

Այս անակնկալ փոփոխութեան պատճառը գուշակելու համար ըրած ամէն ջանքս ապարդիւն մնացած էր ինչպէս նաև այն ամէն հարցումները զոր կրցեր էի ընել։ Պրիժիթ հիւանդ էր և լուռ կը կենար յամառութեամբ։ Մերթ իր միաքը բացատրելը աղերսելով, մերթ ենթադրութիւններով յոգնելով ամբողջ օր մ՚անցուցեր էինք դուրս ելեր էի ուր երթալս առանց դիտնալու։ Երբ Օբերայի քովէն կ՚անցնէի, գործակալ մը տոմսակ մը տուաւ ինձ, և մեքենայաբար թատրոնը մտայ, ինչպէս սովորեր էի մտնելու։

Չէի կրնար ուշադրութիւն ընել ոչ թատերաբեմին վրայ և ոչ սրահին մէջ անցած իրողութեանց. կարի դառնապէս ցաւած ու միանգամայն ապշած ըլլալով կրնայ ըսուիլ թէ ես յիս կ՚ապրէի, և թէ արտաքին առարկաները կարծես այլ գոյարանայս ազդեցութիւն չունէին։ Բոլոր ոյժերս ամփոփուելով կ՚ուզէի գէպ՚ի մէկ խորհուրդ, և այս խորհուրդը թէև շատ կը յուզէի մտքիս մէջ, բայց և այնպէս փոխանակ բան մը տեսնել կարենալու ալ աւելի պղտոր կ՚երևար ինձ միաքս։ Սոսկալի արդեւք մը յանկարծ վրայ հասնելով մեր ուղևորութեան առջի օրն այսպէս կը տապալէր այնքան նպատակներ և յոյսեր։ Այս արդեւքն եթէ սովորական դէպք մը կամ ճշմարիտ դժբաղդութիւն մ՚էր անպամ, ինչպէս է դրամատան կորուստ մը կամ բարեկամի մը մահը, ինչ հարկ այսպէս յամառութեամբ լռելու։

Այն ամէն բաներէն ետք զոր Պրիժիթ ըրած էր և ճիշդ այն միջոցին ուր մեր սիրելապոյն երազները կատարուելու մօտ կ՚երևային, ինչ տեսակ կրնար ըլլար այն գաղտնիքն որ մեր երանութիւնը կը ջնջէր և զոր Պրիժիթ չէր ուզեր յայտնել ինձ։ Ինչ. Պրիժիթ ինծի չբացաւ։ Եթէ իր վիշտերը, եթէ իր գործերը, ապագային նկատող վախն իսկ, արատութեան, անտարտութեան կամ բարկութեան չկիտեմ ինչպիսի պատճառ մ՚եթէ ժամանակ մը հոս կը կեցնէին զինքը կամ կը հարկադրէին բոլորովին հրաժեշտ տալու այս կարի ցանկալի ճամբորդութեան, ինչ պատճառաւ չէր բացուեր ինձ։ Սակայն սրտիս այն օրուան վիճակին մէջ չէի կրնար ենթադրել թէ իր այս ընթացքը պարսաւելի բան մ՚ունէր։ Կասկածի մ՚երևոյթն իսկ զայրոյթ և ոյժգում կը տար ինձ։ Բայց միւս կողմէն ալ ինչպէս կարծէի թէ լոկ անհաստատութիւն կամ քմահաճութիւն մ՚էր այս կնկան ընթացքը, քանի որ կը ճանչէի իր ինչ կին ըլլալը։ Ընդունդի մը մէջ կը կորսուէի, և այս անդունդին մէջ չէի տեսներ ամենատկար նշոյլ մ՚անգամ, ամենափոքր կէտ մ՚իսկ որու վրայ կարենայի կռթնիլ։

Դիմացի կողմն վերնատունը երիտասարդ մը կար որու դէմքն անծանօթ չէր ինձ։ Ինչպէս սակայն կը պատահի մտահոգ մարդուն, այն երիտասարդին կը նայէի առանց դիտնալու թէ ո՞վ է, և կը

ջանայի երիսին պէս անունն ալ ճանչել։ Յանկարծ ճանչեցի այս երիտասարդը. ասի այն անձն էր որ՝ ինչպէս ըսի ասկից առաջ՝ Պրիժիթին նամակներ բերած էր Ն . . . էն։ Արագօրէն ելայ՝ քովն երթալու և հետը խօսելու համար՝ առանց մտածելու թէ ի՞նչ կը-նէի։ Անի նստած էր այնպիսի տեղ մ՚ուր չէի կրնար հասնիլ առանց անհանգիստ ընելու բազմաթիւ հանդիսականներ, և ստիպու

թէ աղատ և այրի կին մ'ըլլալովը հանդերձ դարձեալ պարտական էր պատասխանատու ըլլալու այն անունին զոր կը կրէր. թէ ինչպէս իրենք նոյնպէս իր հին բարեկամներուն և ոչ մին այսու հետև իր երեսը չպիտի տեսնէին եթէ սնդէր մեկնիլ հետս. վերջապէս ամեն տեսակ սպառնալիքով և խրատներով զինքը կ'սարսափէին իր երկիրը վերադառնալու։

Այս նամակին եղանակը սրամտութիւն պատճառեց ինձ, և նախ միայն թշնամանք նկատեցի անոր մէջ։

— Եւ այս յանդիմանական խրատները քեզ բերող երիտասարդը, զոչեցի, անշուշտ պաշտօն ունի բանի բերանոյ խրատելու քեզի, և այս պաշտօնը կը կատարէ, այնպէս չէ։

Պրիժիթին սաստիկ տրտմութիւնը ղիս պարտաւորեց խորհելու և բարկութիւնս մեղմեց։

— Պիտի ընես ինչ որ ուզես, պատասխանեց, և բոլորովին պիտի կործանես զիս։ Ահա բաղդս ձեռքիդ մէջն է, և արդէն երկար ատենէ 'ի վեր անոր տէրն ես։ Ուզած կերպովդ վրէժ առ այն յետին ջանադրութեան փոխարէն զոր հին բարեկամներս կ'ընեն որպէս զի խելքս նորէն գլուխս բերեն, վերստին ընկերութեան ծոցը կանչեն զիս զոր ատենօք կը յարգէի և տան ինձ այն պատիւը զոր կորուսի։ Ամենեին ըսելիք չունիմ քեզ, և եթէ կ'ուզես իսկ պատասխանեմ ինչ կերպով որ պիտի ուզես։

— Բան մը չեմ ուզեր ամենեին, միայն գիտաւորութիւնս գիտնալ կ'ուզեմ, պատասխանեցի. ընդհակառակն ինձ կը պատկանի անոնց համեմատ վարուիլ, և կ'երդնում թէ պատրաստ եմ բոլոր այնմ վարուելու։ Ըսէ ինձ թէ կը մնամ, թէ կը մեկնիմ, կամ թէ պէտք է որ մինակս մեկնիմ։

— Ինչու այդ հարցումը կ'ընես, հարցուց Պրիժիթ. ըսի՞ քեզ թէ միտքս փոխած եմ։ Տկար եմ և չեմ կրնար այսպէս մեկնիլ, բայց բոյժ դանելուս կամ միայն երթալու կարողութիւն ունենալուս պէս ժամանակ պիտի երթանք մեր արդէն ըրած որոշումին համեմատ։

Այս խօսքերէն ետք զատուեցանք. և մերժում մ'ոչ այնքան պիտի տրամէր զիս որքան տրամեցայ այն անտարբերութեան վրայ որով Պրիժիթ այն խօսքերը ըսաւ ինձ։ Առաջին անգամը չէր որ այս

ազդարարութիւններով մեր յարաբերութիւնը կարելու կը ջանային. սակայն այս տեսակ նամակներ որքան ալ տպաւորութիւն ընէին Պրիժիթին վրայ, մինչև անատեն շուտով թօթափեր էր ամեն տպաւորութիւն։ Ինչպէս հաւատայի թէ միայն այս պատճառն այսօր այնքան զօրութիւն ունէր իր վրայ քանի որ նուազ երջանիկ օրերու մէջ չկրցած էր ամենեին տպաւորութիւն ընել իր վրայ։ Կ'աշխատէի միտքս բերելու թէ Բարիզ գանուելէս 'ի վեր ապրդեօք ընթացքիս մէջ մեղադրութեան արժանի բան մը կա՞ր։

«Ասի արդեօք խելքին փչածը ընել ուզող և սակայն գործադրութեան միջոցին իր կամքին առջև ընկրկող կնիկի մը լոկ տկարութիւնն է. Պրիժիթին այս ընթացքը մի գուցէ ըլլայ ինչ որ՝ ըստ անառակաց՝ յետին խղճահարութիւն մը կ'անուանի։ Սակայն անկեղծ էին, ճիշդ էին, բոլորովին աղատակամ էին այն զուարթութիւնը զոր ութ օր առաջ Պրիժիթ ցոյց կը տար առաւօտէն մինչև իրիկուն, այն ամենաբաղդը նպատակները որք անընդհատ կը կազմուէին և կը ձգուէին, ինչպէս նաև իր ամեն աւետիքն ու խոստումները։ Պրիժիթ կ'ուզէր մեկնիլ իմ կամքիս հակառակ իսկ։ Հէ, ասոր մէջ գաղտնիք մը կայ. բայց ինչպէս իմանայի այս գաղտնիքը քանի որ հիմա՝ երբ հարցունեմ իրեն՝ կը տայ ինձ պատասխան մ'որ չկրնար ճշմարիտն ըլլալ։ Հեմ կրնար ըսել իրեն թէ կը ստէ, ոչ ալ բռնադատել զինքն ուրիշ պատասխան տալու։ Կ'ըսէ թէ միշտ կ'ուզէ մեկնիլ. բայց քանի որ այս կերպով կ'ըսէ, չեմ պարտաւորիր բոլորովին մերժել։ Արնամ այսպիսի զգոյշութիւն մը ընդունիլ երբ իրը յատուկ գործ մը, իրը վճիռ մը կը կատարուի այն, երբ կարծես թէ տրուած խօսքէն կը պահանջեմ ինչ որ կը կարծէի թէ սէրն ընծայած էր ինձ։ Ո՛ Աստուած, ուրեմն այս գանատ և նուազուն արարածը պիտի տանիմ գիրկս առած։ Ո՞չ ապաքէն համբերատար նահատակուհի մ'է միայն այն արարածը զոր այնքան երկար ժամանակ, թերևս մինչև 'ի մահ հայրենիքէն բոլորովին հեռի պիտի տանիմ։ Հաճոյիցդ համեմատ պիտի վարուիմ, կ'ըսէ Պրիժիթ։ Հէ, անշուշտ հաճոյք մը չպիտի ըլլայ ինձ համբերութենէն բան մ'ուզել, և եթէ լռէ Պրիժիթ, նախապատիւ կը համարիմ առանձին մեկնիլ քան թէ միայն շաբաթ մ'անգամ տեսնել այս վշտաբեկ երեսը։»

Ո՛րքան անմիտ էի. առանձին մեկնելու ոյժն անգամ ունէի։ Տառնուհինգ օրէն 'ի վեր այնքան երջանիկ էի որ ստուգիւ չէի համարձակեր ետ նայելու, և ոչ միայն չէի զգար մինակս երթալու արիութիւնը, այլ նաև Պրիժիթը հետս տանելու միջոցներուն վրայ կը խորհէի։ Գիշերն անցուցի առանց աչքս խփելու, և հետևեալ օր խիստ կանուխ որոշէցի՝ ինչ կ'ուզէ թող ըլլայ ըսելով երթալ այն երիտասարդին տունը զոր Օբերայի թատրոնը տեսեր էի։ Զգիտեմ թէ զիս դէպ իր տունը մղողը բարկութիւնն էր կամ թէ հետաքրքրութիւնը, չգիտեմ նաև թէ իրօք ինչ կ'ուզէի իրմէն. բայց կը խորհէի թէ այս կերպով գէթ այն երիտասարդը չէր կրնար խոյս տալ իրմէ, և իմ աղ փափաքս այս էր միայն։

Զգիտնալով անոր ուր բնակիլը, Պրիժիթին տունը մտայ հարցնելու համար, պատրուակ բռնելով քաղաքավարական պարտք մ'այն ամեն այցելութիւններու փոխարէն զոր մեզ ըրած էր այն երիտասարդը, վասն զի իրեն բան մը չըսեր էի թատրոնին մէջ անոր հանդիպած ըլլալուս նկատմամբ։ Պրիժիթ անկողնին մէջն էր, և իր յոգնաբեկ աչերն անոր լացած ըլլալը կ'իմացնէին։ Երբ մտայ, ձեռքը երկնցնելով ինձ՝ ըսաւ.

— Ինչ կ'ուզես իրմէ։

Տրտմալի, բայց սիրաւետ էր ձայնը։ Քանի մը բարեկամական խօսք ըսինք իրարու, և դուրս ելայ՝ սրտիս մէջ նուազ տրտմութիւն կրելով։

Սմիթ կ'անուանէր և մօտակայ տեղ մը կը բնակէր այն երիտասարդն որու այցելութիւն պիտի ընէի։

Իր դուռը զարնելով չգիտեմ ինչպիսի՛ վրդովում մը գրաւեց իս։ Յառաջեցի յամրաբար և կարծես անակնկալ ըլլսէ մը յանկարծ զարնուելով։ Արիւնս սառեցաւ Սմիթին առաջին շարժումէն։ Պառկած էր ան, և ճիշդ այն ձայնով որով Պրիժիթ պահ մ'առաջ հարցուցած էր ինձ, ճիշդ անոր գունատ և տրտմաբեկ երեսին պէս երեսով մը ձեռքն ինձ երկնցուց զիս տեսնելով և մի և նոյն խօսքը ըսաւ. «Ինչ կ'ուզես իրմէ»։

Ընթերցողն ի՛նչ կ'ուզէ թող ըսէ, կեանքին մէջ կան դիպուածներ որոնց մարդս չկրնար խելք հասցնել։ Նստայ առանց կրնալու

պատասխան տալ, և կարծես երազէ մ'արթնցողի պէս՝ ես ինձ կրկնեցի այն հարցումը զոր ըրած էր Սմիթ։ Իրօք ի՞նչ ընելու եկեր էի իր տունը. ինչպէս ըսէի ի՛նչ պատճառաւ եկած ըլլալս։ Ենթադրելով թէ օգուտ մ'ունենար ինձ իրեն հարցափորձ ընելը, ինչպէս դիտնայի թէ կ'ուզէր խօսիլ։ Նամակներ բերած էր և դրողները կը ճանչէր, բայց ես ալ իրեն չափ չգիտէի այս բաները Պրիժիթ նամակին մէկը ինձ ցոյց տալէն ետք։ Ծանր կը դար ինձ հարցումներ ընել երիտասարդին, և կը վախնայի որ չզուշակէ սրտէս անցածը։ Քաղաքավարական և անշան եղան առաջին խօսքերը զոր իրարու ըսինք։ Շնորհակալ եղայ իրմէն տիկին Բիէրսօնին ազգականաց յանձնարարութիւնները իր վրայ առած ըլլալուն համար. ըսի որ Ֆրանսայէն մեկնելով մենք ալ մեր կողմէն կ'աղաչէինք զինքը մեզ քանի մ'աղէկութիւն ընելու. ապա լուռ կեցանք, զարմանալով մեր դէմ առ դէմ գտնուելուն վրայ։

Բոլորտիքս կը նայէի շփոթած անձերու պէս։ Զորրորդ գաստիկոնն էր այն սենեակն ուր կը բնակէր այս երիտասարդը. հոն ամեն բան պարկեշտ և աշխատասէր աղքատութիւն մը կը յայտնէր. սենեկին մէջ բոլոր գտնուածներն էին քանի մը գիրք, երաժշտութեան քանի մը գործիք, սպիտակ փայտէ շրջանակներ, օթոյով ծածկուած սեղանի մը վրայ կարգաւ դրուած թուղթեր, հին թիկնաթոռ մ'և քանի մ'աթոռ. բայց ամեն բան մաքրութեան և խնամքի երևոյթ մը կը կրէր, և այս պատճառաւ այն կահկարասիներուն բոլորը մէկ ախորժելի կ'երևար։ Իսկ երիտասարդին անկեղծ և վառվռուն կերպարանքը նախ իր նկատմամբ նպաստաւոր տպաւորութիւն կը տար դինքը տեսնողին։ Զմինէ՝ այն վրայ հասակաւոր կնիկի մը պատկերը նշմարեցի. մոտախոհելով այս պատկերին մօտեցայ, և երիտասարդն ըսաւ թէ իր մայրն էր ան։

Անատեն յիշեցի թէ Պրիժիթ ստէպ այս երիտասարդին խօսքն ըրած էր հետս, և յիշողութեանս մէջ արթնցան հազար ու մէկ մանր պարագաներ զոր մոռցեր էի։

Պրիժիթ Սմիթը կը ճանչէր իր մանկութեան հասակէն 'ի վեր։ Ես տակաւին այս երկիրը չեկեր էի մինչդեռ ան երիտասարդին հետ կը տեսնուէր ն . . . ի մէջ. սակայն գալէս 'ի վեր անգամ մը միայ

գացած էր այն ՝քաղաքը, և այն միջոցին Սմիթ հոն չէր։ Ուստի այս երիտասարդին վրայ պատահարար քանի մը մասնաւոր պարագաներ իմացեր էի որք սակայն զարմանք տուեր էին ինձ։ Իր բոլոր գոյքն էր միջակ պաշտօն մ՚որու շնորհիւ անի մայր մը և քոյր մը կը խնամէր։ Կանանց նկատմամբ իր այս ընթացքն ամենամեծ գովեստներու արժանի էր. ամէն բանէ կը զրկուէր անոնց համար, և իրը երաժիշտ թէև ունէր քանի մը թանկագին տաղանդներ որք կրնային հարստութիւն բերել իրեն, սակայն ծայրայեղ ուղղասիրութենէ և զգուշաւորութենէ մը դրդուելով միշտ լաւագոյն սեպած էր հանգստութիւնը քան թէ յաջողութեան հաւանականութիւնները որք ներկայուեր էին իրեն։ Վերջապէս Սմիթ այն սակաւաթիւ անձերու կարգէն էր որք առանց աղմուկի կ՚ապրին և իրենց արժանեաց ուրիշներէ շնչմարուիլը երախտիք մը կը սեպեն և ասոր փոխարէն շնորհակալ կ՚ըլլան անոնց։

Իր վրայօք պատմուեր էին ինձ ինչ ինչ իրողութիւններ որք կը բաւեն մարդ մը նկարագրելու. իր դրացիներէն գեղանի աղջկի մը սիրահարն եղած էր, տարիէ մ՚աւելի սիրով ու խնամքով դեգերելէն ետք, կը հաւանէին աղջիկն իրեն տալու։ Երիտասարդին պէս աղքատ էր պատանուհին։ Ամուսնական դաշնագիրը ստորագրուելու վայրկեանը եկած և հարսանեկան պատրաստութիւնը տեսնուած էր երբ մայրն ըսաւ տղային.

«Հապա քոյրդ ո՞վ պիտի կարդէ։»

Այս խօսքը միայն հակցուց իրեն որ եթէ կարդուի, աշխատութեանը բոլոր արդիւնքը իր ընտանիքին համար ծախս պիտի ընէ, և թէ հետևաբար քոյրն անօժիտ պիտի մնայ։ Ուստի իսկոյն դադրեցուց ինչ որ սկսուած էր և արիաբար իր ամուսնութեան և սիրոյն հրաժեշտ տալէն ետք Բարիզ եկաւ և ստացաւ այն պաշտօնը զոր կը վարէր։ Այս իրողութիւնը կը պատմուէր այն գաւառին մէջ, և ես երբէք չլսեր էի սոյն պատմութիւնը առանց ճանչելու ուզելու անոր դիւցազնը։ Այս հանդարտ և անյայտ անձնուիրութիւնը պատերազմի դաշտերուն ամէն փառքերէն աւելի հիանալի երևած էր ինձ։ Մօրը պաակերը տեսնելով իսկոյն յիշեցի զան, և երբ նորէն Սմիթին նայեցայ, զարմացայ զինքն այնքան դեռահասնելով։ Զկրնալով համբերել, հարցուցի թէ քանի տարեկան էր։ Ինձ հասակակից էր։ Ժամն ութ զարկաւ, և Սմիթ ելաւ.

Առաջին քայլերն առնելով երերալը տեսայ. Սմիթ դլուխն օրեց։

— Ի՞նչ ունիս, ըսի։»

Պատասխանեց թէ գրատուն երթալու ժամն էր, և թէ քայլելու ոյժ չէր զգար իր վրայ։

— Հիւանդ ես։

— Ջերմ ունիմ, և սոսկալի կը տառապիմ։

— Երեկ գիշեր աւելի աղէկ էիր. կարծեմ Օբերայի թատրոնը տեսայ քեզի։

— Ներէ՞ քեզի ճանչցած չըլլալս։ Այն թատրոնը կը յաճախեմ, և կը յուսամ վերստին հոն գտնել քեզի։

Որքան կը զննէի այս երիտասարդը, այս սենեակը, այս տունը, այնքան կը վհատէի այցելութեանս բուն առարկային վրայ խօսք բանալու։ Առջի օրը կարծեր էի թէ ան կրցած էր Պրիժիթին իմ վրայ ունեցած համարումը նուազել, հիմակ այս կարծիքն անհետ կ՚ըլլար իմ կամքի հակառակ. իր վրայ կը գտնէի անկեղծութեան ու միանգամայն անաչառութեան այնպիսի հով մ՚որ զիս կը կեցընէր և պատկառանք կը տար ինձ։ Սակաւ առ սակաւ դաղափարներս ուրիշ ուղղութիւն մը կ՚ստանային. ուշադիր կը նայէի Սմիթին և թուեցաւ ինձ թէ ինքն ալ իր կողմէն զիս կը դիտէր նոյնքան հետաքրքրութեամբ։

Երկուքնիս ալ քսանմէկ տարեկան էինք, բայց ի՞նչ տարբերութիւն մեր մէջ։

Սմիթ սովորած էր այնպիսի կեանքի մ՚որու շարժումները ժամացոյցի մը կարգադրուած ձայնին համեմատ տեղի կ՚ունենային. աշխարհիս մէջ միայն մէկ բան տեսած էր, այսինքն առանձնական սենեկի մը դէպ՝ի պաշտօնատան մէջ թաղուած գրատուն մը տանող ճանբան, մօրը կը զրկէր խնայողութեան արդիւնքն իսկ, մարդկային ուրախութեան այն արծաթը զոր ամէն աշխատող ձեռք այնքան ագահութեամբ կը պահէ. կը գանգատէր գիշերուան մը տառապանքէն վասն զի այս պատճառաւ օրուան մը վաստակէ կը զրկուէր. միայն մէկ խորհուրդ, միայն մէկ շահ ունէր որ էր ու-

բիշի մը շահուն վրայ հսկել, և այս հսկումը սկսած էր իր մանկութենէն 'ի վեր։ Իսկ ես ինչ ըրեր էի այս թանկագին, վաղանց, անողոքելի ժամանակը, ինչպէս անցուցեր էի այս արտասուք խմող ժամանակը, մարդ մ'էի։ Մեր երկուքին ոչն ապրած էր։

Երեսի մը մէջ այս ամէն գրածներս զգալու համար հարկ եղաւ անգամ մ'իրարու նայիլ միայն։ Մեր աչերն նոր հանդիպեր էին իրարու, և չէին զատուեր։ Սմիթի ուղևորութեանս վրայ խօսեցայ, նաև այն քաղքին նկատմամբ ուր պիտի երթայինք։

— Ե՞րբ կը մեկնիք, հարցուց։

— Չգիտեմ. տիկին Բիէրսօն հիւանդ, և երեք օրէն 'ի վեր անկողին պառկած է։

— Երե՛ք օրէն 'ի վեր, կրկնեց ակամայ շարժումով մը։

— Այո՛, քեզ զարմանք տալու ինչ կայ։

Սմիթ ելաւ և վրաս յարձակեցաւ թեատարած և ակնայեռ։ Սոսկալի սարսուռ մը դողացուց զինքը։

— Ցաւ կ'զգա՞ս, ըսի՝ ձեռքը բռնելով։

Սակայն մի և նոյն միջոցին Սմիթ ձեռքն երեսը տարաւ, և՝ չկրնալով զսպել արտասուքը՝ յամրաբար իր անկողինը դնաց դժուարութեամբ։

Իրեն կը նայէի զարմանքով. իր ջերմին բուռն գրգռութիւնը յանկարծ տապալած էր զինքը։ Վարանեցայ երիտասարդը այս վիճակին մէջ ձգելու, և նորէն քովը դարձի։ Ուժգնակի և կարծես տարօրինակ սարսափով մ'ետ հրեց զիս։ Երբ վերջապէս ուշաբերեցաւ տկար ձայնով մ'ըսաւ։

— Ներէ՛. քեզի ընդունելու կարողութիւն չունիմ։ Բարեհաճէ մինակ ձգելու զիս. երբ բաւական ոյժ պիտի զգամ, պիտի գամ այցելութեանդ փոխարէն շնորհակալ ըլլալու քեզմէ։

ԳԼՈՒԽ Գ

Պրիժիթ աւելի աղէկ կ'երթար։ Ինչպէս ըսած էր ինձ, առողջանալէն անմիջապէս ետք ուզած էր մեկնիլ։ Սակայն հակառակեր

էի իր կամքին, և կը պարտաւորէինք տակաւին տանուհինդ օրի չափ սպասել որպէս զի կարող ըլլար ուղևորութեան դիմանալ։

Պրիժիթ միշտ տրտում և լռին այլ սակայն բարեսէր էր։ Թէև ամէն ջանք ըրի համոզելու համար զինքն որ անկեղծաբար խօսի, բայց ինք կ'ըսէր թէ թաղծութեանը միակ պատճառն էր այն նամակը զոր ցոյց տուած էր ինձ, և կ'աղաչէր որ ա՛լ այս նիւթին վրայ խօսք չբանամ։ Այսպէս ես ալ իրեն պէս լռելու պարտաւորելով 'ի նանիր կը ջանայի դուշակելու թէ ինչ կ'անցնէր իր սրտէն։ Առանձնապէս խօսակցիլը ծանր կը դար իրեն։ ալ, ինձի ալ, ուստի ամէն դիշեր թատրոն կ'երթայինք։ Հոն օթեկի մը ներսը քով քովի նստած՝ երբեմնակի մեր ձեռները կը սեղմէինք փոխադարձապէս, մերթ ընդ մերթ երաժշտութեան եղանակ մը, մեր ուշադրութիւնը գրաւող խօսք մը մեզի կը պարտաւորէր իրարու նայիլ բարեկամաբար. սակայն ինչպէս գալու նոյնպէս և ետ դառնալու ատեն անմռունչ և մեր մտմտուքովը գրաւուած էինք։ Օրը քսան անգամ ինքզինքս պատրաստ կ'զգայի իր ոտքը նետուելու և իրը շնորհք մը խնդրելու որ կամ մահուան վճիռը տայ և կամ վերադարձնէ ինձ այն երանութիւնը զոր ընդնշմարեր էի. այսպէս վարուելու ժամանակ քսան անգամ տեսեր էի իր դէմքին այլայլիլը. Պրիժիթ կ'ելնէր և քովէս կ'երթար, կամ սառնաբոյր խօսքով մը սիրտս շուրթերուս վրայ կը կեցնէր։

Սմիթ գրեթէ ամէն օր կը գար։ Թէև ամէն դէշութեան պատճառ անոր մեր տունը գալն էր, և թէև իրեն ըրած այցելութիւնս տարօրինակ կասկածներ ձգած էր միտքս, սակայն մեր ուղևորութեան նկատմամբ իր խօսելուն կերպը, իր անկեղծութիւնն ու պարզութիւնը վստահութիւն կը տային ինձ իր նկատմամբ։ Խօսեր էի իրեն այն նամակներուն վրայ զոր բերած էր, և խօսելուս համար անի չէ թէ առնուած այլ իզմէ աւելի տրտում երևած էր։ Նամակներուն պարունակութեանը մասին տեղեկութիւն չունէր, և Պրիժիթին հետ ունեցած հին բարեկամութեանը պատճառաւ յանցանք կը սեպէր իրեն այն նամակները բերած ըլլալը։ Եթէ գիտնայի այն գիրերուն պարունակութիւնը, չէի բերեր զանոնք, կ'ըսէր Սմիթ։ Կը տեսնէի որ տիկին Բիէրսօն զգուշաբար կը խօսէր անոր հետ,

ուստի չէի կրնար կարծել թէ մտերմապէս վստահած ըլլայ երիտասարդին։ Ուստի հաճուելեմբ կը տեսնէի Սմիթը, թէև իրաւ է որ միշտ տեսակ մը նեղութիւն և քաղաքավարական ձևեր կային մեր մէջ։ Յանձն առած էր՝ մեր մեկնելէն ետք՝ Պրիժիթին և ասոր ընտանեացը մէջ միջնորդ ըլլալ և աղմկալի դժտութեան մ՝առջևն առնուլ։ Այս բանակցութեան մէջ քիչ կարևորութիւն չպիտի ունենար այն համարումը զոր քաղաքին մէջ կը վայելէր Սմիթ, ուստի չէի կրնար այս մասին շնորհապարտ չըլլալ իրմէն։ Ոչ ոք Սմիթին պէս ազնիւ բնաւորութիւն մ՝ունէր։

Երբ ինք, Պրիժիթ և ես միասին գտնուէինք, եթէ ցրտութիւն կամ նեղութիւն մը նշմարէր, կը տեսնէի որ ամեն ջանք 'ի գործ կը դնէր վերստին մեզ զուարթութիւն տալու համար. եթէ մեր մէջ տեղի ունեցող իրողութեան նկատմամբ վրդոված երևար, իր վրդովումը միշտ առանց անխոհեմութեան և մեր երջանիկ ըլլալը տեսնելու փափաքիլը հասկցնելու կերպով կ'երևար. եթէ մեր սիրային յարաբերութեան վրայ խօսէր, կրնայ ըսուիլ թէ յարգանք և սէրը Աստուծու առջև նուիրական կապ մը սեպող մարդու մը պէս կը խօսէր. վերջապէս տեսակ մը բարեկամ էր ան, և անթերի վստահութիւն մը կը ներշնչէր ինձ։

Սակայն և այնպէս, մանաւանդ ջանադրութիւն ընելովը հանդերձ Սմիթ տրտում էր միշտ, և չէի կրնար յաղթել տարօրինակ դաղափարներու որք զիս կը գրաւէին։ Խռովութիւն և վրդովում կը պատճառէին ինձ իր արցունք թափելը՝ զոր տեսեր էի, ճիշդ սիրուհիս հիւանդութեանը միջոցին իր ալ հիւանդանալն և այն մելամաղձային համակրութիւնը զոր կը կարծէի տեսնել անոնց մէջ։ Դեռ ամիս մ՝առաջ եթէ ամենափոքր կասկածներ ունենայի, բուռն նախանձոտութեամբ պիտի յուզուէի. բայց հիմակ ինչ բանի նկատմամբ կասկածէի Պրիժիթին դէմ։ Ինչ կ'ուզէր ըլլար այն դաղտնիքը զոր իզմէ կը պահէր, ոչ ապաքէն պատրաստ էր հետս մեկնելու։

Եթէ նաև կարելի ըլլար Սմիթին խմացած ըլլալ դաղտնիք մը որ իզմէ կը պահուէր, ինչ տեսակ կրնար ըլլալ այն դաղտնիքը։ Ինչ պախարակելի բան կրնար ըլլալ անոնց տրտմութեան և բա-

րեկամութեան մէջ։ Պրիժիթ ճանչած էր Սմիթը երբ սա տակաւին տղայ էր. Գրանսայէն մեկնելու միջոցին՝ երկար տարիներէ ետք՝ վերսին կը տեսնէր զան. անսեհ կացութեան մը մէջ կը գտնուէր Պրիժիթ, և դիպուածն ուղած էր իր այս ապաբաղդութիւնը Սմիթին իմացնել, նաև իսկ Պրիժիթին յուսի ճակատագրին իրը գործի ծառայեցնել զան։ Անոնց երբեմնակի իրարու տրտմապէս նայիլը, այս երիտասարդը տեսնելու առթիւ անցեալը յիշելը, քանի մը յիշատակներ և քանի մը ցաւեր միտքը բերելը բնական բան չէր։ Երիտասարդը նոյնպէս կրնար անոր մեկնիլը տեսնել առանց վախի, առանց ակամայ յիշելու երկարատև ճամբորդութեան մը դիպուածները, և կեանքի մը վտանդները, այնպիսի կեանքի մ՝որ այնուհետև թափառական, դրեթէ տարադիր և լքուն պիտի անցնէր։ Անշուշտ այսպէս ըլլալ պէտք էր, և երբ կը խորհէի այս պարագաներուն վրայ, կ'զդայի թէ ինձ կը պատկանէր ելնել, անոնց միջնորդն ըլլալ, զանոնք քաջալերել և պարտաւորել ինձ վստահելու, Պրիժիթին ըսելու թէ թեւս պիտի պաշտպանէր զինքը որքան որ ուզէր կռթնիլ անոր վրան, միւսին ալ ըսելու թէ երախտագէտ էի այն բարեկամութեան համար զոր ցոյց կը տար մեզ և այն ծառայութեանց փոխարէն զոր պիտի մատուցանէր մեզ։ Կ'զդայի իմ այս պարտքը և չէի կրնար կատարել։ Մահարոյր ցուրտ մը սիրտս կը ճմլէր և թիկնաթոռիս վրայ կը մնայի։

Երբ երեկոյին Սմիթ կը մեկնէր, կը լռէինք կամ իր վրայ կը խօսէինք։ Զգիտեմ ինչ տարօրինակ հրապոյր մը զիս կը հարկադրէր ամեն օր այն երիտասարդին վրայ նորանոր տեղեկութիւններ ուզելու Պրիժիթէն։ Սակայն սիրուհիս միայն այնքան տեղեկութիւն կրնար տալ ինձ որքան արդէն յայտնի է ընթերցողին։ Սմիթին կեանքը միշտ ոչ այլ ինչ եղած էր բայց եթէ ինչ որ էր, այսինքն աղքատ, անշուք և համեստ։ Քանի մը խօսք կը բաւէր այս կեանքը կատարեալապէս նկարագրելու. բայց այն քանի մը խօսքը կրկնել կը տայի անդադար և առանց դիտնալու թէ ինչու կարևորութիւն կը տայի անոնց։

Սմիթին կեանքի պատմութիւնը պարունակող այն քանի մը խօսքերուն վրայ երբ կը խորհէի, կ'զդայի թէ սրտիս մէջ թագուն

վիշտ մը կար զոր չէի խոստովաներ։ Եթէ այս երիտասարդը մեր ուրախութեան միջոցին եկած, Պրիժիթին անշան նամակ մը բերած, կառքը մանելու ատեն անոր ձեռքը սեղմած ըլլար, ամենափոքր ուշադրութիւն մը պիտի ընէի այս բաներուն։ Եթէ երջանիկ էի, հոգս էր Օբերայի թատրոնին մէջ զիս ճանչած կամ չճանչած ըլլալը, իմ առջև իր արտասուքը չղսպած ըլլալը, որու պատճառն անյայտ էր ինձ։ Սակայն Պրիժիթին տրտմութեան պատճառը գուշակելու անկարող ըլլալով հանդերձ քաջ կը տեսնէի որ՝ ինք ինչ կ'ուզէր թող ըսէր այն մասին՝ հիմակ իր վիշտերուն մէկ պատճառն ալ անցեալ ընթացքս էր։ Եթէ ատենօք եղած ըլլայի ինչ որ պարտաւոր էի ըլլալ վեց ամիսէ, այսինքն Պրիժիթին հետ ապրելէս ի վեր, գիտէի որ աշխարհիս մէջ ոչինչ կրնար վրդովել մեր սէրը։ Սիթ հասարակ մարդ մ'էր միայն, սակայն բարեսիրտ և անձնուէր էր. իր պարզ և պարկեշտ յատկութիւնները կը նմանէին մեծ յատակ գիծերու զոր աչքը նախ և առաջ և առանց դժուարութեան կը նշմարէ. քառորդի մը չափ կը ճանչէիր զինքը, և քեզի եթէ ոչ զարմանք գէթ վստահութիւն կը տար։

Չէի կրնար արդիլուիլ ըսելու իւրովի որ եթէ սիրուհիս սիրողն ըլլար ան, Պրիժիթ ուրախութեամբ կը մեկնէր հետը։

Ես ուզելուս յապաղեր էի մեր ուղևորութիւնը, բայց արդէն կը զղջայի յապաղած ըլլալուս։ Պրիժիթ նոյնպէս երբեմնակի կ'ստիպէր զիս։

— Ո՞վ կը կեցնէ մեզի, կ'ըսէր ան. ահա առողջացայ, ամեն բան պատրաստ է։

Իրօք ո՞վ կը կեցնէր զիս։ Զգիտեմ։

Զմինէային քովը նստած՝ մերթ Սիթին և մերթ տարփուհիս կը նայէի ակնայեռ։ Կը տեսնէի որ երկուքն ալ գունատ, ծանր և անմռունչ էին։ Զգիտէի թէ ինչու այսպէս էին, և ակամայ կը կրկնէի թէ անոնց այսպէս ըլլալուն պատճառը կրնար մի և նոյնն ըլլալ, և թէ այս մասին երկու գաղտնիք չկար իմանալու։ Սակայն այս կասկածը չէր այն անորոշ և հիւանդային կասկածներուն մին որք ատենօք չարչարեր էին զիս. աննկուն, անխուսելի բնազդում մ'էր այն։ Ինչ զարմանալի բան էինք մենք։ Հաճելի էր ինձ մի-

նակ թողուլ զանոնք և կրակարանին քովը ձգելով մեկնիլ՝ ափնուղիին վրայ մտախոհելու, գետին պարապին վրայ կոթնելու և իրը փողոցի թափառական մը ջուրին նայելու համար։

Երբ կը խօսէին ատենօք ն. . . քաղքին մէջ բնակելով իրենց անցուցած ժամանակին վրայ, երբ Պրիժիթ՝ գրեթէ զուարթանալով՝ մայրական փոքր հով մը կ'առնուր անոր յիշեցնելու համար այն օրերը զոր միասին անցուցեր էին, կը թուէր ինձ թէ կը վշտանայի, այլ սակայն ախորժելի կը գար ինձ Պրիժիթին այս ընթացքը։ Հարցումներ կ'ընէի իրենց. Սիթին հետ կը խօսէի իր մօրը, իր զբաղումներուն, նպատակներուն վրայ։ Առիթ կը տայի իրեն նպաստաւոր կերպով երևալու և իր համեստութիւնը կը բռնադատէի իր արժէքը մեզ երևան հանելու։

«Քոյրդ շատ կը սիրես, այնպէս չէ՞, հարցուցի։ Ե՞րբ միաք ունիս կարգելու զինքը»։

Անատեն Սիթ կարմրելով կ'ըսէր մեզ թէ տնական ծախքը գուցէ մինչև երկու տարի, թերևս աւելի շատ կրնար կարգել քոյրը՝ եթէ իր առողջութիւնը թոյլ տար իրեն կատարելու քանի մը արտաքոյ կարգի գործեր որոնց փոխարէն պարգևներ պիտի ընդունէր. թէ այն քաղաքին մէջ բաւական ունևոր ընտանիք մը կար, որու առջևնեկ տղան իր բարեկամն էր. թէ գրեթէ համաձայներ էին այս մասին ինքն և իր այն բարեկամը, և թէ երանութիւնը կրնար օր մը հանդստութեան պէս գալ առանց այս մասին խորհելու. թէ քրոջը ձգած էր իր ժառանգութեան մասը զոր Հայրն իրենց ձգած էր. թէ մայրը չէր ուզեր որ ինք քրոջը համար զրկուի ժառանգութենէն, թէ սակայն ինք հաստատ պիտի կենար իր որոշումին մէջ. թէ երիտասարդ մը կը պարտաւորէր իր ձեռներովն ապրիլ մինչդեռ աղջիկի մը կեանքն իր ամուսնութեան օրը կ'որոշուէր։ Այսպէս Սիթ սակաւ առ սակաւ իր բոլոր կեանքն ու հոգին մեր առջև կը պարզէր, և Պրիժիթին կը նայէի որ ուշ կը դնէր անոր։ Ապա երբ Սիթ կ'ելնէր մեկնելու համար, հետը կ'երթայի մինչև դուռը, ուր խորհուն և անշարժ կը կենայի մինչև որ իր ոտից դոփիւնը սանդուղէն հեռանալով անլսելի ըլլայ։

Անատեն վերստին սենեակը կ'երթայի, և կը տեսնէի որ Պրի-

ժիթ զկեստները հանելու կը պատրաստուի։ Անյապաբար և հոգեպիշ կը նայէի այս զմայլելի մարմնին, այս գեղեցկութեան գանձերուն զոր այնքան անգամ վայելեր էի։ Պրիժիթին կը նայէի մինչդեռ իր երկար մազերը կը սանտրէր, վզնոցը կը կապէր, և բաղանիք մտնող Տիանի պէս կը դառնար երբ շրջազգեստը դետինը կը սպրդէր։

Ապա անկողինը կը մտնէր, ես ալ իմ անկողինս կը վազէի. չէր կրնար միտքս դալ Պրիժիթին զիս խաբելը, ոչ ալ Սմիթին իրեն սիրահարն ըլլալը. մոքէս չէր անցներ ոչ դիտել ոչ ալ յանկարծուստ բռնել զանոնք։ Ամենևին տեղեկութիւն չէի առնուր։

«Շատ գեղեցիկ է Պրիժիթ, իսկ սա խեղճ Սմիթը պարկեշտ տղայ մ'է. երկուքն ալ մեծ վիշտ մ'ունին, նոյնպէս ես։»

Այսպէս խօսելով սիրտս կը յօշուէր ու միանգամայն կ'սփոփուէի։

Մեր ուղևորութեան արկղերը նորէն բանալով տեսեր էինք որ տակաւին քանի մը մանր մունր պակասներ ունինք. Սմիթ յանձն առած էր հոգ տանիլ այս մանր մունր բաներուն։ Յարատև գործունէութիւն մ'ունէր, և կ'ըսէր թէ իրեն շնորհք մ'ըրած կ'ըլլայինք երբ քանի մը յանձնարարութեանց հոգը իրեն կը տայինք։

Օր մը Պրիժիթին սունը գալով Սմիթը դետինը տեսայ ուր պարկ մը կը գոյեր։ Պրիժիթ դաշնակին առջևն էր զոր շաբաթական վարձքով գտեր էին գործածելու համար մինչև այն օրն որ պիտի մեկնէինք Բարիզէն։ Սիրուհիս կը նուագէր այն հին եղանակներուն մին զոր սովորած էր այնքան զգացումով և եռանդով երգելու և որք շատ սիրելի եղեր էին ինձ։ Կանկ առի նախասենեկին դրանքով որ բաց էր. մէն մի խաղ հոգիս կը մտնէր. Պրիժիթ երբէք այսքան տրտմապէս և սրբօրէն չէր նուագած։

Սմիթ մտիկ կ'ընէր հեշտութեամբ. ծունկի վրայ եկած էր՝ պարկին ճարմանդը բռնելով։ Ճզմեց ճարմանդը, ապա գետինը ձգեց և նայեցաւ հանդերձներուն զոր ինքն անձամբ պահ մ'առաջ ծալլած և սպիտակ լաթով մը ծածկած էր։ Եղանակը լմնցաւ, և ինքն անձամբ այսպէս կեցաւ տակաւին. Պրիժիթ՝ ձեռքը դաշնակին ստեղնաշարին (clavier) վրայ դրած՝ հորիզոնին կը նայէր։ Երիտասարդին աչքէն արտասուք ընկաւ. երկրորդ անգամն էր անոր արտասուելը տեսնելս. ես իսկ պատրաստ էի լալու, և չգիտնալով թէ ինչ կ'ըլլայի՝ ներս մտայ և ձեռքս Սմիթին երկնցուցի։

— Հոս էիր, հարցուց Պրիժիթ։

Սարսռեցաւ Պրիժիթ և զարմացած երևցաւ։

— Այո՛, հոս էի, պատասխանեցի։ Երգէ՛, սիրելիդ իմ, կ'աղերսեմ, երգէ։ Անգամ մ'ալ լսեմ ձայնդ։

Վերստին սկսաւ երգել առանց պատասխանելու. իրեն համար ալ յիշատակ մ'էր երգածը։ Կը տեսնէր յուզուած, նաև Սմիթինը. իր ձայնն այլայլեցաւ։ Կարծես յերկինս անհետ եղան վերջին ձայներն որք հազիւ հնչուեր էին. Պրիժիթ ելաւ և համբոյր մը տուաւ ինձ։ Սմիթ տակաւին ձեռքս կը բռնէր. նոյն միջոցին ուժգնակի և ջղաձգային սարսուռով մը ձեռքս սեղմելը զգացի. Սմիթ մեռելի պէս գեղնած էր։

Ուրիշ օր մը վիմագրուած ալպամ մը բերի որու մէջ Զվիցերիի շատ տեսարաններ կային։ Երեքնիս ալ ալպամին կը նայէինք, և մերթ ընդ մերթ՝ երբ Պրիժիթ իրեն հաճելի բնական դիրք մը գտնէր՝ կանկ կ'առնուր զայն դիտելու համար։ Սակայն հանդիպեցաւ դրքի մ'որ միւսներէն գերազանց երևցաւ իրեն, և որ Պրիկի ճամբէն քիչ մը հեռի Վոյի նահանգին մէջ բնավայր մ'էր։ այսինքն գալարագեղ հովիտ մ'ուր խնձորենիներ տնկուած էին և արքաներ կը ճարակուէին շուքին մէջ. հեռակայ գիւղ մը՝ գրեթէ տասներկու փայտաշէն տուներէ բաղկացեալ որք մարգագետնին վրայ անկարգօրէն ցանուած և շրջակայ բլուրներուն վրայ աստիճանապէս զետեղուած էին։ Առաջին տափարակին վրայ ծառի մը ստորոտն աղջիկ մը նստած էր յարդեայ լայն փեղոյր մ'ունենալով գլուխը, և ապարակի ծառայ մ'իր առջև ոտքի վրայ կեցած էր, և երկաթագամ դաւազան մ'ունենալով ձեռքը կարծես աղջկին ցոյց կը տար այն ճամբան ուսկէ դացած և եկած էր. կը ցուցնէր դերբուկ արահետ մ'որ լեռան մէջ անհետ կ'ըլլար։ Ետնոյ վերևն Ալպեան լեռները կ'երևային, և տեսարանը պսակուած էր երեք ձիւնապատ գագաթներէ զոր արևամայրին զանազան գոյները կը ներկէին։ Չկար բնավայր մ'որ ասոր չափ պարզ ու միանգամայն այսքան գեղեցիկ ըլլար։ Հովիտը գալարեայ ճի մը կը նմանէր, և

տեսնողին աչքն այս ճանման հովիտին շուրջը կը դիտէր անթերի հանգարտութեամբ մը։

— Հոն երթանք, ըսի Պրիժիթին։

Մատիտ մ՚առի, և վիմագրուած նկարին վրայ քանի մը գիծ գրեցի։

— Ի՞նչ կ՚ընես, հարցուց Պրիժիթ։

— Կ՚աշխատիմ որ փոքր ինչ յաջողակութեամբ արգեօք շատ փոփոխել պէտք է այս կերպարանքը որ քեզ նմանի։ Սա աղջկին աղօր գլխարկը կարծեմ շատ աղէկ պիտի երթայ քեզ, և՝ եթէ յաջողիմ՝ չեմ կրնար այս քաջ լեռնականը փոքր ինչ ինձ նմանեցնել։

Այս քմահաճութիւնը հաճելի երևցաւ Պրիժիթին և իսկոյն քերիչ մը բռնելով իսկոյն թուղթին վրայէն ջնջեց տղային և աղջկին երեսը։ Ուստի սկսայ իր պատկերը շինելու, ինքն ալ իմինս շինելու աշխատելով։ Երեսները շատ պզտիկ էին և իրօք մեր գէմքը անոնց վրայ բնտռող մ՚իսկոյն կը գտնէր։ Երբ խնդացինք մեր այս գործին վրայ, ալեօմը բաց մնաց և ծառան գործի մը համար գիս կանչած ըլլալով, պահ մ՚ետք դուրս ելայ։

Երբ վերստին եկայ, Սմիթ սեղանին վրայ կռթնելով այնքան ուշադրութեամբ կը նայէր վիմագրուած պատկերին որ չնշմարեց վերադարձս։ Խորունկ մտմտուքի դացած էր. կրակարանին քովն առջի տեղս նստայ, և Սմիթ անատեն մնայն վեր ըրաւ գլուխը երբ առաջին խօսքս ուղղեցի Պրիժիթին։

Պահ մը մեզ նայեցաւ Սմիթ. ապա աճապարումով կեցիք բարև ըսաւ, և մեկնեցաւ. մինչդեռ սեղանատունէն կ՚անցնէր. ձեռքովը Ճակտին զարնելը տեսայ։

Երբ յանկարծուստ կը տեսնէի այս վշտի նշանները, կ՚ելնէի և կ՚երթայի առանձին սենեակ մը կը մտնէի։

— Է՛հ, ինչ է, ինչ է այն, կը կրկնէի։ Ապա ձեռներս կը կցէի աղերսելու համար . . . զմ. չգիտեմ. թերևս բարի հրեշտակս, թերևս յուսի Ճակատագիրս։

ԳԼՈՒԽ Գ

Սիրտս գոչելով կ՚ստիպէր գիս մեկնելու, . . . կը յապաղէի. գաղտնի և դառն հեշտութիւն մը գիշերը տեղս կը բևեռէր գիս։ Երբ Սմիթ պարտաւորէր գալու, չէի հանդստանար մինչև որ չլսէի հնչակին ձայնը։ Ի՞նչպէս կ՚ըլլայ որ մենք դժբաղդութիւնը սիրող չգիտեմ ի՞նչպիսի բան մը կ՚ունենանք մեր ներսը։

Ամեն օր խօսք մը, վաղանց փայլակ մը, նայուածքը սարսուռ կը տար ինձ. ամեն օր ուրիշ խօսք մը, ուրիշ նայուածք մը՝ ներհակ տպաւորութեամբ մը վերստին կասկածներ կը տար ինձ։ Ի՞նչ անմեկնելի գաղտնիքով արձանի մը պէս անշարժ կը կենայի անոնց նայելով երբ ասոր նման շատ պարզամներու մէջ կատղելու չափ բարկացող երևցեր էի։ Շարժելու ոյժ չունէի ես որ սիրոյ մասին սրտիս մէջ զգացեր էի այն գրեթէ գազանական նախանձոտութիւնը որու նմանն Արևելքի մէջ կը տեսնուի։ Օրերս սպասելով կ՚անցունէի, և չէի կրնար ըսել թէ ինչու կ՚սպասեմ։

Գիշերներն անկողնիս վրայ նստելով իւրովի կ՚ըսէի։

«Եկո՛ւր, խորհէ այս բանիս վրայ։

Գլուխս կը բռնէի երկու ձեռքովս, ապա կը գոչէի իւրովի։

«Անկարելի է այս բանը։»

Եւ հետևեալ օրը վերստին մի և նոյն բանը կ՚ընէի։

Պրիժիթ՝ Սմիթին առջև աւելի բարեկամութիւն կը յայտնէր ինձ քան թէ երբ միանակ ըլլայինք։ Գիշեր մ՚իրարու բաւական ծանր խօսք ըսեր էինք երբ Սմիթ եկաւ. Պրիժիթ անոր ձայնը լսելով որ նախասենեկէն կը դար՝ եկաւ ծունկերուս վրայ նստաւ։ Իսկ Սմիթ՝ որ միշտ հանդարտ և տրտում էր՝ կարծես շարունակ ջանք կ՚ընէր ինքզինքը բռնելու համար։ Իր փոքրագոյն շարժումները չափովէին. քիչ կը խօսէր և կամաց. սակայն իր սովորական կեցուածքին հետ աւելի զարմանալի հակապատակեր կ՚ընծայէին այն յանկարծական շարժումները զոր երբեմնակի կ՚ունենար իր կամքին հակառակ։

Զիս մաշող անհամբերութիւնը կրնամ հետաքրքրութիւն անուս-

նել այն պարագային մէջ ուր կը գտնուէի։ Ինչ պիտի պատասխանէի եթէ մէկը դար ըսէր ինձ.

«Քեզի ինչ. շատ հետաքրքիր ես եղեր։»

Սակայն թերևս լոկ հետաքրքրութիւն մ'էր այս։

Կը յիշեմ թէ օր մը Արքայական կամուրջին քով մարդու մը խեղդուիլը տեսայ։ Բարեկամներու հետ կ'ընէի ինչ որ ջուրին տակէն լողալ կ'անուանի լուղորդութեան դպրոցին մէջ, և մեր ետևէն կը գար նաւակ մ'որու մէջ երկու լուղորդ վարպետ կար։ Ամառուան ամենէն տաք ժամանակն էր անատեն. մեր նաւակն ուրիշ նաւակի մը հանդիպած էր, հետևաբար կամուրջին մեծ կամարին տակն ետ դարձուցեր էր հոգիէ աւելի կայինք։ Ցանկարծ մեր մէջեն երիտասարդի մ'արիւնը գլուխը զարկաւ։ Աղաղակ մը լսելով ետևս դարձայ։ Երկու ձեռք տեսայ որք ջուրին երեսը կը յուզուէին, ապա բոլորովին անհետացան։ Խլոյն ընկղմեցանք, այլ 'ի զուր, ժամ մ'ետք միայն յաջողեցանք դուրս հանելու դիակը որ փայտեայ լաստի մը ներքև բռնուած էր։

Երբէք յիշողութենէս պիտի չելնէ այն տպաւորութիւնը զոր կրեցի՝ գետին մէջ ընկղմելով։ Խորին կարկաչիւնով մը գլխս շրջապատող ջուրի մթին և խորունկ խաւերուն ամէն կողմը կը նայէի։ Քանի որ կրնայի շունչս բռնել, ևս աւելի դեպ 'ի վայր կ'ընկղմէի, ապա ջուրին երեսը կ'ելնէի, ինծի պէս անհանգիստ լուղորդի մը դիմելով իրարու հարցում մը կ'ընէինք, ապա նորէն կ'ընկղմէի այս մարդասիրութեան համար։ Սարսափով և յոյսով համակուած էի. անպատում ուրախութիւն և սարսափ մը կը պատճառէր ինձ թերևս երկու ջղաձգային թեւերէ բռնուիլս զգալու գաղափարը. վերևս երկու ջղաձգային թեւերէ բռնուիլս զգալու գաղափարը մտայ ամ բոլորովին յոգնած և ուժաթափ ըլլալով։

Երբ զեղխութիւնն անասունի չդարձներ մարդս, իր հարկաւոր հետևանայ մին է հետաքրքրութիւնը։ Ասկից առաջ ըսի այն հետաքրքրութիւնը զոր զգայեր էի երբ առաջին անգամ այցելութիւն ըրեր էի Տէժրնէին։ Աւելի պիտի բացատրեմ միտքս։

Ճշմարտութիւնը՝ որ արտաքին երևոյթներուն կմախքն է՝ կ'ուզէ որ ամէն մարդ՝ ով կ'ուզէ թող ըլլայ՝ իր օրին և ժամին գայ իր

յաւիտենական ոսկերոտիքը շօշափէ անցողական վէրքի մը մէջ։ Աշխարհս ճանչել կ'անուանի այս, և փորձառութիւնն այս ճանաչումով կ'ստացուի։

Արդ այս փորձին առջև երբեմն ոմանք ահաբեկ կը նահանջեն. ոմանք ալ՝ որք տկար և վախկոտ են՝ այն փորձէն ետք ստուերներու պէս երերուն կը մնան։ Իսկ քանի մ'անձինք, թերևս լաւագոյնները, իսկոյն կը մեռնին նոյն փորձը ընելով։ Մեծագոյն մասը կը մոռնայ, և այսպէս ամէն բան կը ծփայ մահէն ետք։

Բայց ինչ ինչ մարդիկ, անշուշտ դժբաղդ մարդիկ ոչ կը նահանջեն և ոչ կ'երերան, ոչ կը մեռնին և ոչ կը մոռնան. երբ իրենց ալ կարդը կը դայ դժբաղդութիւնը, ըսել կ'ուզեմ ճշմարտութիւնը շօշափելու, հաստատ քայլով կը մտնեն, ձեռք կ'երկընցնեն և՝ սոսկալի բան՝ սէր կ'ունենան այն դունատ ջրամոյնին վրայ որուն ջուրերու ներքևն ըլլալը զգացած են։ Կը բռնեն խեղդուողը, կը շօշափեն, կը սեղմեն, վերջապէս զան ճանչելու իղձով կ'արբշռին. ալ իրերու կը նային լոկ անոնց մէջէն տեսնելու համար. ալ միայն կը կասկածին և կը փորձեն. աշխարհս կը խուզարկեն իրը Ատուածու լրտեսներ, իրենց գաղափարները սրուելով սլաք կը դառնան, և իրենց աղեացը մէջ լուսանն մը կը ծնի։

Անառակներն ամենէն աւելի ենթակայ են այս կատղութեան, և ասոր պատճառը պարզ է. անառակները հասարակ կեանքը տափարակ և թափանցիկ մակերևոյթի մը նմանեցնելով արագաձեռ հոսանքի մէջ ամէն բոպէ յատակին կը դպին։ Օրինակի աղագաւ պարահանդէսէ մ'երնելով բոզանոց մը կ'երթան։ Վալսելու ատեն կոյսի մը համեստարոյր ձեռքը սեղմելէն և թերևս անոր դողում մը տալէն ետք, կը մեկնին, կը վազեն, իրենց վերարկուն կը նետեն, և սեղան կը նստին իրենց ձեռները շփշփելով. տակաւին իրենց շուրթերուն վրայ է այն վերջին խօսքը զոր դեռ պահ մ'առաջ ըսած են դեղանի և պարկեշտ կնիկի մը. նոյն խօսքը կը կրկնեն քրքիջ բառնալով։ Այսքան միայն, ոչ, քանի մը դրամի փոխարէն ոչ ապաքէն վեր կ'ընեն այն զգեստը որ ամօթաղածութիւնը կը կաղմէ, կը վերցնեն բօսան, այսինքն դաղտնիքով լի այն վա-

բաղդը որ ինքն իսկ կարծես կը յարգէ իրմով զեղեցկութիւն առնող էակը, և զան կը շրջապատէ առանց դպելու անոր։ Ուրեմն անառակներնէրն ինչ գաղափար կը պարտաւորին ունենալ մարդկան ընկերութեան վրայ, ուր ամէն վայրկեան կը գտնուին թատրոնի խորշերը կեցող կատակերգու՝ դերասաններու պէս։ Ո՞վ երբէք անառակներէն աւելի սովորած է իրերու խորը այսպէս բնտռելու, ո՞վ բնաւ սովորած է այս խորունկ և ամբարիշտ շշափումներուն, եթէ կարելի է այսպէս խօսիլ։ Ցէս թէ ինչպէս կը խօսին ամէն բանի վրայ. միշտ ամենէն անպատեհ, ամենէն կոշտ, ամենէն ստորին բառերը կը գործածեն. ասոնք միայն ճշմարիտ կ'երևան իրենց. միւս ամէն բառերը սին ցոյց, սովորութիւն և նախապաշարումներ են։ Երբ յարավէպ մը պատմեն, երբ նկարագրեն ինչ որ զգացած են, կը գործածեն միշտ կեղտոտ և ֆիզիկական բառը, միշտ տառը, միշտ մահը։

«Այս կինը սիրեցի,» չեն ըսեր, այլ «այս կինը վայելեցի։» «Կը սիրեմ» չեն ըսեր, այլ «կը ցանկամ։» «Եթէ Աստուած ուզէ,» չեն ըսեր բնաւ, այլ ամենուրեք կ'ըսեն, «եթէ ուզեմ։» Զգիտեմ թէ իրենք իրենց վրայ ինչ կը խորհին և ինչ մենախօսութիւններ կ'ունենան։

Ասկից անհրաժեշտաբար կը հետևի կամ ծուլութիւնը կամ հետաքրքրութիւնը. վասն զի անառակները մինչդեռ այսպէս կը վարժուին ամէն բանին յուռեղոյն կողմը տեսնելու, կը լսեն նաև թէ ուրիշները կը շարունակեն հաւատալ բարիին։ Ուստի պէտք է որ անոնք իրենց ականջը խփելու չափ անփոյթ ըլլան, կամ թէ աշխարհիս մնացորդին այս աղմուկը գայ յանկարծ արթնցնէ զիրենք։ Հայրն իր զաւակը թողու որ երթայ ուր որ ուրիշները կ'երթան, ուր որ Կատոնն իսկ կ'երթար. կ'ըսէ հայրը թէ երիտասարդութիւնը կ'անցնի։ Սակայն տղան՝ տունը վերադառնալով իր քրոջը կը նայի, և տես թէ անամօթական իրութեան հետ ժամ մ'առանձին անցուցած ըլլալն ինչ հետևութիւն ունեցաւ իրեն համար. այդ տղան կը պարտաւորի ըսել. «Քոյրս ամենևին նմանութիւն մը չունի այն արարածին հետ որուն քովէն եկայ հիմա.» և այն օրէն սկսելով՝ անհանդիստ կ'ըլլայ։

Գէշութեան նկատմամբ հետաքրքրութիւնը խայտառակ հիւանդութիւն մ'է որ ամէն պիղծ յարաբերութիւնէ կ'արտադրուի։ Ուրուականներու թափառիկ բնազդումն է այն որ գերեզմաններուն քարը կը վերցնէ. անմեկնելի չարչարանք մ'է այն որով Աստուած կը պատժէ սխալողները. անառակները կ'ուզեն հաւատալ թէ ամէն բան կրնայ սխալիլ, այլ սակայն թերևս սաստիկ վիշտ տայ իրենց ամէն բանի սխալելու կարողութիւնը։

Բայց հարուփորձ կ'ընեն, կը փնտռեն, կը վիճին, իրենց զլուխը մէկ կողմ կը ծռեն քանոն մ'ուղղող ճարտարապետի մը պէս, և այսպէս կ'աշխատին տեսնելու ինչ որ փափաքելի է իրենց, երբ հաստատուած է գէշութիւնը, կը խնդան վրան. երբ կասկածելի է գէշութիւնը, երդումով կը հաստատեն զայն. իսկ բարութիւնը կ'ուզեն իրենց ետևը տեսնել։

«Ո՞վ գիտէ». այս է ահա այն մեծ ձեւաբանը, այն առաջին խօսքը զոր Սատանան ըսաւ երկնից դռան տեսնելով։ Բարի, միայն այս «ո՞վ գիտէ» խօսքը քանի՛ դժբաղդներ շինած է, որքան աղէտներու և մահերու տեղի տուեր է, բուսնելու պատրաստ հունձքն որքան մանդաղի սաստիկ հարուածներ առեր է, որքան սիրտեր, որքան ընտանիքներ բոլորովին կործաներ են այս խօսքն իրենց մէջ լսուած ըլլալէն՝ի վեր։ Ո՞վ գիտէ, ո՞վ գիտէ. ապիրատ խօսք։ Լաւագոյն է ոչխարներուն պէս ընել քան թէ այս խօսքը արտաբերել, ոչխարներուն պէս, կ'ըսեմ, որք չգիտեն թէ ուր է սպանդարանը, և որք հոն կ'երթան խոտ ուտելով։ Լաւագոյն է այսպէս ապրիլ քան թէ հոգը միաք այսինքն անհաստ ըլլալ և Լարոշֆուկոյ կարդալ։

Սոյն միջոցին պատմած իրողութենէս լաւագոյն ինչ օրինակ կրնամ տալ այս մասին։ Ցարմտիս կ'ուզէր մեկնիլ, և միայն խօսք մը ըսելս կը բաւէր։ Ցրտում կը տեսնէի զինքը, և ինչու կը կենայի. եթէ մեկնած ըլլայի, ինչ հետևութիւն ունեցած կ'ըլլար մեկնիլս։ Վայրկեան մը վախ կրած կ'ըլլայի. միայն երեք օր ճամբորդութիւն ընելէն ետք ամէն բան մոռցուած կ'ըլլար։

Իր քովը միայն ես գտնուելով Պրիժիթ լոկ իմ վրայ պիտի խորհէր. ինչ հոգս էր իմանալ գաղտնիք մ'որ պատիս չէր դպեր։

Պրիժիթ կը հաւանէր. հաւանելովն ամէն բան կը լմնար։ Իր շուրթերէն համբոյր մը միայն քաղել պէտք էր. փոխանակ քաղելու այս համբոյրը՝ տես թէ ինչ ըրի։

Գիշեր մ՚ուր Սմիթ մեր հետն ընթրած էր, կանուխ տեղս դայեր էր՝ միասին թողլով զանոնք։ Երբ դուռը կը գոցէի՝ Պրիժիթին թէյ ուզելը լսեցի։ Հետևեալ օրն իր սենեակը մտնելով սեղանին մօտեցայ պատահաբար, և թէյի անօթին քով միայն մէկ թաս տեսայ։ Իրմէն առաջ ոչ ոք մտած էր, հետևաբար ծառան չվերցուցեր էր առջի օրուան գործածուած բաները։ Զորս կողմս կահերուն նայեցայ որպէս զի հաստատ կերպով գիտնամ թէ չկայ երկրորդ թաս մը։

— Մ՚ինչ Սմիթ ուշ գնայ, հարցուցի Պրիժիթին։

— Կէս գիշերին, պատասխանեց։

— Մինաւոր պառկեցար, թէ ոչ մէկը կանչեցիր որ անկողինը դնէ քեզի։

— Մինակս պառկեցայ. տան մէջ ամէն մարդ քնացած էր։

Միշտ կը բնտռէի և ձեռներս կ՚երերային։

Ո՞ր ծիծաղաշարժ կատակերգութեան մէջ կայ նախանձոտ մ՚որ երկրորդ թասի մ՚ինչ եղած ըլլալը հասկնալ ուզելու չափ ապուշ ըլլայ։ Ինչ պատեհութեամբ Սմիթ և տիկին Բիէրսօն մի և նոյն թասով խմած պիտի ըլլային թէյը։ Ինչ ազնիւ մտածում էր այս իմ կողմէ։

Սակայն թասը կը բռնէի և սենեկին մէջ կ՚երթևեկէի։ Զկրնալով ինքզինքս զսպել քահ քահ մը ձգեցի և թասը դեռինը նետեցի, ուր հազարումէկ կտոր եղաւ. ներբանովս ճզմեցի բոլոր կտորները։

Պրիժիթ այս ընթացքս տեսաւ առանց բան մ՚ըսելու ինձ։ Հետևեալ օրն և միւս օրը Պրիժիթ հետս վարուեցաւ այնպիսի անտարբերութեամբ որ կարծես արհամարհանքէ յառաջ կը գայ, և Սմիթին հետ սովորականէն աւելի համարձակ և բարեսիրական կերպերով վարուիլ ցոյց տալը տեսայ։ Անոր կ՚անուանէր Սմիթը, այսինքն մկրտութեան անունը կը տար, և մտերմաբար կը ժպտէր իրեն։

— Կը փափաքիմ քիչ մը հով առնուլ ընթրիքէն ետը, ըսաւ Պրիժիթ. թատրոն կը դաս, Օղթավ. յօժարութիւն ունիմ հետի երթալու հոն։

— Ո՛չ, հոս պիտի մնամ, գուն գնա առանց ինծի։

Պրիժիթ Սմիթին թևը մտնելով դուրս ելաւ։ Մինակ մնացի մինչև քունիս ատենը. թուղթ ունէի առջևս և կ՚ուզէի գրել՝ գաղափարներս որոշելու համար. սակայն չյաջողեցայ։

Մինակ մնալուն պէս ծոցէն սիրուհիին մէկ նամակը հանող և սիրելի երգի մը մէջ թաղող սիրահարի մը պէս հաճութեամբ կը համակուէի անթերի մենութեան մը զգացումով և կ՚առանձնանայի տարակուսելու համար։ Առջևս էին այն երկու աթոռներն ուր պահ մ՚առաջ Սմիթ և Պրիժիթ նստեր էին. անյաղաբար այս աթոռներուն կը նայէի՝ իբր թէ կարող ըլլային բան մ՚խմացնել ինձ։ Հազար անգամ մտքէս անցուցի այն բաները զոր տեսեր և լսեր էի. մերթ ընդ մերթ դուռը կ՚երթայի և անգամ մը մեր ուղևորութեան արկղերուն կը նայէի որք պատին քովը շարուած էին և ամիսէ մ՚ի վեր կ՚սպասէին. կամաց մը կը բանայի կիսովին սոյն արկղերը, Պրիժիթին հոգատար և փափուկ պզտի ձեռներովը կարգաւ տեղաւորուած հանդերձները, գիրքերը կը քննէի. կառքերուն անցնելուն ուշ կը դնէի. անոնց զգրգիւնը սիրոս կը բախէր։ Սեղանին վրայ կը տարածէի մեր Եւրոպայի աշխարհացոյց տախտակը որ ատենօր այնքան քաղցր նպատակներու ակնատեսն եղած էր, և այս աշխարհագրական տախտակին քով, նոյն իսկ այս ամէն յոյսերուս առջև, Ճիշդ այն սենեկին մէջ՝ ուր այս յոյսերն ունեցեր և անոնց կատարուելու այնքան մօտիլը տեսեր էի՝ արձակ համարձակ ամենէն սոսկալի նախազգացումներով կը զբաղուէի։

Ի՞նչդէս կարելի էր այս բանը։ Ոչ բարկութիւն կ՚զգայի, ոչ նախանձ, այլ սակայն անսահման վիշտ մը կ՚զգայի։ Կասկած չունէի, այլ սակայն կ՚երկմտէի։ Մարդուս միտքն այնքան այլանդակ է որ վշտի բիւր առարկաներ կը գտնէ տեսած բաներուն և տեսած բաներուն հակառակ։ Ստուգիւ իր ուղղը կը նմանի հաւատաքննութեան այն գնդանեներուն ուր պատերն այնքան չարչարանքի

գործիներով ծածկուած են որ տեսնողն անոնց ոչ նպատակը և ոչ ձևը կը հասկնայ, և ինքնին կը հարցնէ թէ արծաթներ են անոնք թէ խաղալիկներ։

Կը հարցնեմ քեզ, ըսէ ինձ թէ սիրուհիդ «Ամեն կիները կը խաբեն» ըսելդ ինչ տարբերութիւն ունի «Ձիս կը խաբես» ըսելէդ։

Սակայն մտքէս անցածը թերևս ամենէն նուրբ խնամակալութեան մը չափ նուրբ էր. մտքին և խղճին մէջ տեսակ մը տարամիտութիւն էր այն։

— Եթէ Պրիժիթը կորուսէի, կ'ըսէր միտքը։

— Հետդ կը մեկնի ան, կ'ըսէր խիղճը։

— Եթէ զիս խաբէր։

— Ինչպէս խաբէ քեզի ան որ իր կտակն ըրած էր և մէջը կը պատուիրէր աղօթք ընել քեզի համար։

— Եթէ Սմիթ կը սիրէ զինքը։

— Խենդ. ինչ հոգդ է քանի որ գիտես թէ Պրիժիթ քեզի կը սիրէ։

— Եթէ կը սիրէ զիս, ինչու տրտում է։

— Իր դաղտնիքն է ատի, յարգէ այդ դաղտնիքը։

— Եթէ տանիմ Պրիժիթը, երջանիկ պիտի ըլլայ։

— Սիրէ զինքը, երջանիկ պիտի ըլլայ։

— Երբ այս մարդն իրեն կը նայի, ինչու կը թուի թէ կը վախնայ անոր նայուածքին հանդիպելու։

— Վասն զի Պրիժիթ կին է և Սմիթ երիտասարդ։

— Ինչու այս մարդը յանկարծ կը տժգունի երբ Պրիժիթ իրեն կը նայի։

— Վասն զի մարդ է և Պրիժիթ դեղանի։

— Երբ Սմիթը տեսնելու գայի, ինչու դիրկս նետուեցար լալով. ինչու օր մը ձեռները ճակատին զարկար։

— Մի հարցներ ինչ որ կը պարտաւորիս չգիտնալ։

— Ինչու կը պարտաւորիմ չգիտնալ այս բաները։

— Վասն զի դուն ողորմելի և դիւրաբեկ ես, և վասն զի ամենդաղտնիք Աստուծու կը վերաբերի։

— Բայց ինչու արդեօք կը տառապիմ, ինչու հոգիս կ'ահաբեկի միշտ երբ այս բանիս վրայ կը խորհիմ։

— Միտքդ բեր հայրդ և բարեգործութիւն ընելու աշխատէ։

— Բայց ինչու չեմ կրնար ընել, ինչու չարութիւնը կը դրաւէ զիս։

— Ծունր դիր, խոստովանանք եղիր. եթէ դէշութեան կը հաւատաս, դէշութիւն ըրած ես։

— Եթէ ըրած եմ, ինչ է յանցանքը. բարութիւնն ինչու մատնեց զիս։

— Ի խաւարի դտնուիլդ ելլալը ուրանալու պատճառ մ'է. եթէ մատնիչներ կան, ինչու անոնց մին ես։

— Վասն զի կը վախնամ միամտաբար խաբուելու։

— Ինչու դիշերներդ անքուն կ'անցունես։ Նորածինները դիշերը կը քնանան։ Ինչու մինակ ես հիմա։

— Վասն զի կը խորհիմ, կը տարակուսիմ և կը վախնամ։

— Ուրեմն երբ պիտի ընես աղօթքդ։

— Երբ հաւատք պիտի ունենամ։ Ինչու սուտ խօսեցան ինձ։

— Դուն ինչու սուտ կը խօսիս, վա՛տ, այս միջոցին իսկ։ Ինչու չես մեռնիր՝ եթէ չես կրնար տառապիլ։

Այսպէս կը խօսէին և կը հեծէին յիս երկու սոսկալի և ներհակ ձայներ, և երրորդ ձայն մը տակաւին կը գոչէր.

«Ափսո՛ս, ափսո՛ս անմեղութեանս. բա՛րէ, բա՛րէ, ո՞ւր են առջի ժամանակուան օրերս։»

ԳԼՈՒԽ Ե

Անհարկու լծակ մ'է մարդկային միտքը. մեր պաշտպանութիւնն և պահպանութիւնն է, Աստուծու մեզ տուած պարգևներուն գեղեցկագոյնն է այն։ Մերն է այն և մեզ կը հնազանդի. կրնանք անջրպետը նետել զայն, և երբ անդամ մ'այս խեղճին դանկէն դուրս կ'ելնէ, ա՛ղ լմնցաւ, ա՛ղ չենք կրնար իրին համար պատասխանատու ըլլալ։

Մինչդեռ օր օրի կը ձգձգէի մեր ուղևորութիւնը, առողջութիւնս և քունս կը կորուսէի, և սակաւ առ սակաւ կեանքը կը լքէր զիս թէև ես չէի նշմարեր այս լքումը։ Երբ սեղան կը նստէի, սոսկալի պժգաւմ մը կ'զգայի. գիշերն այն երկու երեսները, այսինքն Սմիթին և Պրիժիթին երեսները՝ զոր առաւօտէն մինչև իրիկուն կը դիտէի՝ սոսկալի երազներու մէջ զիս կը հալածէին։ Երբ գիշերը թատրոն կ'երթայի, չէի ուզեր իրենց հետն երթալ. ապա մինակս կ'երթայի, թատրոնին վարի սրահին մէկ անկիւնը կը պահուէի, և անկից անոնց կը նայէի։ Մօտակայ օթեկին մէջ գործ ունենալ կը ձևացնէի, և ժամ մը հոն կենալով իրենց մտիկ կ'ընէի։ Մերթ՝ Սմիթին հետ կռիւ ընելու և զինքը մենամարտութեան բռնադատելու գաղափարն ուժգնակի կը գրաւէր զիս. կոնակ կը դարձնէի երբ Սմիթ հետս կը խօսէր. ապա կը տեսնէի որ զարմացման ձևով մը քովս կը գար՝ ձեռքն ինձ երկնցնելով։ Մերթ՝ երբ գիշերը մինակ կ'ըլլայի և տան մէջ ամեն մարդ կը քնանար՝ Պրիժիթին սենեակն երթալու, իր դրասեղանը բանալու և իր բոլոր թուղթերը դողնալու դրդում կ'զգայի։ Անգամ մը պարտաւորեցայ դուրս ելնել այս դրդումին դիմադրելու համար։ Ինչ կրնամ ըսել. Օր մը կ'ուզէի դանակ 'ի ձեռին սպառնալ անոնց և մեռցընել երկուքն ալ եթէ չըսէին ինձ թէ ինչ պատճառաւ տրտում են. ուրիշ օր մ'ալ ես ինծի դէմ կ'ուզէի թափել կատղութիւնս։ Ո՞րքան ամչնալով կը գրեմ այս տողերը։ Եւ ով որ հարցունէր ինձ այսպէս վարուելուս բուն պատճառը, պիտի չգիտնայի ինչ պատասխան տալս։

Տեսնել, գիտնալ, տարակուսիլ, խուզարկել, վրդովիլ և դժբաղդ ըլլալ, օրերը գաղտնապէս բան լսելու համար ականջ տալով անցունել, գիշերը արտասուքով ողողուիլ, կրկնել իւրովի թէ վշտահար պիտի մեռնիմ. այս պատճառաւ հաւատալ թէ վշտանալու պատճառ ունիմ, առանձնութեան և տկարութեան սրտէս յոյսը արմատաքի խլելը զգալ, երևակայել թէ կը լրտեսեմ՝ մինչդեռ մութին մէջ ոչ այլ ինչ կը լսէի բայց եթէ տենդահար երակիս զարկը. անընդհատ և ընդ վայր կրկնել սա գռեհիկ խօսքն որ ամենուրեք կ'ըսուի, այսինքն «Կեանքն երազ մ'է, այս աշխարհիս մէջ

ոչայուն բան մը չկայ.» վերջապէս անիծել թշուառութեամբս և քմահաճութեամբս հայհոյել Աստուծու որ յիս էր, ահա այս էր վայելումս, սիրելի զբաղումս որու համար հրաժեշտ կը տայի սիրոյ, երկնից օդին, ազատութեան։

Յաւիտենական Աստուած, ազատութիւն, այո՛, կայնն ինչ ինչ վայրկեաններ ուր՝ ամեն բանի հակառակ՝ տակաւին ազատութեան վրայ կը խորհէի։ Ա՛յնքան յիմարութեանց, այլանդակութեանց և ապշութեան միջոցին կը կրէի այնպիսի ցայտումներ որք յանկարծ զի բոլորովին կը փոփոխէին։ Այս ցայտումներն էին հովի յորձանք մ'որ երեսիս կը զարներ երբ ընդանէս կ'ելնէի. գիրք մը զոր կը կարդայի երբ սակայն պատահաբար դիմի կարդալու արժանի հեղինակութեան մ'և չէ թէ այն այժմայ նենգաւորներուն որք պարսաւատեար գրող կ'անուանին և զոր՝ իբր հասարակաց առողջութեան պարզ միջոց՝ պէտք է արդիլել յօշելու և իմաստակելու։ Քանի որ այս բարի ժամերուս վրայ կը խօսիմ, ասոնք այնքան հաղուադէպ էին որ կ'ուզեմ այն ժամերուն մին յիշել։ Գիշեր մը Կոստանդի յիշագրութիւնները կը կարդայի, որոնց մէջ հետաքրքիր տողերը գտայ։

«Վակրամի պատերազմին մէջ ռմբակէ (obus) մը կորուեցաւ Սալստօրֆի ոտքը։ Սալստօրֆ որ Քրիսթիէն իշխանին ծառայող Սաքսօնիայի վիրաբոյժ մ'էր՝ դետինը պառկած էր գրեթէ անկենդան։ Իրմէ տասնուհինգ քայլ անդին զետինը ընկնելով արիւն փսխեց չգիտեմ որուն (մոռցայ անունը) բանակի օգնական Ամետոր Քերպուր, որու կուրծքը ճզմուած էր գունդէ մը։ Սալստօրֆ տեսնելով որ այս երիտասարդը կաթուածով մը պիտի մեռնի եթէ չդարմանուի՝ հաւքեց իր այժերը, սողալով մինչև երիտասարդին քովը գնաց, արիւն մ'առաւ անորմէ և կեանքը ազատեց։ Ընկից ելնելով Սալստօրֆ Վիէննայի մէջ մեռաւ անդամահատութենէն չորս օր ետք։»

Երբ կարդացի այս խօսքերը, գիրքը նետեցի և սաստիկ արտասուեցի։ Զեմ յաւիր այս արտասուքը թափած ըլլալուս, վասն զի անոնց փոխարէն բարի օր մը վայելեցի, լոկ Սալստօրֆի վրայ խօսելով, և ուրիշ որ և է բանի նկատմամբ հոգ չընելով։ Այն օրն

անշուշտ միտքս չեկաւ կասկածիլ որ և է մէկու մը վրայ։ Խե՛ղճ երազող, անատեն կը պարտաւորէի յիշել թէ ատենօր բարի եղեր էի։ Յիշելս ի՞նչ բանի կը ծառայէր ինձ. վշտաբեկ թեւեր տարածելու դէպ երկինք, ինքնին հարցնելու թէ ինչո՞ւ աշխարհիս մէջն եմ և բոլորտիքս նայելու որպէս զի տեսնեմ թէ նաև իմ քով ումբակ մը չ՚ընկնիր յաւիտեանս զիս ազատելու համար։ Բարէ, տեսածս միայն ումբակին լոյսն էր որ պահ մը խաւարս ճղքելով կ՚անցնէր։

Այն անմիտ տէրվիշներուն պէս որք գլխու պտոյտին մէջ մտային յափշտակութիւն կը դտնեն, երբ միտքը՝ ինքն իր վրայ դառնալով բոլորովին կը յոգնի ինքզինքը պեղելէն, անօգուտ աշխատութենէ մը վատակաբեկ՝ կանգ կ՚առնու զարհուրած։ Կը թուի թէ մարդս դատարկ է, և թէ ինքն այնքան իր ներսը կ՚ելլէ որ ոլորաձև սանդուղի մը յետին բաղրատը կը հասնի։ Ինչպէս լերանց գագաթներուն վրայ, ինչպէս ակամներուն յատակը, նոյնպէս և այն բաղրատին վրայ օդը կը պակսի, և Աստուած կ՚արգիլէ մարդս աւելի առաջ երթալու։ Անատեն սիրտը՝ մահաբեր յուրտէ մը զարհուելով իբր մոռացումի ծարաւով գրաւուած՝ կ՚ուզէ դուրս նետուիլ վերածնելու համար. նորէն կեանք կ՚ուզէ զինքը շրջապատող լերէն, օդը կը շնչէ եռանդագին, սակայն բոլորտիքը ոչ այլ ինչ կը դտնէ բայց եթէ իր յատուկ ցնորքները զոր պահ մ՚առաջ ոգևորեր էր իրմէ պակսող ոյժովը, և որք իրմէ ստեղծուած ըլլալով զինքը կը շրջապատեն իբր անկոթ ուրուականներ։

Անկարելի՛ էր որ իրերու վիճակն այսպէս երկար ատեն շարունակուէր։ Երկմտութենէն յոգնելով որոշեցի փորձ մ՚ընել ճշմարտութիւնը երևան հանելու համար։

Գացի իջևանի ճիներ ուզեցի գիշերուան ժամը տասին համար։ Բաց կառք մը վարձու բռներ էինք, և պատուիրեցի որ ամեն բան պատրաստ ըլլայ որոշուած ժամին։ Նոյն միջոցին պատուիրեցի նաև որ այս պատրաստութեանց նկատմամբ բան մը չըսեն տիկին Բիէրսօնին։

Սմիթ ճաշելու եկաւ. սեղան նստելով սովորականէս աւելի

զուարթ երևցայ, և մեր ուղևորութեան վրայ դարձուցի խօսակցութիւնը՝ առանց խնայելու անոնց իմ գիտաւորութիւնս։

Հրաժեշտ կը տայի այս ճամբորդութեան, ըսի Պրիժիթին, եթէ գիտնայի թէ իրեն փափաքելի չէր այն. այնքան գոհ էի Բարիզի մէջ բնակելէս որ ինծի համար լուսաղոյն էր հոն մնալ քանի որ իրեն ալ հաճելի պիտի ըլլար Բարիզ։ Գովեցի այն ամեն զբօսումները որք կրնան գտնուիլ այս քաղաքին մէջ. խօսեցայ պարահանդէսներուն, թատրոններուն, զուարճանալու հազարումէկ առիթներուն վրայ որոնց մարդս Բարիզի մէջ կը հանդիպէր մեն մի քայլ առնելուն։ Վերջապէս քանի որ երջանիկ էինք, չէի հասկնար թէ ինչո՞ւ տեղ կը փոխէինք, և այնքան շուտ մեկնիլ չէր անցներ միտքէս։

Կը յուսայի որ Պրիժիթ պիտի թախանձէր մեր այն նպատակին նկատմամբ որ էր ծրնէվ երթալ, և իրօք թախանձեց, այլ բաւական տկար կերպով. բայց երբ թախանձելու համար իր առջի քանի մը խօսքը ըսաւ, իր թախանձանացը հաւանիլ ձևացուցի. ապա ուրիշ նիւթի վրայ դարձնելով խօսակցութիւնը՝ անտարբեր իրերու վրայ խօսեցայ՝ իբր թէ ամեն բան որոշուած ըլլար։

«Եւ ինչո՞ւ Սմիթ ևս մեր հետը չգայ, շարայարեցի։ Իրաւ է որ զինքը հոս կեցնող գրաղումներ ունի, բայց Չկրնար գալու հրաման մ՚առնուլ։ Սակիս՝ լ գաս ամենուրեք ազատ և պատուաւոր կեանք մ՚ապահովապէս պիտի չունենայ շնորհիւ այն տալանդներուն զոր ունի և որոնցմէ չուզեր օգուտ քաղել։ Թող գայ առանց քաշուելու. կառքը մեծ է, և մենք տեղ մը կը տանք իրեն։ Գէտք է որ երիտասարդ մ՚աշխարհս տեսնէ, և իր հասակին մէջ ոչինչ այնքան արտմալի է որքան է նեղ շրջանի մը մէջ բանտարկուիլը։ Այնպէս չէ՞, հարցուցի Պրիժիթին։ Օ՜ն, սիրելիդ իմ, թող քու ազդեցութիւնդ ստանայ Սմիթէն ինչ որ ինք թերևս մերժէ ինձ. համոզէ զինքն իր ժամանակէն վեց շաբաթ մեզ զոհելու։ Միասին ճամբորդութիւն պիտի ընենք, և Զվիցերիի մէջ շրջան մ՚ընելովն աւելի հաճոյք պիտի գտնէ իր զբաղումներն և աշխատութեանցը մէջ։

Պրիժիթ ինձ համամիտ եղաւ, թէև քաջ գիտէր թէ այս հրաւէրը կատակ մ՚էր լոկ։ Սմիթ չէր կրնար Բարիզէն տարակայիլ

առանց իր պաշտօնէն զրկուելու վտանգին, և ցուելով պատասխանեց մեզ թէ այս պառաւը կ՚ապրէր զինքը մեր հրաւէրը ընդունելու։ Սակայն շիշ մ՚ինտիր զինի բերել տուեր էի, և կէս մը խնդալով, կէս մ՚ալ անկատակ կերպով մինչդեռ կ՚ստիպէի Սմիթը, մեր երեքին գլուխն ալ տաքցեր էր։ Ճաշէն ետք քառորդ մը դուրս ելայ հրամանատարուս կատարուած ըլլալը ապահովապէս դիտնալու համար. ապա զուարթ կերպարանով մը վերստին ներս մտայ, և դաշնակին քովը նստելով առաջարկեցի երաժշտային եղանակներ նուագել։

«Հոս անցունենք մեր երկոյթը, ըսի անոնց. եթէ մտիկ կ՚ընէք ինձ, թատրոն չերթանք. կարող չեմ օգնելու ձեզ, բայց կրնամ ձեր ունկնդիրն ըլլալ։ Եթէ Սմիթ ձանձրանայ, զինքն ալ նուագ ածելու պիտի պարտաւորենք, և ժամանակն աւելի շուտ պիտի անցնի հոս քան թէ այլուր։»

Պրիժիթ հարկ չթողուց որ աղաչենք զինքը. յօժարութեամբ երգեց. Սմիթ հետը նուագ կ՚ածէր իր ստուարաձայն քնարովը։ Բոնչ շինելու հարկաւոր եղած բաներ բերուեր էին, և խոյսն բոմին բոցը այրելով մեզ զուարթութիւն տուաւ իր լոյսովը։ Դաշնակը ձգելով սեղան նստանք, վերստին դաշնակին մօտեցանք. թուղթ խաղացինք. ամէն բան ուզածիս պէս անցաւ, և ժամանակը լոկ զբօսանքով անցուցինք։

Ժամացոյցին կը նայէի ակնայեռ, և անհամբերութեամբ կ՚սպասէի որ սլաքը տաս թիւին վրայ դայ։ Անհանդստութիւնը զիս կը լափէր, բայց անհանդիստ ըլլալս ամենևին չյայտնեցուցայ։ Վերջապէս հասաւ որոշուած ժամը։ Կառապանին մտրակին շաչիւնը և ձիերուն դաւիթը մտնելը լսեցի։ Պրիժիթ քովս նստած էր. ձեռքը բռնեցի և հարցուցի թէ պատրաստ էր մեկնելու։ Զարմանքով ինձ նայեցաւ, անշուշտ կարծելով թէ կատակ էր հարցումս։ Ըսի թէ ինք ճաշին ատենը մեկնելու այնքան պատրաստ երևած էր ինձ որ չզեղևեր էի ձիերը բերել տալու, և թէ ձի բերել տալու համարելեր էի։ Նոյն միջոցին դուրս պանդոկին ծառան ներս մտաւ և իմաց տուաւ մեզ թէ ձրարները կաւքին վրան էին և թէ ալ մեզ կ՚սպասէին միայն։

— Իրաւ է, հարցուց Պրիժիթ. այս գիշեր մեկնիլ ուզելդ իրաւ է։

— Ինչո՞ւ չէ, պատասխանեցի, քանի որ համաձայն ենք միասին թէ Բարիզէն պիտի մեկնինք։

— Ինչ. հիմա, այս միջոցիս իսկ։

— Անշուշտ. ոչ ապաքէն ամիսէ մ՚ի վեր ամէն բան պատրաստ է։ Ահա կը տեսնես որ մեր արկղերը կաւքին վրայ դնելէն 'ի զատ դժուարութիւն մը չկայ. քանի որ մեր հոս չմնալն որոշուած է, որքան շուտ երթանք, այնքան լաւագոյն չէ։ Կը կարծեմ թէ պէտք է ամէն բան այսպէս ընել և վաղուան բան մը չձգել։ Այս գիշեր ուղևորելու յօժարութիւն ունիս, և կը փութամ օգուտ քաղելու այդ յօժարութենէդ։ Ինչ հարկ անընդհատ սպասելու և յապաղելու։ Ձեմ կրնար համբերել այս կեանքին։ Կ՚ուզես մեկնիլ, այնպէս չէ. ուրեմն մեկնինք. ալ քեզմէ կախում ունի այս բանը։»

Պահ մը խորունկ լռութիւն տիրեց։ Պրիժիթ պատուհանը գնաց և տեսաւ որ իրօք ձիերը լծուեր էին կաւքին։ Սակիս զատ այնպիսի կերպով կը խօսէի որ չէր կրնար այս մասին կասկած մ՚ունենալ, և որքան ալ յանկարծահաս կարենար երևիլ այս որոշումը, ինքն ըրածէր զայն։ Ձէր կրնար ետ առնուլ իր բերնովն ըսած խօսքերը, ոչ ալ յապաղելու պատճառ մը պատրաստել։ Ուստի անմիջապէս իր որոշումն ըրաւ. նախ քանի մը հարցում ըրաւ կարծես ապահովելու համար թէ արդեօք ամէն բան կարգին էր. տեսնելով թէ ոչինչ մոռցուած էր, հոս հոն խուզարկութիւն ըրաւ։ Իր շալը և փեղոյրը առաւ, ապա վար դրաւ, ապա վերստին բնտռտուքի սկսաւ։

— Ահա ալ պատրաստ եմ, ըսաւ. ուրեմն կը մեկնի՞նք. պիտի մեկնի՞նք։»

Ապա ճրագ մ՚առաւ, իր սենեակը, նաև իմս աչքէ անցուց, արկղերը և պահարանները բացաւ։ Իր գրասեղանին բանալին կ՚ուզէր զոր կորուսած էր, կ՚ըսէր։ Ո՞ւր կրնար ըլլալ այս բանալին, դեռ ժամ մ՚առաջ ձեռքն էր այն։

— Երթանք, երթանք, պատրաստ եմ, կը կրկնէր Պրիժիթ ծայրայեղ յուզումով մը, մեկնինք, Օգթաւ, իջնենք։

Այսպէս խօսելով շարունակ կը բնտռտէր, և վերջապէս եկաւ մեր քովը նստաւ։

Բազմոյին վրայ կեցեր էի և Սմիթին կը նայէի որ առջևս ոտքի վրայ էր։ Սմիթ իր գլուխը փոխած չէր, և ոչ վրդոված, ոչ ալ զարմացած կ'երևար. սակայն քունքին վրայէն երկու շիթ քրտինք կը հոսէր, և փղոսկրեայ վահանակի մ'իր մատերուն մէջէն կրճելը լսեցի. ձեռքը բռնած էր նոյն վահանակը որուն բեկորները գետինն ընկան։

Սմիթ երկու ձեռքն ալ մեզ երկնցնելով ըսաւ.

— Բարի ճամբորդութիւն, բարեկամներ։

Նորէն լռութիւնը տիրեց. միշտ կը զննէի Սմիթը, և կ'սպասէի որ ուրիշ խօսք մ'ալ ըսէ։

«Եթէ հոս գաղտնիք մը կայ, կ'ըսէի մտապէս, երբ պիտի իմանամ զայն եթէ այս միջոցիս չիմանամ։ Երկուքին ալ շուրթերուն ծայրն է անշուշտ այս գաղտնիքը։ Թող ասոր շուքն ելնէ իրենց շուրթերէն, և պիտի ըմբռնեմ զայն։

— Սիրելիդ իմ Օգթաւ, ըսաւ Գրիժիթ, ուր կանչ առնելու դիտաւորութիւն ունիս։ Նամակ պիտի գրես մեզ, այնպէս չէ, Անրի. ընտանիքս պիտի չմոռնաս, և ինձի համար կրցածդ պիտի ընես։

Սմիթ յուզուած ձայնով մը, այլ առերևոյթ հանդարտութեամբ մը պատասխանեց թէ յօժարակամ խօսք կը տար Գրիժիթին ծառայելու, և թէ պիտի ջանար ծառայելու իրեն։

— Չեմ կրնար ապահովապէս խօսք տալ, ըսաւ, և քիչ յոյս կայ այն նամակներուն վրայ զոր ընդունեցար։ Սակայն յանցանքն իմս եղած պիտի չըլլայ, եթէ չկարենամ շուտով ուրախալի լուր մը ղրկել։ Վստահէ իմ վրայ. անձնուէր եմ քեզ։

Մեզ ուրիշ քանի մը մարդասիրական խօսք ևս ուղղելէն ետք կը պատրաստուէր մեկնելու։ Ոտք ելայ և իրմէն առաջ դուրս ելայ. ուզեցի վերջին անգամ մ'ալ միասին թողուլ զանոնք, և խլոյն զուռը ետևէս գոցելէն ետք 'ի դերև ելնող նախանձոտութեան քաղաքը կատղութեամբն համակուած ճակատս կղզակին վրայ փակցուցի։

— Եթը նորէն պիտի տեսնեմ քեզի, հարցուց Գրիժիթին։

— Երբէք, պատասխանեց Գրիժիթ. մնաս բարեաւ, Անրի։

Գրիժիթ ձեռքը երկնցուց զոր Սմիթ խոնարհելով շուրթերուն տարաւ, և ես հազիւ ժամանակ ունեցայ դէպ ետևս մութ տեղ մը նետուելու և պահուելու։ Սմիթ անցաւ առանց զիս տեսնելու։

Երբ մինակ մնայի Գրիժիթին հետ, զգայի թէ սիրտս տրտմաբեկ էր։ Ան ինձ կ'սպասէր՝ լոկիկը թևէն վրայ առած, և իր կրած յուզմունքն այնքան յայտնի էր որ կարելի չէր չնշմարել զայն։ Գտած էր այն բանալին զոր կ'որոնէր, և իր դրասեղանը բաց էր։ Գայի նորէն նստայ չմինէ այլն քով։

— Մտիկ ըրէ, ըսի չհամարձակելով իրեն նայելու. այնքան յանցաւոր եղայ քեզի զէմ որ կը պարտաւորիմ սպասել և տառապիլ՝ առանց դանդատելու իրաւունքն ունենալու։ Կրած փոփոխութիւնդ այնպիսի յուսահատութեամբ մը համակեց զիս որ չկրնալով համբերել այդ փոփոխութեան պատճառը հարցուցի քեզ. բայց այսօր ալ չեմ հարցներ այդ պատճառը։ Ծանր է քեզ մեկնիլը. ըսէ. պիտի համակերպիմ։

— Մեկնինք, մեկնինք, պատասխանեց Գրիժիթ։

— Աղէկ, բայց անկեղծ եղիր։ Ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ ընդունելու հարուածս, չեմ պարտաւորիր և ոչ իսկ հարցնել թէ ուր կը գայ այն. անմունջ պիտի հնազանդիմ։ Բայց եթէ երբէք պիտի ղրկուիմ քեզմէ, նորէն մի յուսադրեր զիս, վասն զի, Աստուած վկայ, պիտի չապրիմ եթէ ղրկուիմ քեզմէ։

Գրիժիթ արագօրէն ետին դարձաւ։

— Խօսէ ինձ սիրոյդ, մի խօսիր վշտիդ նկատմամբ, ըսաւ.

— Լաւ, ըսեմ ուրեմն, կեանքէս աւելի կը սիրեմ քեզի։ Սիրոյս քով վիշտս երաշ մ'է։ Հետս եկուր աշխարհիս ծայրը, կամ պիտի մեռնիմ, կամ քեզմով պիտի ապրիմ։

Այս խօսքերը արտաբերելով քայլ մ'առի դէպ իր քով, և ահա անոր ժպտունիլը և նահանջելը տեսայ։ Գրիժիթ ունայն ջանք կ'ընէր իր ամփոփուած շուրթերը ստիպելու համար որ ժպտին. և ծռուելով դրասեղանին վրայ.

— Վայրկեան մը, ըսաւ, վայրկեան մ'ևս. քանի մը թուղթեր ունիմ այրելու։»

Ն. . . էն եկած նամակները ցոյց տուաւ ինձ, պատուց և կրա-

կը նետեց. ուրիշ թուղթեր ալ առաւ, և նորէն կարդալէն ետք սեղանին վրայ դրաւ։ Այս թուղթերն իր վաճառականներէն ղրկուած հաշիւներ էին, և անոնց մէջ տակաւին չվճարուածներ կային։ Պրիժիթ այս հաշիւները քննելով հանդերձ սկսաւ արագ և յստակ հնչումով խօսիլ՝ շուրթերը տենդահարի մը շուրթերուն պէս հրատապ։ Ներսումն կը խնդրէր իրմէ. դալէն 'ի վեր յամառութեամբ պահած լռութեանը և իր ընթացքին համար։ Սովորականէն աւելի կաթոգին սէր, վստահութիւն ցոյց կը տար ինձ։ Շեռնեռը իրարու կը զարնէր խնդալով և խիստ զմայլելի ուղևորութիւն մ'ընելու յոյս ունենալով. Վերջապէս Պրիժիթ բոլորովին սէր դարձած էր, կամ գէթ սիրոյ կը նմանէր գլխովին։ Չեմ կրնար ըսել թէ որքան վիշտ կը տար ինձ անոր այս շինովի ուրախութիւնը. Պրիժիթին վշտին մէջ՝ որ այսպէս ինքնին կը ստէր՝ արտասքէ աւելի սոսկալի և յանդիմանութիւններէն աւելի դառն տրտմութիւն մը կար։ Լաւագոյն կը համարէի իր ցուրտ և անտարբեր ըլլալը քան թէ ինքզինքը զսպելու համար այսպէս զրգռուիլը, կը թուէր ինձ թէ մեր ամենէն երջանկաւէտ վայրկեաններուն մէկ ծիծաղելի նմանութիւնը կը տեսնեմ։ Մի և նոյն խօսքերն էին, մի և նոյն կինն էր, մի և նոյն սիրային զգուանքն էին, և ինչ որ տասնուհինգ օր առաջ զիս սիրով և երանութեամբ արբշիռ կ'ընէր, հիմակ այսպէս կրկնուելով սիզգում կը տար ինձ։

— Պրիժի՛թ, ըսի յանկարծ, ինչ գաղանիք կը պահես իրմէ։ Եթէ կը սիրես զիս, իմ առջև ի՞նչ խաբերական սոսկալի խաղ կը խաղաս։

— Ե՛ս, ըսաւ գրեթէ վիրաւորելով այս խօսքէս։ Ո՞վ կը հաւատացնէ քեզ այդ խաղը խաղալուս։

— Ո՞վ կը հաւատացնէ։ Սիրելիդ իմ, ըսէ ինձ թէ անհնարին տխրութեամբ դրաւուած է սիրտդ և թէ մարտիրոսարար կը չարչարուիս։ Ահա թեւերս որքա պատրաստ են քեզի ընդունելու. գլուխդ դիր այս թեւերուս վրայ և լա։ Ընատեն թերևս պիտի տանիմ քեզի. բայց այդպէս չպիտի տանիմ, յիրաւի։

— Մեկնի՛նք, մեկնի՛նք, կրկնեց դարձեալ։

— Չէ, պատասխան վրայ կ'ըսեմ թէ ոչ, հիմա ոչ, չեմ մեկնիր

քանի որ մեր մէջ ստութիւն կամ գիմակ մը կայ։ Լաւագոյն է ինձ դժբաղդութիւնը քան թէ այդ զուարթութիւնը։

Պրիժիթ անմռունչ և ահաբեկ կեցաւ, տեսնելով որ չէի խաբուեր իր խօսքերէն և թէ իր միտքը և սիրտը կը գուշակէի իր ջանադրութեանց հակառակ։

— Ինչու՞ զիրար խաբենք, շարայարեցի։ Մինթէ ալ այդ աստիճան անարժան եղայ քեզմէ յարգուելու որ կարող կ'ըլլաս կեղծելու իմ առջև։ Ուրեմն ինքզինքդ դատապարտուած կը կարծես այս դժբաղդ և արտաքին ճամբորդութեան։ Բռնաւոր մ'եմ, բացարձակ տէր մ'եմ, քեզի բռնի չարչարելու տանող դահիճ մ'եմ։ Ուրեմն ի՞նչ կը վախնաս բարկութենէս որ այդպիսի կեղծ ձևերու կը դիմես. ի՞նչ սարսափ այդպէս կ'ստիպէ քեզի կեղծաւոր ըլլալու։

— Անիրաւ ես, պատասխանեց. կ'աղաչեմ, ալ լռէ։

— Ինչու՞ ուրեմն այդքան քիչ է անկեղծութիւնդ։ Եթէ մտերիմդ չեմ, գէթ չեմ կրնար բարեկամի տեղ դրուիլ. եթէ չեմ կրնար արտասուքիդ ուսկէ գալը դիտնալ, գէթ չեմ կրնար անոնց հոսիլը տեսնել։ Զուտիս և ոչ իսկ այն վստահութիւնը որ է հաստատ թէ կը յարգեմ ցաւերդ։ Ի՞նչ ըրի որ իրմէ կը պահես զանոնք. կարելի չէ՞ այդ ցաւերուն դարմանը գտնել։

— Չէ, անիրաւ ես, կ'ըսէր Պրիժիթ. քու և իմ դժբաղդութեան պատճառ պիտի ըլլաս եթէ աւելի ստիպես զիս։ Բաւական չէ՞ մեր մեկնիլը։

— Եւ ինչպէս կ'ուզես որ մեկնիմ երբ բաւ է ինձ քեզ նայիլ տեսնելու համար որ անախորժ է քեզ այս ուղևորութիւնը, թէ ակամայ կը գաս, թէ արդէն կը զղջաս իսկ։ Ի՞նչ է ուրեմն ատոր պատճառը, Տէր իմ Աստուած, և ի՞նչ կը պահես իրմէ։ Ինչ հարկ խօսքերով խաղալու երբ խորհուրդը սա հայլիին պէս յայտնի է։ Մարդերուն յետինը չեմ ըլլար եթէ այսպէս անմռունչ ընդունիմ ինչ որ պինդան ակամայ կը տաս ինձ։ Սակայն ինչպէս կրնամ մերժել տուածդ. ինչ կրնամ ընել եթէ չխօսիս։

— Չէ, ակամայ չեմ գար հետդ. կը սխալիս. կը սիրեմ քեզի, Օղթամ. դադրէ զիս այդպէս տանջելէ։

Ան՝ թան անոյշ կերպով արտաբերեց այս խօսքերը որ իր ոտքն

ընկայ։ Ո՞վ կրնար դիմադրել իր նայուածքին և իր ձայնին երկնային հնչումին։

— Ստուած իմ, դուշեցի իւրովի, իս կը սիրեմ, Պրիժիթ, սիրելիդ իմ սիրուհիս, կը սիրեմ իս։

— Այո՛, կը սիրեմ, այո՛, քուկդ եմ. ըրէ զիս ինչ որ հաճելի է քեզ։ Հետդ պիտի գամ. միասին մեկնինք. եկուր, Օգթաւ, կ'սպասեն մեզ։

Ձեռքս ձեռներովը սեղմեց և ճակատէս համբոյր մ'առաւ։

— Այո՛, պէտք է սիրել, մրմնջեց Պրիժիթ, այո՛, կ'ուզեմ սիրել մինչև վերջին շունչս։

— Պէ՞տք է, ըսի իւրովի։ Ո՞տք ելայ։ Սեղանին վրան ալ միայն մէկ թերթ թուղթ մնացած էր զոր Պրիժիթ աչքէ կ'անցուներէր։ Առաւ այն թուղթը, դարձուց, ապա ձեռքէն գետինը ձգեց։

— Լմնցա՞ւ, հարցուցի։

— Այո՛, լմնցաւ։

Երբ ձիերը բերել տուեր էի, իրօք մեկնելու դիտաւորութեամբ բերել չտուեր էի։ Կ'ուզէի փորձ մ'ընել միայն. սակայն իրերու զօրութեամբ իսկ ճշմարիտ եղած էր այս փորձը։ Դուռը բացի. «Պէ՞տք է» կ'ըսէի իւրովի, պէ՞տք է կը կրկնէի բարձրաձայն։ Ի՞նչ կը նշանակէ այս պէ՞տք է խօսքը, Պրիժիթ։ Բան մը կայ հոս որ անյայտ է ինձ, ի՞նչ է այն։ Բացատրութիւն տուր թէ ոչ կը կենամ։ Ինչո՞ւ պէտք է որ սիրես զիս։

Պրիժիթ բազմոցին վրան ընկաւ և ձեռները գալարեց վշտաբեկ։

— Ա՜խ, դժբաղդ, դժբաղդ, ըսաւ, երբէք չպիտի կրնաս սիրել։

— Լա՛ւ, թերևս իրաւ է ըսածդ, կարծեմ իրաւ է. բայց վկայ է Ստուած թէ կրնամ տառապիլ։ Պէտք է որ սիրես զիս, այնպէս չէ՞. լա՛ւ, սակայն պէտք է նաև պատասխան տալ ինձ։ Եթէ նաև պարտաւորիմ յաւիտեան զրկուիլ քեզմէ, եթէ նաև սա պատերը գլխուս վրայ փլին, ասկից դուրս պիտի չելնեմ մինչև որ իմանամ այն գաղտնիքը որ ամիսէ մ'ի վեր կը տանջէ զիս։ Պիտի խօսիս կամ կը թողում քեզի. թող խենդ մը, կատաղի մ'ըլլամ, թող քմահաճութեամբ կեանքս խանգարեմ, թող խնդրեմ քեզմէ

ինչ որ կը պարտաւորէի չդիմանալ ձեռացնել, թող մեր մէջ բացատրութիւն մը պարտաւորի կործանել մեր երանութիւնը և այսուհետև անբառնալի արդելք մը դնել իմ առջև, թող այս բացատրութեան պատճառաւ իսկ անհնարին ընեմ այս ճամբորդութիւնը որու այնքան փափաքեցայ, վերջապէս քեզի ալ, ինձի ալ որքան ալ սուղի նստի բացատրութիւնը, պիտի խօսիս, թէ ոչ հրաժեշտ կը տամ ամէն բանի։

— Չէ՞, չէ՞, պիտի չխօսիմ։

— Պիտի խօսիս։ Մինթէ կը կարծես թէ միամտաբար կը կլլեմ սուտերդ։ Երբ երեկոյէն հետևեալ օրը քեզի կը տեսնեմ այնքան տարբեր որքան ցորեկը դիշերէն չէ, կը կարծե՞ս թէ կը խաբուիմ։ Երբ իրը պատճառ յառաջ կը բերէիր ինձ չդիտեմ ինչպիսի նամակներ որք և ոչ իսկ կարդացուելու արժէքն ունին, կ'երևակայե՞ս թէ բաւական կը համարիմ այս կամ այն չնչին պատրուակը, վասն զի սիրտդ կ'ուզէ ուրիշ պատրուակ մը չփնտուել։ Երեսդ մինթէ բուաշէն է որ դժուարին ըլլայ անոր վրայ տեսնել ինչ որ սրտէդ կ'անցնի։ Ուրեմն ինչ կարծիք ունիս իմ վրայ։ Կարծուածին չափ խաբուող չեմ, և նայէ որ չխօսելովդ լռութիւնդ չիմացնէ ինձ ինչ որ այնքան յամառութեամբ կը պահես իզմէ։

— Ի՞նչ կ'ուզես որ պահեմ քեզմէ։

— Ի՞նչ կ'ուզեմ, կը հարցնե՞ս ուզածս։ Մինթէ յայտնապէս զիս առ ոչինչ համարելու համար է ինձ այդ հարցումն ընելդ. մինթէ նպատակդ զիս բոլորովին բարկացնել և իզմէ աղատիլ է։ Այո՛, անշուշտ պատրաստ է, վիրաւորուած է հպարտութիւնն որ յայտնապէս խօսելուս կ'սպասէ։ Եթէ համարձակապէս միտքս բացատրեմ։ Կնային բոլոր երկիմտութիւնը քեզ պիտի ծառայեցնես. քեզի ամբաստանելուս կ'սպասես որպէս զի պատասխանես թէ քեզի պէս կին մը չգիջանիր ինքզինքը արդարացնելու։ Ամենէն յանցաւոր և ամենէն սիրագաւ կիներն ինչպիսի՛ անարգու հպարտութեամբ լի նայուածքը բաւական կը սեպեն իրը պատասխան։ Քու մեծ զէնքդ լռութիւնդ է. ՝ի բնէ անտի գիտեմ այդ զէնքը։ Նպատակդ է նախատուիլ, կը լռես մինչև որ նախատեմ քեզի. օ՜ն, օ՜ն, կռուէ սրտիս հետ. ուր որ կը բախի քուկդ, հոն պիտի գտնես իմս ալ.

սակայն մի՛ կուիր մտքիս հետ. միտքս երկաթէն աւելի կարծր է, և այս մասին քեզմէ շատ աւելի բաներ գիտէ:

— Խե՛ղճ տղայ, մրմնջեց Պրիժիթ, ուրեմն չե՞ս ուզեր մեկնիլ:

— Զէ. սիրուհիս հետ կը մեկնիմ միայն, և դուն հիմա սիրուհիս չես: Բաւական տառապեցայ, սիրոս բաւական մաշեցի: Ա՛լ լուսոյ ելնելուն ժամանակն եկաւ. բաւական է՝ ի խաւարի ապրիլը: Այո՛ կամ ոչ, կ՚ուզե՞ս պատասխանել:

— Ո՛չ:

— Դուն գիտես. պիտի սպասեմ:

Գացի սենեկին միւս ծայրը նստայ, որոշելով չելնել մինչև որ իմանամ ինչ որ կ՚ուզէի գի՛տնալ: Պրիժիթ կ՚երևար թէ կը մտածէր և համարձակապէս կը քայլէր իմ առջև:

Զինքը կը դիտէի անյաղ նայուածքով, և իր պահած լռութիւնն աստիճանաբար բարկութիւնս կ՚աւելցնէր: Զէի ուզեր որ նշմարէր բարկութիւնս, և չգիտէի ինչ որոշում ընելս: Պատուհանը բացի:

— Արձակեցէք ձիերը, գոչեցի, և վճարեցէք կառապանին վարձքը. այս գիշեր չպիտի մեկնիմ:»

— Խե՛ղճ գժբաղդ, ըսաւ Պրիժիթ:

Հանդարտօրէն պատուհանը գոցեցի, և նստայ առանց լսել ձևացնելու, բայց անդիմադրելի կատղութիւն մը կ՚զգայի: Այս ցուրտ լռութիւնը, այս բացասական զօրութիւնն անհնարին զայրոյթ կը տար ինձ: Եթէ իրապէս խաբուած և սիրուած կնիկէ մը մատնուելուս ապահով եղած ըլլայի, աւելի գէշ բան մը զգացած պիտի չըլլայի: Երբ ես ինքզինքս տակաւին Բարիզ մնալու դատապարտեցի, իրաւի ըսի թէ Պրիժիթ անհրաժեշտաբար կը պարտաւորէր խօսիլ:

Մտքիս մէջ՝ ի նանիր կը բնտռէի միջոց մ՚որով ստիպէի զինքը խօսելու. սակայն այս միջոցը անմիջապէս գտնելու համար բոլոր ունեցածս կը տայի: Ինչ ընէի, ինչ ըսէի: Պրիժիթ առջևս էր հանդարտ, և ինձ կը նայէր տրտմութեամբ: Ձիերուն արձակուիլը լսեցի. յամրաքայլ արշաւով մեկնեցան, և անոնց փոքրիկ զանգակներուն ձայնը շուտով դադրեցաւ լսուելէ: Դառնալս միայն կը բաւէր այս ձիերը ետ բերել տալու, սակայն կը թուէր ինձ թէ անդառնալի կերպով կը մեկնէին անոնք: Դրան նիզը քաշեցի: Զգիտեմ ինչ ձայն մ՚ականջիս կ՚ըսէր. Ահա մինակ ես, դէմ առ դէմ կը գտնուիս այն անձին հետ որ կեանք կամ մահ պիտի տայ քեզ:

Մինչդեռ խորհուրդներուս մէջ ընկղմած ջանք կ՚ընէի գտնելու հնարք մ՚որ կարենար ճշմարտութիւնը յայտնել ինձ, յիշեցի Տիտրոյին մէկ վիպասանութիւնը, ուր իւր սիրողին դէմ նախանձող կին մ՚իր կասկածները փարատելու համար բաւական տարօրինակ միջոց մը կ՚երևակայէ: Կ՚ըսէ իր սիրողին թէ ա՛լ չսիրեր զինքը և կ՚խնդրէ թէ պիտի զատուի իրմէն: Տէզարսի Մարքիզը, (այս է սիրողին անունը) ծուղակը կ՚ընկնի, և կը խոստովանի թէ ինքն ալ ձանձրացած է իր սէրէն: Այս տարադէպ իրողութիւնը՝ զոր պատմութեանս մէջ կարդացեր եմ՝ ուշադրութիւնս գրաւած էր իբր ճարտարութեան գործ մը, և այն միջոցիս կը ժպտէի զայն յիշելով: «Ո՞վ գիտէ, ըսի իրաւի, եթէ ես ալ այնպէս վարուիմ՝ թերևս Պրիժիթ խաբուի և խնդրէ ինձ իր գաղտնիքը:

Կատաղի բարկութիւն մ՚իսկոյն ձգելով սկսայ խորամանկութեան կամ խաբեբայութեան գաղափարներ ունենալ: Ուրեմն այսքան դժուար է կին մը խօսեցնել իր կամքին հակառակ: Այս կինը տարփուհիս էր. շատ տկար էի եթէ չյաջողէի խօսեցնելու զինքը:

Համարձակ և անտարբեր ձևով մը բազմոցին վրայ երկնցայ:

— Բայց ինձ նայէ՛, սիրելիդ իմ, ըսի զուարթօրէն, մեր խորհուրդները մտերմաբար իրարու յայտնելու ժամանակը չէ՞:

Պրիժիթ ինձ նայեցաւ զարմացման ձևով մը:

— Ինչո՞ւ կը զարմանաս, շարայարեցի, սակայն պէտք է որ օրին մէկը մեր ճշմարտութիւնները վերջապէս ըսենք իրարու: Ահա՞ քեզ օրինակ մը տալու համար՝ սկսելու փափաք մ՚ունիմ, սկսելով վստահութիւն պիտի առնուս, և բարեկամներու մէջ իրարու միտք հասկնալն ամէն բանի աւելի վստահութիւն կը տայ:

Մինչդեռ այսպէս կը խօսէի, անշուշտ երեսս կը մատնէր զիս. Պրիժիթ կ՚երևար թէ մտիկ չէր ըներ և իր շրջագայութիւնը կը շարունակէր:

— Գիտես որ ահա արդէն վեց ամիս անցաւ մեր միասնական կեանքէն՝ ի վեր: Մեր վարած կեանքին տեսակն ամենևին չնմանիր

այն կեանքին որու վրայ կարելի է խնդալ։ Դաղկահաս ես, նաև ես. հետս առանձնակի խօսակցիլն եթէ երբէք ալ ախորժելի չըլլայ քեզ, կարող պիտի ըլլաս խոստովանելու ինձ այդ բանը։ Ցիրաւի, եթէ պատահէր ատանկ բան մը, ես անկեղծարար կը խոստովանիմ։ Եւ ինչո՞ւ չէ. մի՞թէ ոՀիր մ'է սիրելը. ուրեմն նուազ սիրելը կամ ալ չսիրելը չի՞նար ոՀիր մ'ըլլալ։ Զարմանալի կրնայ ըլլալ մեր հասակին մէջ փոփոխութեան հարկաւորութիւն մը։

Պրիժիթ կանչ առնելով ըսաւ.

— Մեր հասակին մէջ։ Մի՞թէ ինձ կ'ուզես խօսքդ։ Ինչ կեղծ դեր կը խաղաս դուն ալ։

Արիւնս երեսս զարկաւ։ Պրիժիթին ձեռքը բռնեցի։

— Նստիր հոդ, ըսի, և մտիկ ըրէ։

— Ի՞նչ հարկ քանի որ դուն չես խօսողը։

Ես ինքս կ'ամչնայի կեղծաւորութենէս, և ալ մէկ կողմ դրի կեղծելը։

— Մտիկ ըրէ՝ կրկնեցի ուժգնակի, և կ'աղերսեմ քեզի, եկուր հոս քովս նստիր։ Եթէ կ'ուզես ըլլութիւն պահել, գէթ ինձ մտիկ ընելու շնորհք ըրէ։

— Ականջս քեզի է. ինչ ըսելիք ունիս ինձ։

— Եթէ այսօր ըսուի ինձ. «Վա՛տ ես». քսաներ կու տարեկան եմ, և արդէն մենամարտութիւն ըրած եմ. վատ ես ըսողին դէմ բոլոր կեանքս, սիրտս պիտի զայրանայ։ Մի՞թէ ես ինքս չգիտեմ թէ ինչ եմ։ Սակայն հարկ է մարդագետինն երթալ, հարկ է որ այս կամ այն անշան մարդուն հետ գէմ առ գէմ կենամ, պէտք է որ կեանքս իր կեանքին փոխարէն վտանգի դնեմ. ինչո՞ւ. հաստատելու համար թէ վատ չեմ. թէ ոչ աշխարհս կը հաւատայ վատութեանս։ Միայն այս խօսքը ոչն պատասխանը կ'ուզէ և ուզած է միշտ, ամեն անդամ որ այն խօսքն ըսուած է որմէ կ'ուզէ թող ըլլայ։

— Իրաւ է. ի՞նչ հետևութիւն պիտի հանես։

— Կիները չեն մենամարտիր. սակայն մարդկային ընկերութիւնն այնպէս կազմուած է որ ամեն անձ, ինչ սեռէ կ'ուզէ թող ըլլայ, և իր կեանքն եթէ նաև ժամացոյցի պէս կարգադրուած և երկաթի պէս հաստատ ըլլայ անդամ, պիտի ունենայ վայրկեաններ ուր ամեն բան վտանգի մէջ տեսնելու պիտի պարտաւորի։ Մտածէ, տեսածէ ես մէկը որ այս օրէնքէն ազատի. թերևս քանի մ'անձինք. սակայն տես թէ ինչ հետևութիւն կ'ունենայ այս ազատումը. Եթէ մարդ է ազատողը, անպատուութիւն կը հետևի. եթէ կին մ'է, ինչ կը հետևի. մուսացում։ Ճշմարիտ կեանքով ապրող ամեն էակ այս պատճառաւ իսկ կը պարտաւորի հաստատել իր ապրիլը։ Ուրեմն ինչպէս մարդու նոյնպէս և կնիկի մը համար կայ պարագայ ուր յարձակում կը կրէ ան։ Եթէ յարձակում կրող այդ կինը քաջ է, ոտք կ'ելնէ, ներկայ ըլլալը կը հաստատէ, և վերստին կը նստի։ Սուրի հարուած մ'ոչինչ կ'ապացուցանէ իրեն համար։ Այդ կինն ոչ միայն կը պարտաւորի ինքզինքը պաշտպանել, այլ նաև ինքն անձամբ դարմնել իր զէնքը։ Մէկն իր վրայ կը կասկածի. ոմ. անտարբեր մը. այն կինը կրնայ արհամարհել զան։ Մի՞թէ սիրողն է կասկածողը, կը սիրէ այդ սիրողը. եթէ կը սիրէ, այս է իր կեանքը, և չկրնար արհամարհել իր կասկածող սիրահարը։

— Իր միակ պատասխանը լռութիւնն է։

— Կը սխալիս. գիտեմ թէ այդ կնոջ վրայ կասկածող սիրահարը կասկածովն անոր բոլոր կեանքը կը թշնամանէ. կնիկին համար պատասխանողն է իր արտսուքը, անցեալ կեանքը, անձնուիրութիւնն և համբերութիւնը, այնպէս չէ՞։ Ինչ պիտի պատահի եթէ լռէ այն կինը. անշուշտ սիրողն իր յանցանքովը պիտի զրկուի իրմէն և ժամանակը պիտի արդարացնէ սիրուհին։ Այս չէ՞ միտքդ։

— Գուցէ. ամեն բանէ առաջ լռութիւնը։

— Գուցէ, կ'ըսես. անշուշտ պիտի զրկուիմ քեզմէ եթէ չպատասխանես ինձ. որոշումս եղած է. մինակս պիտի մեկնիմ։

— Եւ ժամանակը, Օգթա՛մ. . .

— Ժամանակը, գոչեցի, ուրեմն ժամանակը պիտի արդարացնէ՞ քեզի։ Խօսէ՝ գէթ ասոր այո՞ կամ ոչ, պատասխան տուր։

— Այո՛, կը յուսամ թէ պիտի արդարացնէ։

— Կը յուսա՞ս. բայց կ'աղաչեմ որ անկեղծապէս ինքզինքիդ հարցնես այդ բանը։ Անշուշտ վերջին անդամն է որ իմ առջև այդ

հարցումն ընելու առիթը պիտի ունենաս։ Կ'ըսես թէ կը սիրես զիս, և կը հաւատամ։ Կասկած ունիմ վրադ. կ'ուզես որ մեկնիմ և ժամանակն արդարցնէ քեզի. այս է գիտաւորութիւնդ։

— Եւ ինչ կասկած ունիս վրաս։

— Չէի ուզեր ըսել, վասն զի կը տեսնեմ որ անօգուտ է ըսելը։ Սակայն վերջապէս թշուառութիւն ընդ թշուառութեան, որը կ'ուզես ընտրէ. ինծի համար երկուքն ալ մի և նոյնն է։ Դու կը խաբես զիս, ուրիշ մարդ մը կը սիրես. այս է քու դաղտնիքդ, նաև իմն։

— Զո՞վ, հարցուց Պրիժիթ։

— Սմիթը։

Պրիժիթ ձեռքը շուրթերուս վրայ դրաւ և գլուխն անդին դարձուց։ Ասկից աւելի չեմ կրնար ըսել. ան և ես սկսանք մտմտուքի երթալ՝ դետինը նայելով ակնայեռ։

— Մտիկ ըրէ՛, ըսաւ Պրիժիթ ջանադրութեամբ։ Շատ տառապեցայ, և վկայ է Աստուած թէ կեանքս պատրաստ եմ քեզի համար տալու։ Քանի որ յոյսի նշոյլ մը պիտի մնայ ինձ աշխարհիս մէջ, պատրաստ եմ տակաւին տառապելու. բայց եթէ նաև պարտաւորիմ բարկութիւնդ զրգռել կին եմ ըսելով, կ'ըսեմ թէ կին եմ, բարեկամ։ Պէտք չէ մարդկային զօրութենէն շատ առաջ ոչ ալ աւելի հեռի երթալ։ Երբէք այս մասին չպիտի պատասխանեմ։ Այս միջոցիս միայն մէկ բան կրնամ ընել, այսինքն վերջին անգամ մ'ալ ծունկի վրայ գալ քու առջև և դարձեալ աղերսել քեզի որ մեկնիս։

Պրիժիթ ծռուեցաւ այս խօսքերը ըսելով։ Ոտք ելայ։

— Շատ խենդ է, ըսի դառնութեամբ, շատ խենդ է ո՞վ որ կեանքին մէջ անգամ մը կ'ուզէ կնիկէ մը ճշմարտութիւնը ստանալ։ Միայն արհամարհանքը պիտի ստանայ, և իրօք արժանի է ստանալու։ Ճշմարտութիւնը. ո՜հ, գիտէ՞ զայն ով որ սպասուհիներուն կաշառք կը կերցնէ կամ սպրդելով կը մտի անոնց սենեակն այն միջոցին ուր անոնք երազելով կը խօսին։ Գիտէ՞ զայն ո՞վ որ ինքն ալ կին կ'ըլլայ և իր նուաստութեամբը կ'իմանայ այն ամենն դաղտնիքները որք մտքին մէջ կը շարժին։ Սակայն Ճշմարտութիւնը համարձակապէս ուզող մարդը, այս սոսկալի ողբմութիւնը ստանալու համար ուղղասէր ձեռք մը բացողն երբէք չպիտի ստանայ զայն։ Այս մարդէն զգոյշ կը կենայ կինը. իրը պատասխան ուսերը վեր կ'ընէ, և թէ մարդն ա՛լ չկարենայ պահել համբերութիւնը, այն կինը կ'ելնէ իր առաքինութեան պատուանդանին վրայ կանգ կ'առնու նախատուած Վեսթեան կոյսի մը պէս, և իր շուրթերէն կը թողու կնային մեծ պատգամը, այսինքն թէ կասկածը սէրը կը ջնջէ, և թէ կարելի չէ ներել ինչ որ չկրնար պատասխան առնուլ։ Ա՜խ, արդա՞ր երկինք, ինչպիսի՜ ձանձրութիւն. ե՞րբ պիտի վերջանան այս ամեն բաները։

— Երբ որ ուզես, ըսաւ Պրիժիթ սառնաբեկ ձայնով մը. ես ալ քեզի պէս ձանձրացած եմ։

— Հիմա՛կ, անմիջապէս. յաւիտեան կը թողում քեզի, և թող ժամանակն արդարացնէ քեզի։ Ժամանակը, ժամանակը, ա՜հ, անզգայ սիրուհի, յիշէ՛ այս երթաս բարեաւը։ Ժամանակը, հա՞պա դեղեցկութիւնդ, հա՞պա սէրդ, հա՞պա երջանկութիւնն ո՞ւր գացած պիտի ըլլան։ Մ'թթէ առանց ցաւ զգալու այսպէս կը զրկուիս իրմէ։ Ա՜խ, անշուշտ այն օրն ուր նախանձոտ սիրահարը պիտի խմանայ թէ անիրաւութիւն ըրած է, այն օրն ուր իր անիրաւութեան ապացոյցները պիտի տեսնէ, ինչ սիրտ վիրաւորած ըլլալը պիտի հասկնայ, այնպէս չէ՞. պիտի լայ իր խայտառակութեան վրայ, ա՛լ ոչ ուրախութիւն և ոչ քուն պիտի ունենայ, պիտի ապրի լոկ յիշելու համար թէ ատենօք իր ձեռքն էր երջանիկ ապրիլը։ Սակայն այն օրն իր ամբարտաւան սիրուհին թերևս պիտի ժպտի իր վրէժին լուծուած ըլլալը տեսնելով. ինքնին պիտի ըսէ. «Եթէ աւելի շուտ ըրած ըլլայի»։ Բայց հաւատա՛ ինձ, եթէ այդ սիրուհին սիրած է, ամբարտաւանութիւնը չպիտի մխիթարէ զինքը։

Ուզեր էի հանդարտութեամբ խօսիլ. սակայն չէի զսպեր ինքզինքս. հիմակ ես ալ յուզուած կը քայլէի։ Կան ինչ ինչ նայուածքներ որք սուրի ճշմարիտ հարուածներ են. այն նայուածքները թուրի պէս իրարու կ'ընդհարին. սոյն միջոցին Պրիժիթին հետ ահա այս տեսակ նայուածքներ կ'արձակէինք իրարու։ Կը նայէի իրեն զնդանի մը դրան նայող բանտարկեալի մը պէս։ Իր շուրթե-

բուն վրայի կնիքը քակելու և ստիպելու համար զինքը որ խօսի կեանքս և իր կեանքը վտանգի ենթարկելու պատրաստ էի։

— Ո՞ւր կ՚երթաս, հարցուց Պրիժիթ, ի՞նչ կ՚ուզես որ ըսեմ քեզ։

— Ինչ որ սրտիդ մէջը պահուած է։ Բաւական անզթութիւն չէ՞ ուզածս ինձ կրկնել տալդ։

— Հա՛սպա քու անզթութիւնդ, գոչեց Պրիժիթ, հա՛սպա քու անզթութիւնդ հարիւր անգամ աւելի չէ՞։ Ա՛խ, շա՛տ խենդ է ով որ կ՚ուզէ ճշմարտութիւնը գիտնալ կ՚ըսես։ Խե՛նդ է, կ՚ըսեմ ես ալ, այն կինն որ կը յուսայ թէ կը հաւատան իրեն։ Կ՚ուզես գաղտնիքս գիտնալ, բայց գաղտնիքս քեզի սիրելս է։ Ո՛րքան խենդ եմ. դուն ուրիշ գաղտնիք կը բնտռես։ Այս ժժգնութիւնը, որու պատճառը դուն ես, կ՚ամբաստանես, կը հարցափորձես. խե՛նդ եմ որ լռելեայն ուզեցի տառապիլ, համբերատարութիւնս քեզ նուիրել. ուզեցի արտասուքս պահել քեզմէ, բայց դուն գաղտնապէս կը գիտես իբր ոճրագործութեան մը վկաներ համարելով զանոնք։ Խե՛նդ եմ որ ուզեցի ծովերէն անցնիլ, Գրանսայէն հեռդ սքսորուիլ, հեռի մնալ այն ամէն բաներէ որք սիրեցին զիս, և մեռնիլ այն սրտին վրայ որ կը կասկածի իզմէ։ Խե՛նդ եմ եղեր որ կարծեցի թէ ճշմարտութիւնը նայուածք մը, ձայն մ՚ունի, թէ կը դուշակուի և թէ կը յարգուի այն։ Ա՛խ, երբ կը խորհիմ այս խենդութեանս վրայ, արտասուքս կը խղդէ զիս։ Եթէ վերջն այսպէս պիտի ըլլար, ինչո՞ւ բռնել տուիր ինձ այնպիսի ընթացք մ՚որ մշանջենապէս հանդստութիւնս պիտի վրդովէ։ Խե՛լքս կը թռցունեմ, չգիտեմ թէ ի՞նչ կ՚ըլլամ։

Պրիժիթ լալով վրաս ծռուեցաւ։ «Խե՛նդ եմ, խե՛նդ եմ եղեր, կը կրկնէր կսկծալի ձայնով մը։

— Եւ ի՞նչ է այս, շարունակեց Պրիժիթ, մինչև երբ պիտի յարատևես։ Ի՞նչ կրնամ ընել այս կասկածներուն դէմ, որք անընդհատ կը վերածնին, անընդհատ կ՚այլայլին։ Պէտք է որ ինքզինքս արդարացնեմ, կ՚ըսես։ Ի՞նչ բանի նկատմամբ. մեկնելու, սիրելու, մեռնելու, յուսահատելու նկատմամբ, և՝ եթէ կեղծ զուարթութիւն մը ցոյց տամ, այս զուարթութիւնը կը թշնամանէ քեզի։ Քեզի

համար ամէն բան կը զոհեմ որպէս զի մեկնիմ, բայց դուն մզոն մը ճամբայ չառած ետիդ պիտի նայիս։ Ամենուրեք, միշտ, և ինչպէս ընեմ, թշնամանք կայ, բարկութիւն կայ քու կողմէ։ Ա՛խ, սիրելի՛ որդեակ, եթէ գիտնայիր թէ ինչ սոսկալի ցուրտ, ինչպիսի վիշտ կ՚զգամ երբ կը տեսնեմ թէ սրտին ամենէն պարզ խօսքին դէմ այսպէս կասկած և հեգնութիւն ցոյց կը տրուի։ Այդ կերպով պիտի զրկուիս այն միակ երանութենէն որ կայ աշխարհիս մէջ, և որ է սիրել վստահութեամբ։ Քեզի սիրողներուն սրտին մէջ պիտի մեռցնես ամէն փափուկ և վեհ զգացում, հուսկ յետոյ ա՛լ պիտի հատաս լոկ ինչ որ կոչտ է. սէրէն ոչ այլ ինչ պիտի մնայ քեզ բայց միայն ինչ որ տեսանելի և մատով շօշափելի է։ Երիտասարդ ես, Օդթա՛վ, և տակաւին երկար կեանք մը պիտի վարես. ուրիշ սիրուհիներ պիտի ունենաս։ Այո՛, ինչպէս ըսիր, հպարտութիւնը պզտիկ բան է, և զիս մխիթարողն այն չպիտի ըլլայ. բայց իցիւ թէ քու մէկ արտասրդ օր մը փոխարինէ ինձ այն արտասուքը զոր այս միջոցիս թափել կը տաս ինձ։

Պրիժիթ ելաւ.

«Պէտք է ուրեմն ըսել, պէտք է ուրեմն որ գիտնաս թէ վեց ամիսէ՝ ի վեր գիշեր մ՚անգամ չպառկեցայ առանց կրկնելու իւրովի թէ ամէն բան անօգուտ է և թէ բնաւ չպիտի բուժիս. թէ չեղաւ առաւօտ մ՚ուր արթնցած ըլլամ առանց ըսելու իւրովի թէ պէտք էր փորձել տակաւին. թէ չըսած ես ինձ խօսք մ՚որմէ զգացած չըլլամ քեզմէ զատուելու պարտաւորիլս, թէ չըրիր ինձ զգուանք մ՚որմէ զգացած չըլլամ թէ լաւագոյն էր ինձ մեռնիլը. թէ օր առ օր, վայրկեան առ վայրկեան, միշտ մէկ կողմէն երկիւղ և միւս կողմէն յոյս ունենալով բիւրիցս փորձ ըրի յաղթելու կամ սիրոյս կամ վշտիս. թէ երբ որ սիրտս քեզ բանայի, հեգնաբար անգամ մը կը նայէի սրտիս մինչև յատակը. և թէ երբ կը գոյէի սիրտս, կը թուէր ինձ զգալ թէ անոր մէջ կայ դանձ մը զոր դու միայն կրնայիր վաստնել։ Պատմեմ քեզ այն տկարութիւնները և գաղտնիքները, որք տղայական կ՚երևան որոնց որ չեն յարգեր զանոնք. ըսեմ թէ երբ բարկութեամբ կը ձգէիր զիս, սենեակս առանձին կը մնայի առաջին նամակներդ վերստին կարդալու համար. թէ սի-

բելի վալս մը կայ զոր երբէք 'ի նանիր նուագած չեմ երբ գալդ տեսնելու անհամբերութիւնը շատ սաստիկ կերպով կ'զգայի։ Ա՛խ, դժբաղդ կին, ո՞ւրքան սուղի պիտի նստին քեզ այս ամեն արտասուքները, այս ամեն յիմարութիւններն որք այնքան քաղցր են տկարներուն. լաց հիմա. այդ չարչարանքն անգամ, այդ վիշտն ամենին օգուտ չունեցաւ։

Ուզեցի խօսքը կտրել։

«Թո՛ղ որ խօսիմ, թո՛ղ որ խօսիմ, բաւ Պրիժիթ. պէտք է որ այսպէս խօսիմ քեզ։ Ըսէ նայիմ, ի՞նչ կասկած ունիս ինձի դէմ։ Վեց ամիսէ 'ի վեր մտովին, մարմնովին և հոգւոյն քուկդ եմ։ Ի՞նչ բանի նկատմամբ կը համարձակիս կասկածելու։ Կ'ուզես մեկնիլ և Զվիցերի երթալ։ Կը տեսնես որ պատրաստ եմ հետդ գալու։ Մի՞թէ կը կարծես թէ սիրային ոսոխ մ'ունիս. զրկէ՛ իրեն նամակ մը զոր պիտի ստորագրեմ և զոր դուն նամակատուն պիտի յանձնես։ Ի՞նչ կ'ընենք, ո՞ւր կ'երթանք. որոշում մ'ընենք։ Միասին չենք միշտ։ Քանի որ ենք, ինչո՞ւ կը թողուս զիս, չեմ կրնար քեզի մօտ ու միանգամայն քեզմէ հեռի ըլլալ։ Պէտք է որ մարդս կարենայ վստահիլ իր տարփուհիին, կ'ըսես. իրաւ է։ Սէրը կամ բարիք մ'է, և կամ չարիք մը։ Եթէ բարիք մ'է, պէտք է իրեն հաւատք ընծայել. եթէ չարիք մ'է, պէտք է ազատիլ այս չարիքէն։ Կը տեսնես որ այս ամեն բաները խաղ մ'են զոր կը խաղանք. սակայն մեր սիրան ու կեանքը այս խաղին սակաղին եղած են, և սոսկալի՛ բան մ'է այս։ Կ'ուզե՞ս մեռնիլ. մահդ շուտ պիտի հասնի։ Ո՞վ եմ որ կը կասկածին ինձի դէմ։

Պրիժիթ հայելին առջև կանգ առաւ։

«Քէզի դէմ կասկածի՛լ, գոչեց իւրովի՝ ինքն իր պատկերին ուղղելով խօսքը. խե՛ղճ դուռնատ երես, կը կասկածին քեզի դէմ. խե՛ղճ նիհար այտեր, խե՛ղճ յոգնաբեկ աչեր, կը կասկածին ձեզի և ձեր արտասուքին դէմ։ Լա՛, ուրեմն վերջ տուէք ձեր տառապանաց, թո՛ղ ձեր արտեւանունքը գոցուին այն համբոյրներէն որք չորցուցին ձեզի։ Սա խոնաւ հողին տակն իջի՛ր, խե՛ղճ երերուն մարմին որ ալ հաստատ չես կրնար կենալ։ Երբ հողին տակն ըլլաս, թերևս պիտի հաւատան թաղուելուդ, եթէ կասկածը մահուան

կը հաւատայ։ Ո՛ տրտմալի ուրուական, ո՞ր եղբին վրայ կ'ուզես թափառիլ և հեծել. Ինչ է այն հուրն որ քեզի կը մաշէ։ Ուղևորութեան նպատակներ կը կազմես դո՞ւն որուն մէկ ոտքը դերեզմանին մէջն է։ Մեռի՛ր։ Ստուած վկայ է թէ ուզեցիր սիրել։ Ա՛խ, ինչպիսի՛ հաստատութիւններ, սիրոյ ինչպիսի՛ զօրութիւններ արծարծեցին սրտիդ մէջ։ Ա՛խ, ինչպիսի՛ երազ տեսնելու թոյլ տուին քեզ, և ինչպիսի՛ թոյներով մեռցուցին քեզի։ Ի՞նչ դէշութիւն ըրեր էիր որ տուին քեզ այն հրատապ ջերմը որ կայրէ քեզի։ Ինչպիսի՛ կատղութեամբ կը հրահրուի ուրեմն այն անմիտ արարածն որ ոտքովը քեզի դէպ 'ի գաղաղը կը հրէ մինչդեռ շուրթերը սիրոյ անունը կը տան քեզ։ Ի՞նչ պիտի ըլլաս ուրեմն եթէ տակաւին ապրիս։ Ա՛լ ժամանակը չէ. այսքան ապրիլդ բաւ չէ։ Վշտիդ նկատմամբ ի՞նչ ապացոյց պիտի տաս որ հաւատան անոր մինչդեռ քեզ անգամ, խեղճ կենդանի ապացոյց, խեղճ վկայդ դու, մինչդեռ քեզ անգամ չեն հաւատար։ Ի՞նչ է այն չարչարանքը զոր դեռ կրած չըլլաս և ուզես կրել։ Ինչպիսի՞ տանջանքով, ինչպիսի՞ զոհողութիւններով պիտի հանդարտես ժլատ, անյագ սէրը։ Ծաղր ու ծանակի առարկայ մը պիտի ըլլաս լոկ. 'ի նանիր պիտի բնտռես ամայի փողոց մ'ուրկէ անցնողները մատով ցոյց չտան քեզի։ Ամեն ամօթ պիտի վերցնես, և ա՛լ պիտի չունենաս և ոչ իսկ քու ամենասիրելի այլ դիւրաբեկ առաքինութեանդ արտաքին երևոյթը, և այս պատճառաւ քեզի ամենէն առաջ պիտի պատժէ այն մարդն որու համար պիտի նուաստես։ Ցանցանք մը պիտի սեպէ քեզ միայն իրեն համար ապրիլդ, իրեն համար աշխարհս առ ոչինչ դրելդ, և՝ մինչդեռ քու բարեկամներդ իսկ բոլորտիքդ պիտի մրմրան, անոնց նայուածքին մէջ խուզարկութիւն պիտի ընէ դիտելու համար թէ արդեօք շատ դժուութիւն կայ այն նայուածքին մէջ. պիտի ամբաստանէ քեզի ըսելով թէ կը խարես զինքը, եթէ ձեռք մը տակաւին սեղմէ քուկդ, և եթէ կեանքիդ անապատին մէջ պատահաբար գտնես անձ մ'որ անցնելու առեն կարենայ արդահատիլ վրադ։ Ո՛ Ստուած, կը յիշես ամառնային օր մ'ուր գլուխդ սպիտակ վարդէ պսակ մը դրին։ Այս Ճակատն էր այն պսակը կրողը։ Ա՛խ, այս ձեռքն որ այն պսակը աղօթարանին պատէն կախեց՝ փշրուելով

ընկա՛ւ անոր պէս։ Ո՛ հովիտս, ո՛ պառաւ հօրաքոյրս որ հիմա՝ ի խաղաղութեան կը հանգչիս, ո՛ թմբիններս, պզտի սպիտակ այծս, բարեսիրտ վարձակալներս որք այնքան կը սիրէիք զիս, ատեն մը զիս երջանիկ, սէգ, հանդարտ և յարգի տեսեր էիք, կը յիշէք։ Ո՞վ ուրեմն ճամբուս վրայ նետեց այս օտարականը որ կ՚ուզէ հանել զիս այն ճամբէն. ո՞վ ուրեմն զիս զիս արահետէն անցնելու իրաւունքը տուաւ անոր։ Ա՛խ, թշուառ կին, ինչո՞ւ ետ դարձար այն օրն որ ան ետևէդ եկաւ այն արահետէն. ինչո՞ւ ընդունեցիր զինքն իբր եղբայր մը. ինչո՞ւ դուռը բացիր և ձեռքդ երկնցուցիր իրեն։ Օգ՝ թա՛վ, Օգթա՛վ, ինչո՞ւ սիրեցիր զիս, եթէ ամեն բան այսպէս պիտի վերջանար։»

Պրիժիթ նուաղելու մօտ էր, և բռնեցի զինքը՝ մինչև թիկնաթոռ մ՚ուր ընկաւ ան՝ գլուխը ուսին վրայ դրած։ Բոլորովին ուժաթափ ըրած էր զինքն այն սոսկալի ջանքը զոր ըրած էր այսքան դառնութեամբ ինձ խօսելով։ Փոխանակ թշնամանուած տարփուհիի մ՚ալ յանկարծ ոչ այլ ինչ գտայ ինքն եթէ ոչ զանգատող և տառապող տղայ մը։ Աչքերը գոցուեցան, թեւերովս գրկեցի զինքն և անշարժ մնայ։

Երբ սթափեցաւ Պրիժիթ, սաստիկ նեղութիւն զգալը յայտնեց և սիրաբոյր ձայնով մ՚աղաչեց զիս որ մինակ թողում զինքն որպէս զի անկողինը մտնէ։ Հագիւ կրնար քայլել, մինչև ննջեակը տարի Պրիժիթը և կամաց մ՚անկողնին վրայ դրի։ Ցաւի ամենևին նշան մը չկար իր վրայ. վշտին պատճառաւ հանգիստ կ՚առնուր յոգնութեանը պատճառաւ հանգստացողի մը պէս, և կարծես չէր յիշեր իր վիշտը։ Իր տկար և փափուկ բնութիւնը կ՚ընկրկէր առանց կռուելու, և՝ ինչպէս ինքն ըսած էր՝ ոյժին սահմանէն անդին անցեր էր։ Ձեռքս ձեռքին մէջն էր. գրկեցի զինքը. մեր տակաւին սիրահար շուրթերը միացան կարծես առանց մեր գիտութեան, և այսքան սոսկալի տեսարանէ մ՚ետը Պրիժիթ սրտիս վրայ քնացաւ առաջին օրուան պէս ժպտելով։

ԳԼՈՒԽ Զ

Պրիժիթ կը նիրհէր։ Իր մնարին քովը նստեր էի անմունջ, անշարժ։ Փոթորիկէ մ՚ետը կործանուած դաշտի մը հասկերը համբրող հողագործին պէս սկսայ ինքզինքս քննել և ըրած գէշութիւնս չափել։

Այս չափն առի չառի և ահա անդարմանելի երևցաւ ինձ ըրած գէշութիւնս։ Կան ինչ ինչ վիշտեր որք իրենց ծայրայեղութեամբն իսկ կ՚իմացնեն մեզ թէ ալ վերջացած են, և ո՛րքան ամօթ և խղճի տագնապ կ՚զգայի, նոյնքան կ՚զգայի թէ այսպիսի անցքէ մը ետք մեզ կը մնար միայն մնաս բարեաւ ըսել իրարու։ Պրիժիթ ո՛րքան ալարութիւն ունենար, իր տրտմալի սիրոյ բաժակին մինչև մրուրը քամեր էր. պէտք էր որ ա՛լ հանգստանար, եթէ չէի ուզեր իր մեռնիլը տեսնել։ Շատ անգամ առիթ ունեցած էր սաստիկ յանդիմանութիւններ ընելու ինձ, և մինչև անատեն թերևս աւելի բարկութիւն ցոյց տուած էր անոնց քան թէ այս անգամուան յանդիմանութեանցը մէջ. բայց այս անգամ ինձ ըսած խօսքերը չէ թէ վիրաւոր հպարտութենէ մը թելադրուած խօսքեր էին, այլ ճշմարտութիւնը, որ իր սրտին մէջ բռնի պահուած ըլլալով դուրս ելնելու համար խորտակած էր զայն։

Անկից՝ ի զատ իր հետը մեկնիլ չուզելը և այն պարագան՝ ուր կը գտնուէինք՝ ամեն յոյս անկարելի ըրած էր. Պրիժիթ եթէ ուզեր անգամ ներել, ներելու ոյժը պիտի չունենար։ Իրօք ներելու ոյժ չունենալուն բաւական ապացոյց էր այս քունն անգամ, որ ալ վշտանալու անկարող էակի մ՚անցողական մահն էր. այս յանկարծահաս լռութիւնը, այն հեզութիւնը զոր Պրիժիթ ցոյց տուած էր այսքան տրտմապէս սթափելով, իր ժպտուն երեսը, պահ մ՚առաջ տուած համբոյրն անգամ, վերջապէս ամեն բան կ՚ըսէր ինձ թէ ա՛լ յոյս չկար, և թէ մեզ միացնելու կարող ամեն կապ կտրեր էի ընդ միշտ։ Ինչպէս հիմա կը քնանար Պրիժիթ, նոյնպէս դարձեալ և յաւիտենական քուն պիտի քնանար եթէ այսուհետև ան-

գամ մ՚ալ վիշտ կրէր իրմէ։ Ժամացոյցը զարկաւ, և զդայի թէ անցնող ժամն իր հետը կ՚առնուր կը տանէր կեանքս։

Զուզելով ոչ զրք կարդալ՝ Պրիժիթին ձրագը վառեցի. այս տկար նշոյլին կը նայէի, և դաղափարներս կարծես մութին կը ծփային իրը այն նշոյլին անստոյգ ճառագայթները։

Ինչ ալ կարենայի ըսել կամ ընել, տակաւին բնաւ առջևս չելած էր Պրիժիթէն զրկուելու դաղափարը։ Հարիւր անդամ ուզեր էի թողուլ զինքը. բայց ով որ սիրած է այս աշխարհիս մէջ, շատ աղէկ դիտէ թէ ինչ արդիւնք կ՚ունենայ այսպիսի կամք մը, Պրիժիթը թողուլ ուզելուս շարժառիթն ոչ այլ ինչ էր բայց եթէ յուսահատութիւն կամ բարկութեան շարժումներ։ Քանի որ դիտէի իրմէ սիրուած ըլլալս, խիստ ապահով էի զինքը փոխադարձապէս սիրելու. բայց հիմակ անընկճելի հարկն առաջին անդամ եկած կանկ առած էր մեր երկուքին մէջ։ Կարծես խորին նուաղում մը կը կրէի, ուր ոչինչ կը նշմարէի որոշապէս։ Ղնջեկին քով ծուռեր էի, և թէև առջի վայրկենէն դժբաղդութեանս բոլոր տարածութիւնը տեսեր էի, սակայն այս տարաբաղդութեանս ցաւը չէի զդար։ Տկար և ահարեկ սիրտս կարծես կը նահանջէր ամենեին չտեսնելու համար այն բաները զոր միաքս կը հասկնար։ «Օ՚ն, կ՚ըսէի իւրովի, իրաւ է այս, ես ուզեցի և ըրի այս բանը. ա՛լ չենք կրնար միասին ապրիլ. այս մասին ամենափոքր կասկած մը չկայ. չեմ ուզեր մեռցնել այս կինը, ուրեմն կը պարտաւորիմ թողուլ զինքը։ Ահա որոշեցի. վաղը կը թողում կ՚երթամ։»

Եւ մինչդեռ ինքնին այսպէս կը խօսէի, մտքէս չէին անցներ ոչ անիրաւութիւններս, ոչ անցեալս, ոչ ապագան. այս պահուն չէի յիշեր ոչ Սմիթը, ոչ ալ որ և է բան մը. չէի կրնար ըսել թէ ով այս վիճակին բերած էր զիս, ոչ ալ դիտէի թէ ինչ ըրեր էի ժամէ մ՚ի վեր։ Սենեկին պատերուն կը նայէի, և կարծեմ բոլոր զբաղումս ոչ այլ ինչ էր բայց եթէ խորհիլ թէ հետևեալ օրն ինչ կառքով պիտի մեկնիմ։

Բաւական երկար ատեն այս տարօրէն հանդարտ վիճակին մէջ մնացի։

Դաշտին վերը ընդունող մարդն առջի անդամ երկաթին ցուրտը

կ՚զդայ միայն. տակաւին քանի մը քայլ կ՚առնու իր ճամբուն վրայ, և շուարելով, աչերն ալ մոլորելով, ինքնին կը հարցնէ թէ ինչ ունի և ինչ կ՚ըլլայ։ Սակայն սակաւ առ սակաւ արիւնը կը դայ շիթ առ շիթ. վերքը կիսովին կը բացուի և կը թողու որ արիւնը հոսի. գետինը սեւորակ կարմիր գոյնով մը կը ներկուի, մահը կը հասնի. մարդը մահուան մօտիլը զդալով կը սարսռի և շանթահար կը տապալի։ Ահա ես ալ այսպէս առերեսութապէս հանդարտ ըլլալով դժբաղդութեան զալը կը լսէի. ցած ձայնով կը կրկնէի իւրովի Պրիժիթին ինձ ըսած խօսքը, և իր բոլորտիքը կը պատրաստէի այն ամէն բաները որոնց գիշերուան համար պատրաստուիլը սովորութեամբ գիտէի. ապա իրեն կը նայէի. ետքը պատուհանը կ՚երթայի և հոն կը կենայի ճակատս ապակիներուն փակցնելով լայնատարած, տխուր և ծանր հորիզոնի մ՚առջև. ապա նորէն անկողնին քովը կը դայի։ Միակ դաղափարս էր վաղը մեկնիլ, և սակաւ առ սակաւ այս մտքիս բաւն իմանալի կ՚ըլլար ինձ։

«Ա՛խ, Աստուած իմ, դոչեցի իւրովի յանկարծ, խե՛ղճ սիրուհիս, կը զրկուիմ քեզմէ, և չկրցայ սիրել քեզի։»

Սարսուռ մը տուին ինձ այս խօսքերը, իրը թէ խօսողն ուրիշ մ՚ըլլար և չէ թէ ես. անոնք բոլոր անձիմաստվրայ որոտացին, լարուած տաւիղի մը վրայ որոտացող մրրիկի մը պէս որ պատրաստ է խորտակելու զայն։ Վայրկենի մը մէջ երկու տարուան վշտեր անցան սրտէս, և այս վշտերէն ետք՝ ներկայն իրը անոնց հետեւանքը, իրը անոնց յետին նկարագիրը զիս գրաւեց։ Ինչպէս հասկցնեմ այսպիսի ցաւ մը։ Թերևս մէկ խօսքով հասկցնեմ անոնց որք սիրած են։ Պրիժիթին ձեռքը բռներ էի, և՝ անշուշտ իր քունին մէջ երազելով իմ անունս տուած էր ան։

«Կարելի՞ է այս, կը կրկնէի. ինչ, քեզմէ զրկուիմ. բայց միայն քեզի կրնամ սիրել։ Ինչ. կը մեկնի՞ս. ուրեմն ալ ամէն բան եղաւ, լմնցա՞ւ։ Ինչ. դուն կեանքս, դուն, պաշտելի սիրուհիս, խոյս կը տաս իրմէ, ալ պիտի չտեսնեմ քեզի։ Երբէք, երբէք, կ՚ըսէի բոլորովին բարձրաձայն, և խօսքս Պրիժիթին ուղղելով որ՝ ի քուն էր՝ վերստին կրկնելի՝ իրը թէ պիտի կրնար լսել խօսքս։ «Երբէք մի՛ յուսար այդ բանը. երբէք չպիտի հաւանիմ ատոր։» Բայց սակայն ինչ կայ, ինչ եղաւ. ինչո՞ւ այդքան հպարտ-

տութիւն։ Ա՛լ միջոց մը չկայ քեզ ըրած թշնամանքս ջնջելու, Կ՚աղաչեմ, միասին բնտանենք միջոց մը։ Հազար անգամ չներեցի՞ր ինձ։ Բայց կը սիրես զիս, չկրնաս մեկնիլ, արիութիւն չկրնաս ունենաս մեկնելու։ Ի՞նչ կ՚ուզես որ ընենք ետքը։»

Սոսկալի, ահարկու խեւութիւն մը յանկարծ տիրեց վրաս. կ՚երթեւեկէի, խելքիս փչածը բերնէս դուրս տալով, կահերուն վրայ մահատու զէն մը բնտռելով։ Վերջապէս ծունկի վրայ ընկայ, և գլուխս անկողնին զարկի։ Պրիժիթ՝ շարժում մ՚ըրաւ և խկոյն կանգ առի։

«Եթէ արթնցնեմ, ըսի իւրովի դողալով։ Ի՞նչ կ՚ընես, խե՛ղճդ յիմար։ Թո՛ղ որ քնանայ մինչև առաւօտ. առջևդ տակաւին գիշեր մ՚ունիս զինքը տեսնելու։»

Նորէն տեղս նստայ. այնպիսի վախ մը կը տար ինձ Պրիժիթին զարթումն որ հալիւ շունչ առնելու կը համարձակէի։ Սիրտս կարծես արտասուքիս հետ մի և նոյն ժամանակ կանգ առած էր։ Կեցայ ոտքերս ցուրտէ մ՚որ սրսփուք կը տար ինձ, և կարծես ինքզինքս բռնադատելու համար որ լռէ, իւրովի կ՚ըսէի. «Նայէ՛ սիրուհիդ, նայէ՛ իրեն, տակաւին ներելի է նայիլդ։»

Վերջապէս յաջողեցայ հանդարտելու, և տեղի անոյշ արտասուքի այտերուս վրայէն յամրաբար հոսիլը զգայի։ Արդահատանքը կը յաջորդէր այն կատղութեան զոր կրեր էի։ Թուեցաւ ինձ թէ ողբալին աղաղակ մ՚օգը կը պատռէր. ծուռեցայ սնարին վրայ և սկսայ Պրիժիթին նայիլ, Ի՞նչ թէ բարի հրեշտակս վերջին անգամ ըսած ըլլար ինձ հողիս վրայ գրոշմել անոր սիրելի դէմքը։

Ո՛րքան գունատ էր Պրիժիթ։ Տակաւին կը փողփողէին իր ներկայնաձև և արտասուքէն խոնաւ արտեւանունքը զոր բոլորակ մը կը շրջապատէր. իր մէջքը՝ որ առանօք այնքան թեթև էր՝ իբր բեռի մը ներքև ծռուած կ՚երևար։ Իր նիհար և կապարագոյն այտը կը հանդչէր քնքոյշ ձեռքին, տակաւ և երերուն թևին վրայ. Ճակատին վրայ կարծես կար այն արիւնաթաթաւ փուշէ պսակին գրոշմը որով համբերատարութիւնը կը պսակուի։ Տնակը յիշեցի։ Վեց ամիս առաջ Պրիժիթ որքան թարմագեղ էր, որքան զուարթ, համարձակ, անհոգ էր։ Ի՞նչ ըրեր էի այս ամենը։ Կը թուէր ինձ թէ անծանօթ ձայն մը նորէն կ՚երգէր հին երգ մը զոր երկար առնել չ՚վերմոռցած էի։

Altra volto gieri biele,
Blanch'e rossa, com' un' flore,
Ma ora, no. Non son piu biele,
Cons ummatis dal' amore. (*)

Առաջին սիրուհիս հին երգն էր այս, և այս մելամաղձային գուեհիկ բարբառն առաջին անգամ յայտնի և խմանալի կ՚երևար ինձ։ Կը կրկնէի այս երգը իբր թէ մինչև անատեն յիշողութեանս մէջ լոկ պահած ըլլայի զայն առանց հասկնալու։ Ինչո՞ւ սորվեր էի և ինչո՞ւ կը յիշէի սոյն երգը։ Ահա հիմակ առջևս էր թօշնած ծաղիկս, մաշուած էր սէրն և պատրաստ մեռնելու։

«Նայէ՛ իրեն, ըսի իւրովի՝ հեծկլտալով, նայէ՛ իրեն։ Միտրդ բեր այն մարդերը որք կը դանդատին թէ չեն սիրուիր իրենց սիրուհիներէն. դու քուկինդ սիրուած ես. քուկինդ անձնատուր եղած է քեզ. բայց դուն կը զրկուիս իրմէն, դուն չկրցար սիրել զինքը։»

Սակայն ցաւը շատ խիստ էր. ելայ և նորէն քայլեցի։

«Ա՛յո՛, շարունակեցի, նայէ՛ սիրուհիդ. միտրդ բեր այն մարդերը զոր ձանձրոյթը կը լափէ և որք կ՚երթան ուրիշ տեղ կը կրնան վիշտ մ՚որուն ուրիշը մատնակից չէ։ Ուրիշներն ալ կրեցին այն ցաւերը որոնցմով տառապեցար, բայց քու ամեն բանդ, ցաւդ ալ, ուրախութիւնդ ալ միանակ չմնաց։ Միտրդ բեր այն մարդերը որք կ՚ապրին մայր, աղջկան, շուն, բարեկամ չունենալով. միտրդ բեր այն մարդերը որք կը ընտանեն և չեն գաներ, այն մարդերը որք կը լան և կը ծաղրուին, այն մարդերը որք կը սիրեն և կ՚արհամարուին, այն մարդերը որք կը մեռնին և կը մոռցուին։ Քու առջև, հոգ, այդ ննջեկին մէջ կը նիրհէ էակ մը զոր բնութիւնը թերևս քեզի համար ստեղծած է։ Իմացականութեան ամենէն բարձր շրջաններէն նիւթին և ձևին մինչև ամենէն անեմափանցելի գազանին այդ

(*) Առանօք գեղանի, ծաղկի մը պէս ապիտակ եւ կարմիր էի, բայց հիմակ ոչ։ Ա՛լ գեղանի չեմ, սէրը մաշեց զիս։

հոգին և այդ մարմնը եղբայրներդ են. վեց ամիսէ 'ի վեր բերանդ չբաս խօսքը, սիրտդ չունեցաւ բախում մ'որու խօսք մը, բախում մը պատասխանած չըլլայ. և այդ կինը զոր Աստուած քեզ կը ղրկէր՝ ինչպէս ցողը խոտին կը ղրկէ՝ այդ կինը, կ'ըսեմ, լոկ սահած պիտի ըլլայ սրտիդ վրայէն: Այդ անձը, որ առաջի Աստուծու թեւարաց եկած էր իր կեանքը և հոգին քեզ տալու համար, շուքի մը պէս աներևոյթ եղած պիտի ըլլայ, և այս շուքէն արտաքին երևոյթի հետը մ'անդամ չպիտի մնայ: Մինչդեռ շուրթերդ իր շուրթերուն կը հպէին, մինչդեռ թեւերդ իր վզին կը փաթէին, մինչդեռ յաւիտենական սիրոյ հրեշտակները իրը մի էակ կը կապէին ձեզի հեշտութեան արենային կապերովը, իրարմէ հեռի էիք այնքան ոբքան են երկրիս երկու ծայրերը զանուող և իրենց միջևն ամբողջ աշխարհս ունեցող երկու տարագիրներ: Նայէ այդ կնոջ, և մանաւանդ լուռ կեցիր: Տակաւին դիշէր մ'ունիս տեսնելու զինքը, եթէ հեծկլտուքէդ չարթննայ:»

Սակաւ առ սակաւ գլուխս սաստիկ կը տաքնար. ևս քան զևս տխուր գաղափարներ կը յուզէին և կը զարհուրեցնէին զիս, անդիմադրելի զօրութիւն մը զիս դէպ 'ի սիրտս և խիղճս կը մղէր ինքզինքս քննելու և հարցուփորձելու համար:

Դէշութիւն ընել. այս է եղեր ուրեմն այն պաշտօնը զոր կատարելու հարկադրած էր զիս Նախախնամութիւնը: Ես դէշութիւն ընեմ, ես որուն՝ խիղճս կատաղի բարկութեանցս միջոցին իսկ՝ կ'ըսէր սակայն թէ բարի եմ. ես զոր անգութ Ճակատագիրն անգունդի մը մէջ անընդհատ դէպ առաջ կը քշէր կը տանէր, և որու մի և նոյն ժամանակ գաղտնի սարսափ մ'անընդհատ ցոյց կը տար այն անդունդին խորութիւնն ուր կ'ընկնէի. ես որ ամենուրեք, ամեն բանի հակառակ, և ոՀիր մը գործած և սա ձեռներովս արիւն թափած ըլլայի անդամ, դարձեալ ինքնին պիտի կրկնէի թէ սիրտս յանցաւոր չէ, թէ կը սխալիմ, թէ այսպէս վարուողն ես չեմ, այլ Ճակատագիրս, այլ չար ոգիս, այլ չգիտեմ ինչ էակ մ'որ յիս կը բնակի առանց սակայն յիս ծնած ըլլալու, ես, կ'ըսեմ, դէշութիւն ընեմ: Վեց ամիսէ 'ի վեր այս չարութեան պաշտօնը կատարեր էի. չանցած էր օր մ'ուր այս ամբարշտութեան համար աշխատած չըլլայի, և ասոր ապացոյցը սոյն միջոցին իսկ առջևս էր: Ես էի եղեր այն մարդն որ Պրիժիթը սիրած, թշնամանած, ապա նախատած, ետքն երեսի վրայ ձգած, լքանելէն ետք վերստին առած, սաստիկ վախցուցած, կասկածներով պաշարած և վերջապէս նեստած էի սա վշտալի անկողնին վրայ ուր երկնցած կը տեսնէի զինքը: Ձեռներս սրտիս կը զարնէի և Պրիժիթը տեսնելով չէի կրնար հաւատալ իրեն: Պրիժիթին կը նայէի հոգեպիշ. ձեռքովս իրեն կը դպչի՝ հաւաստի ըլլալու համար թէ երազէ մը չեմ խաբուիր: Զարմանօք ինձ կը նայէր խեղճ երեսս զոր հայելիին մէջ կը նշմարէի: Ի՞նչ էր այս արարածն որ ինձ կ'երևար դէմքովս. ի՞նչ էր այս անգութ մարդն որ բերանովս կը հայհոյէր և ձեռներովս տանջանք կը տար: Մի՞թէ այն անձն էր զոր մայրս Օգթաւ կ'անուանէր, մի՞թէ ան էր որ ատենօք տասնուհինգ տարեկան հասակն ունեցած ժամանակ անտառներուն մէջ և մարգերուն վրայ տեսեր էի վՀիտ աղբիւրներու քով որոնց կը ծուէի անոնց ջուրերուն վանակնին պէս յստակ սիրտով մը:

Աչքս գոցելով մանկութեանս օրերը միտքս կը բերէի: Բիւր յիշատակներ կը գային սրտէս կ'անցնէին ամպ մը Ճդքելով անցնող արևու Ճառագայթի մը պէս:»

«Զէ, կ'ըսէի իւրովի, ես այս բանը չըրի: Անհնարին երազ մ'են այն ամեն բաներն որք այս սենեկին մէջ կը շրջապատեն զիս:

Կը յիշէի այն ժամանակն ուր սիրտս անգէտ էր, ուր կեանքի ասպարէզին մէջ առած առաջին քայլերուս հետ սրտիս բացուիլը կ'զգայի: Կը յիշէի ծեր մուրացիկ մ'որ ագարակի մը դրան առջև քարէ նստարանի մը վրայ կը նստէր, և որու երբեմնակի առտուները նախաճաշէն ետք մեր կերակուրներուն մնացորդները կը ղրկէին ինձի հետ: Այն տկարացած, կորացած աղքատին իր խորշոմուտ ձեռները երկնցնելով և ժպտելով զիս օրհնելը կը տեսնէի: Կ'զգայի թէ առաւօտուան հովը քունքիս վրայէն կը սահէր, կ'զգայի չգիտեմ ինչպիսի յօդանման բան մ'որ յերկնուստ հոգիս վրայ կ'իջնէր: Ցանկարծ աչերս կը բանայի, և Ճրագին նշոյլը վերստին առջևս ցոյց կը տար իրականութիւնը:

«Եւ ինքզինքդ յանցաւոր չես կարծեր, հարցուցի իւրովի սար-

տափելով։ Ո՛ երեկուան ապականուած աշակերտ դու, լալով անմեղ կը կարծես քեզի։ Ինչ որ խղճիդ վկայութիւնը կ'երևայ քեզ թերևս ոչ այլ ինչ է բայց եթէ տագնապը, և որ մարդասպանը չզարթ խղճի տագնապ։ Եթէ առարինութիւնդ կը գոչէ քեզ թէ կը տառապի, ո՞վ կ'ըսէ քեզ թէ մեռնիլը զղալուն համար չէ գոչելը։ Ո՛ ապերաս, կը կարծե՞ս թէ հեծկլտուք են այն հեռաւոր ձայներն որոնց սրտիդ մէջ հեծելը կը լսես. թերևս այն աղաղակները հանողն է որորը, փոխորիկներուն սպալի թռչունը զոր նաւաբեկութիւնն իրեն կը կոչէ։ Ո՞վ պատմած է քեզ երբէք արիւնաթաթաւ մեռնողներուն մահկութիւնը։ Ասոնք ալ ատեն մը բարի եղած են. անոնք ևս իրենց ձեռքը իրենց երեսին վրայ կը դնեն այն ժամանակը յիշելու համար։ Դէշութիւն կ'ընես և կը ղջանա։ Ներուն ևս զղջայ երբ իր մայրը մեռցուց։ Ո՞վ ըսաւ քեզ թէ արտասուքը կը լուայ մարդս։

«Բայց եթէ նաև ատ ատանկ ըլլայ, եթէ նաև Ճշմարիտ ըլլայ հոգիդ մէկ մասին բնաւ դէշութեան չվերաբերելը, ինչ պիտի ընես միւս մասը որ դէշութեան պիտի վերաբերի։ Զախ ձեռքովդ պիտի շշափես այն վէրքը զոր աջ ձեռքդ պիտի բանայ. առաքինութեամբդ պատանք մը պիտի շինես ոճիրներդ անով թաղելու համար։ Պիտի զարնես, և՝ Պրիթիսին պէս՝ Պղատոնին շաղակրատութիւնները թուրդ վրայ պիտի փորագրե՞ս։ Թևերը քեզ բացող անձին սրտին խորը պիտի մխես այդ ամբարտաւան և արդէն ղջայող զէնքը. գերեզմանատունը պիտի տանիս կրիցդ մնացորդները, և անոնց գերեզմանին վրայ գթութեանդ ամուլ ծաղկին տերեւիկները պիտի թափթփես. քեզի տեսողներուն պիտի ըսես. «Ինչ ընեմ. մեռցնել սորվեցուցին ինձ, և դիտէ որ տակաւին կը լամ մեռցուցած ըլալուս համար և թէ Ստուած լաւագոյն ըրած էր զիս։» Երիտասարդութեանդ վրայ պիտի խօսիս, դուն ինքզինքդ պիտի համոզես թէ երկինք կը պարտաւորի ներել քեզ, թէ դժբաղդութիւններդ ակամայ են, և տքնութեան գիշերներուդ Ճառ պիտի խօսիս որպէս զի քիչ մը հանգիստ թողուն քեզ։

«Բայց ո՞վ գիտէ. տակաւին երիտասարդ ես. քանի՞ սրտիդ վստահիս, այնքան հպարտութենէդ պիտի մոլորիս։ Ահա այսօր կը գտնուիս առաջին աւերակին առջև զոր Ճամբուդ վրայ պիտի թողուս։ Եթէ Պրիժիթ մեռնի վաղը, իր գաղաղին վրայ պիտի լաս. բայց գինքը ձգելէդ ետք ո՞ւր պիտի երթաս։ Պիտի մեկնիս թերևս երբեք ամիսուան համար, և Իտալիա ուղևորութիւն մը պիտի ընես. կեանքին ձանձրացող Անգղիացիի պէս բոլորովին վշտաբեկ և առանձին պիտի ապրիս, և օրին մէկին առտու՝ պանդոկի մը ներսը գինի խմելէդ ետք պիտի ըսես իրովի թէ խղճի տագնապները հանգարտեցան և թէ ժամանակն է մոռնալու և նորէն ապրելու։ Դուն որ կ'սիսիս շատ ուշ լալ, զգուշացիր որ օր մը չլաս։ Ո՞վ գիտէ. թող մէկը գայ ծաղրէ այս վիշտերը զոր զգացուած կը կարծես դուն. թող օրին մէկը պարահանդէսին մէջ գեղանի կին մը կարեկցաբար ժպտի երբ իրեն պիտի ըսես թէ մեռած սիրուհի մը կը յիշես, չե՞ս կրնար ատի քեզի փառք մը համարիլ և յանկարծ հպարտանալ այն իրողութեան վրայ որ այսօր սաստիկ վիշտ կը տայ քեզ։ Երբ նելլ՞ կայն՝ որմէ կը՞ սարսուիս՝ և որու չես համարձակիր ուղղակի նայելու՝ անցեալը, հին պատմութիւն մը, խառնաշփոթ յիշատակ մը պիտի ըլլայ, արդեօք պիտի կրնաս գիշերին մէկն աթոռիդ վրայ նեստիլ անառակներու հետ ընթրիք մ'ընելու ժամանակ, և ժպտելի շրթունս պատմել ինչ որ արտասուելով տեսար. մարդս այսպէս յանձն կ'առնու ամեն խայտառակութիւն, այսպէս կը քայլէ այս աշխարհիս մէջ։ Նախ բարեսիրտ եղար դուն, հիմա տկար կ'ըլլաս, եաքն ալ չարասիրտ պիտի ըլլաս։

«Խեղճ բարեկամս, ըսի իրովի սրտիս ներսէն. քեզի խրատ մը պիտի տամ. այսինքն կը կարծեմ թէ քեզ պէտք է մեռնիլ։ Մինչդեռ բարեսիրտ ես այս միջոցիս, պատեհ առիթ սեպէ սոյն միջոցը՝ ալ չարասիրտ չըլլալու համար. մինչդեռ կին մը՝ զոր կը սիրես՝ հոգ առջևդ, այդ անկողնին վրայ մահուան դուռը հասած է, և քանի որ դու ինքզինքէդ կը սարսափիս, ձեռքդ կուրծքիդ վրայ դիր. այդ կինը տակաւին կենդանի է. գոյէ աչերդ և ալ մի բանար. ներկայ մի՛ գտնուիր իր յուզարկաւորութեան հանդէսին, վախնալով որ վաղը չմոխիթարուիս ներկայ գտնուած ըլլալովդ. դաշնով մը վերջ տուր կեանքիդ մինչդեռ կրած սիրդ տակաւին կը

սիրէ այն Աստուածը որ զայն ստեղծեց։ Մի՞թէ երիտասարդութիւնդ է քեզի կեցնողը. մի՞թէ մազերուդ գոյնն է գթութեանդ առարկան։ Մի՞ թողուր երբէք որ Ձերմկին մազերդ եթէ այս դիշեր Ձերմկին։

«Բայց եթէ չհաւանիս այսպէս վարուելու, ինչ ընել կ'ուզես աշխարհիս մէջ։ Եթէ դուրս ելնես. ո՞ւր կ'երթաս։ Ի՞նչ կը յուսաս եթէ մնաս։ Ա՛խ, այդ կնոջ նայելով ո՞չ ապաքէն կը թուի քեզ թէ սրտիդ մէջ տակաւին պահուած դանձ մ'ունիս։ Ո՞չ ապաքէն ընելու կորուստդ է չէ թէ ինչ որ եղաւ այլ ինչ որ կրնար ըլլալ, և թէ ամենէն գէշ մնաս բարեն է զլալ թէ ամեն բան չըսուեցաւ։ Ինչո՞ւ ժամ մ'առաջ չ'իր խօսեր։ Տակաւին կրնայիր երջանիկ ըլլալ երբ ժամացոյցին սա սլաքը սա տեղն էր։ Եթէ կը տառապէիր, ինչո՞ւ սիրտդ չէիր բանար. եթէ սէր ունէիր ինչո՞ւ չէիր ըսեր։ Ահա կը նմանիս իր գանձը հողին տակը թաղող և անոր վրայ նօթի մեռնող մարդուն. դուռդ գոցեցիր, ապահդ դու, և հիմա նիգերուդ ետևը կը յուզուիս։ Ցնցէ՛ ուրեմն այդ նիգերը. հասատտուն են, ձեռներէդ դարբնուած են անոնք։ Ո՛ անմիտ դու որ փափաք ունեցար և փափաքդ վայելեցիր, միաբդ չբերեր էիր Ընթարիչը։ Երջանկութեան հետ կը խաղայիր խաղալիկ ունեցող մանկան մը պէս, և չէիր խորհեր թէ որքան հաղուագիւտ և դիւրաքեկ էր ինչ որ ձեռքիդ մէջն էր, կ'անարգէիր երանութիւնդ, կը ժպտէիր իր վրայ, չէիր փութար զայն վայելելու, և չէիր հաշուեր այն աղօթքը զոր նոյն միջոցին բարի հրեշտակդ կ'ընէր այդ օրուան մը ստուերը քեզ պահելու համար։ Ո՛հ, եթէ երկնից վրայ կայ հրեշտակ մ'որ քու վրայ հսկած ըլլայ, այս պահուս ինչ կ'ըլլայ այն հրեշտակը։ Երգեհոնի մ'առջև նստած է. իր թեերը կիսովին բացուած են, ձեռներն ալ փղոսկրեայ ստեղնաշարին վրայ երկնցած. յաւիտենական օրհներգութիւն մը կ'սկսի, սիրոյ և անմահ մոռացման օրհներգութիւնը։ Սակայն իր ծունգերը կ'երերան, թեերը կ'ընկնին, գլուխը կը ծռուի կարուած եղէգի մը պէս. մահուան հրեշտակն իր ուսին դպաւ, և ահա անբաւութեան մէջ անհերևոյթ կ'ըլլայ այն պահապան հրեշտակը։

«Եւ դուն, քսան երկու տարեկան հասակիդ մէջ մինակ կը մնաս երկրիս վրայ, երբ ազնիւ և վեհ սէր մը, երբ ոյժն և երիտասարդութիւնը թերևս պատրաստ էին քեզմով բան մը կազմելու։ Այդքան երկար ձանձրոյթներէ, այդքան կսկծալի վիշտերէ, այնքան վարանումներէ, այդքան զեղխ երիտասարդութենէ մ'ետք մինչդեռ կրնայիր հանդարտ և անարատ լոյսի մը քու վրայ ծագիլը տեսնել, մինչդեռ պաշտելի էակի մը յատկացած կեանքդ կրնար նոր հիւթով մը լեցուիլ, ահա այն միջոցին ամեն բան անդունդը կը գլորի և անհերևոյթ կ'ըլլայ քու առջև։ Ահա հիմակ քեզ կը մնան չէ թէ անորոշ փափաքներ, այլ իրական ցաւեր, չէ թէ ալ դատարկ, այլ ամայի ձգուած սիրտ մը։ Եւ կը վարանիս։ Ի՞նչ կ'ըսպասես։ Քանի որ Պրիժիթ ալ չուզեր կեանքդ, թող ալ կեանքդ ամենևին կարևորութիւն մը չունենայ։ Քանի որ ան կը թողու քեզի, դուն ալ աշխարհս թող։ Քու վրայ թող լան որոնք որ երիտասարդութիւնդ սիրեցին. բազմաթիւ չեն սիրողները։ Ո՛վ որ անմոռուչ մնաց Պրիժիթին քով, կը պարտաւորի ընդ միշտ համբ մնալ։ Թող իր սրտին վրայէն անցնողը գէթ հոն ձգած հետքը անեղծ պահէ։ Տէր Աստուած, եթէ տակաւին կ'ուզես ապրիլ, պէտք է, ո՞չ ապաքէն հարկ է ջնջել այդ հետքը։ Թշուառ շունչդ պահելու համար զայն բոլորովին ապականելէն 'ի զատ ի՞նչ միջոց կրնայ մնալ քեզ։ Այո՛, հիմակ այդ շունչը ապականելու թեւութեամբ կրնաս կեանքդ պահել։ Այդ կեանքին տանելու համար կը պարտաւորիս ոչ միայն սէրը մոռնալ, այլ նաև անսովորիլ (désapprendre) անոր էութեան. ոչ միայն ուրանալ ինչ որ բարի էր 'ի քեզ, այլ նաև մեռցնել ինչ որ տակաւին կրնայ բարի ըլլալ 'ի քեզ. վասն զի ի՞նչ պիտի ընես եթէ յիշես այն բարի հանդամանքդ։ Երբ քայլ մ'առնուս երկրիս վրայ, երբ խնդաս կամ լաս, երբ ուզես աղքատի մ'ողորմութիւն տալ, երբ պիտի կրնաս քառորդ մը բարեսիրտ ըլլալ, արիւնդ անմիջապէս դէպ 'ի սիրտդ եռ դառնալով պիտի դոչէ քեզ թէ Աստուած բարեսիրտ ստեղծած էր քեզի որպէս զի Պրիժիթ երջանիկ ըլլայ։ Ամենափոքր գործերդ պիտի որոտան սրտիդ մէջ, և իրը մեծաձայն արձագանքներ հոն դժբաղդութիւններդ պիտի պարտաւորեն հեծելու. սրտիդ մէջ ցաւ մը պիտի արծարծեն այն ամեն բաներն որք պիտի յուզեն զայն, և յոյսը, որ երկնային բաներու մ'է, որ մեզի ապրելու հրաւիրող

սուրբ բարեկամ մ'է, յոյսն ինքն անգամ քեզի համար անողոքելի ուրուականի մը պիտի փոխուի և անցելոյն համաձին (jumeau) եղբայրը պիտի ըլլայ. բան մը բռնելու ամէն փորձերդ երկարատև դիղջ մը պիտի ըլլան միայն: Երբ մարդասպանը մութին կը քալէ, ձեռները կուրծքին վրայ սեղմած կը բռնէ, վախնալով որ բանի մը չդպնայ և պատերէն չամբաստանուի: Դուն ալ պիտի պարտաւորէիր այդպէս ընել. ընտրութիւն մ'ըրէ հոգիիդ կամ մարմնոյդ նկատմամբ. երկուքին մէկը կը պարտաւորիս մեռցնել: Բարութեան յիշատակը չարութեան դիրքը կը ղրկէ քեզի. դիակ մը ըրէ ինքզինքդ եթէ չես ուզեր դու քու ուրուականդ ըլլալ: Ո՛ պատանի, ո՛ պատանիդ դու, պարկեշտ մեռիր, թող կարենան լալ գերեզմանիդ վրայ:»

Անկրճնին սառրոսը նետուեցաւ գլխովին համակուելով այնպիսի սոսկալի յուսահատութեամբ մ'որ խելքս գլխէս կը թռէր և ալ չէի գիտեր թէ ուր էի և ինչ կ'ընէի: Պրիժիթ հաւաչեց անգամ մը, և իր սպիտակ և մերկ կուրծքը բացաւ մեկուսելով իր վրան ծածկուած սաւանը՝ իբր թէ տաղտուկ բեռի մը ներքև ճնշուած ըլլար:

Այս սպիտակ և մերկ կուրծքը տեսնելով բոլոր զգայութիւններս յուզուեցան: Ցաւ էր թէ ցանկութիւն այս յուզումը. չգիտեմ ամենեին: Սոսկալի գաղափար մը յանկարծ սարսուռ տուած էր ինձ:

«Ինչ, ըսի իւրովի, ուրիշի մը թողում ասի, մեռնիմ, հողին տակն իջնեմ մինչդեռ այս սպիտակ կուրծքը երկնային դմբեթին օրը պիտի ընէ: Արդար երկինք. իմինէս տարբեր ձեռք մը հպի այս բարակ և թափանցիկ կաշիին, ուրիշ բերան մ'այս շուրթերուն վրայ, և ուրիշ սէր մ'այս սրտին մէջ, ուրիշ մարդ մը հոս, այս մարին քովը գտնուի: Պրիժիթ երջանիկ, կենդանի ըլլայ, պաշտուի, իսկ ես գերեզմանատան մը խորշը փոսի մը մէջ ի՛ հող դառնամ:

«Եթէ վաղը մեռնիմ, Պրիժիթ ո՛րքան ժամանակ պիտի չմոռնայ զիս, ո՞րքան պիտի արտասուէ, թերևս ամենեին: Զկայ բարեկամը, մարդ մ'որ իրեն մօտելով չըսէ թէ մահս բարիք մ'է, որ չփութայ մխիթարելու զինքը մահուանս զէմ, և որ չաղերսէ զինքն ալ չիսրհելու անոր վրայ: Եթէ լայ Պրիժիթ, պիտի ուզեն սփոփել

զինքը. եթէ յիշատակէ մը գրաւուի, պիտի մեկնսեն այն յիշատակը. եթէ մեռնելիս ետք իր վրայ ունեցած սէրը շարունակուի, պիտի բուժեն զինքը իբր թունաւորեալ մը, և ինքն իսկ, որ առջի օրը թերևս պիտի ըսէ թէ կ'ուզէ ետևէս գալ, ամիսէ մ'ետք ետին պիտի դառնայ 'ի հեռուստ չտեսնելու համար վարատոր ուրուն որ գերեզմանիս վրայ անկուած պիտի ըլլայ: Ինչպէս կրնայ ուրիշ կերպով վարուիլ կին մ'երբ այսքան դեղանի է, որուն վրայ կը ցաւի: Վշտահար մեռնիլ ուզէ անգամ, այս գեղափայլ կուրծքը պիտի բսէ իրեն թէ կ'ուզէ ապրիլ, և հայելի մը Պրիժիթը պիտի համոզէ ապրելը. և այն օրն ուր ցաւածի արտասուքին պիտի յաջորդէ առաջին ժպիտը, ո՞վ պիտի չշնորհաւորէ զինքը իր վշտէն ազատած և ապաքինութիւնը գտած ըլլալուն համար: Ութօրեայ լռութենէ մ'ետք երբ Պրիժիթ պիտի սկսի ներել որ անունս տրուի իր առջև վասն զի ինքն իսկ անունիս վրայ պիտի խօսի սիրաբեկ թոլութեամբ մը նայելով, իբր թէ ուզէր «Մխիթարեցէք զիս» ըսել, ապա երբ սակաւ առ սակաւ չէ թէ զգուշանալ յիշատակէս, հապա ալ չխօսիլ իր վրայ, և երբ գարնանային գեղածիծաղ առաւօտներն իր պատուհանները պիտի բանայ, երբ թռչունները ցօղին մէջ պիտի դայլայլեն, երբ պիտի սկսի մտախոհել և «Սիրեցի՛» ըսել, ո՞վ պիտի ըլլայ հոն, ո՞վ պիտի զտնուի քովը, ո՞վ պիտի համարձակի ըսելու իրեն թէ պէտք է տակաւին սիրել: Ա՜խ, անատեն ես ալ հոն չպիտի գտնուիմ: Մտիկ պիտի ընես իրեն, գրուժան. պիտի ծռուիս՝ փիթեալու պատրաստ վարդի մը պէս կարմրելով, և գեղեցկութիւնդ, երիտասարդութիւնդ գէմքիդ վրայ պիտի ծաւալին: Ըսելով հանդերձ թէ սիրտը գոցուած է, պիտի հաւանիս որ այդ սրտէն ելնէ այն թարմագեղ փառապսակն որուն մէն մի ճառագայթը հարիւր մը կը հրաւիրէ: Որքան կ'ուզեն սիրուիլ այն կիներն որք կ'ըսեն թէ ալ չեն սիրեր: Եւ ինչո՞ւ զարմանամ: Կին մ'ես դուն. գիտես թէ ինչ կ'արժեն այդ մարմինը, այդ սպիտակափայլ վիզը, վասն զի ըսին քեզ անոնց արժէքը. երբ զգեստիդ տակ կը պահես այդ մարմինը, այդ վիզը, կոյսերուն պէս դուն ալ չես հաւատար թէ ամէն կին քեզ կը նմանի և ամենազաւուութեանդ զինքը պիտես: Այն կինն՝ որ գովուած է՝ ինչպէս կրնայ հաւանիլ ալ

չգովուելու. ինքզինքը կենդանի կը սեպէ եթէ աներևոյթ մնայ և եթէ իր գեղեցկութեան բոլորտիքը լուութիւնը տիրէ: Իր գեղեցկութիւնն անգամ իր սիրողին գովեստն ու նայուածքն է: Զէ, զէ, այս մասին պէտք չէ տարակուսիլ. ով որ սիրած է, ալ չկրնար անսէր ապրիլ. ով որ մահ մը կը սորվի, կեանքին կը յարի: Պրիժիթ կը սիրէ զիս, և թերևս այս սէրը մեռցնէ զինքը. պիտի մեռցնեմ ինքզինքս, և անատեն ուրիշ մը պիտի վայելէ իր սէրը:

«— Ուրիշ մը, ուրիշ մը, կը կրկնէի ծռուելով, անկողնին վրայ կռթնելով, և ճակատս իր ուսին քսելով: Պրիժիթ այրի կին մը չէ, ըսի մտապէս. արդէն մահը չտեսած է. այս պզտի քնքուշ ձեռներն արդէն խնամք տարած և թաղած չէ՞ն: Իր արտասուքը գիտէ իր որքան տևելը, այսինքն մանրերկրորդներէ քիչ տևելը: Ա՛խ, Աստուած պահէ զիս. մինչդեռ կը քնանայ Պրիժիթ, ինչ բան կ'արգիլէ զիս մեռցնելու զինքը: Եթէ հիմա արթնցնեմ և ըսեմ թէ իր ժամը հասած է և թէ վերջին համբոյրի մը մէջ պիտի մեռնինք, պիտի հաւանի անշուշտ: Հոգս է. ապահով ենք թէ ամէն բանին վերջն այս չպիտի ըլլայ:»

Սեղանին վրայ դանակ մը դտեր էի և ձեռքս կը բռնէի:

«Երկի՛ւղ, վատութի՛ւն, նախապաշարում ըսողներն ինչ գիտեն այս մասին: Ժողովուրդին և տգէտներուն համար հանդերձեալ կեանքի մը խօսքը կ'ընեն, բայց սրտովին ով կը հաւատայ այս հանդերձեալ կեանքին: Մեր գերեզմանատանց պահնորդներէն ով մեռելի մը գերեզմանէն ելնելը և երթալով քահանայի մը դուռը զարնելը տեսեր է: Հին ժամանակները միայն ուրուականներ կը տեսնուէին. ոստիկանութիւնը կ'արգիլէ ուրուականներն մեր կրթուած քաղաքներուն մէջ երևալու, և ալ հողին տակէն գոչողներն են ըսկ այն կենդանիներն որք ճճապարումով թաղուած են: Եթէ երբէք մահը խօսած ըլլար, ով երբէք համր ըրած պիտի ըլլար զայն: Մի՞թէ թափօրը մեր փողոցները դրաւելու իրաւունքն ալ չունենալուն համար է որ երկնային ոգին կը հաւանի մոռցուելու. Մեռնի՛լ, այս է ահա վախճանը, նպատակը: Աստուած այս նպատակը տուաւ, մարդիկ կը վիճին անոր վրայ. սակայն իւրաքանչիւր որ իր ճակատին վրայ գրուած ունի «Ըրէ՛ ինչ որ կ'ուզես, բայց պիտի մեռնիս» խօսքը: Ինչ պիտի ըսուի եթէ մեռցնեմ Պրիժիթը. ոչ ինքն և ոչ ես բան մը չպիտի ըսենք: Վաղը մէկ օրագրի մէջ պիտի գրուի թէ Օգթաւ տը Թ. . . իր սիրուհին մեռցուց, և միւս օրն ալ խօսքը չպիտի ընեն: Ո՞վ պիտի գայ մեր ետևէն յուղարկաւորութեան հանդէսին: Ոչ ոք որ իր տունը դառնալով հանդարտօրէն չնախաճաշէ, և մենք մինչդեռ այս միօրեայ տղմին տակ քով քովի երկնցած պիտի ըլլանք, աշխարհս պիտի կրնայ մեր վրայ քայլել առանց իրեն քայլերուն դղռտուքովը մեզի արթնցնել կարենալու: Հոն, այն տղմին տակ հանգիստ պիտի մնանք, այնպէս չէ՞, ամենասիրելիդ իմ Պրիժիթ: Կակուղ անկողին մ'է հողը. չկայ վիշտ մ'որ անոր տակ գրաւէ մեզի. մօտակայ գերեզմաններուն մէջ չպիտի շաղակրատեն Աստուծու առջև մեր կազմած ամուսնութեան վրայ. մեր ոսկերոտիքը խաղաղութեամբ և առանց հպարտութեան պիտի պաղնուին. մահը միխիթարիչ է և իր կապածը չքակուիր: Խեղճ մարմին, ինչո՞ւ վախնաս չէութենէն քանի որ չէութեան նախասահմանուած ես: Մէն մի զարնող ժամը դէպ 'ի չէութիւն կը մղէ քեզի, մէն մի առած քայլդ կը խորտակէ սանդուղին այն աստիճանը ուր պահ մ'առաջ կանգնած էիր. մեռելներով միայն կը սնիս. երկնից օդը վրադ կը ծանրանայ և կը ճզմէ քեզի. գետինը, որու վրայ կը կոխես, դէպ ինքը կը քաշէ քեզի ոտներուդ ներքանէն բռնելով: Էջիր, էջիր. ինչո՞ւ այդքան կը զարհուրիս: Մի՞թէ խօսք մ'է քեզ սարսափ տուողը: «Ա՛լ պիտի չապրինք» ըսէ միայն: Ոչ ապաքէն մեծ յոգնութիւն մ'է կեանքը և քաղցր է հանգստանալը: Քանի որ տարբերութիւնը քիչ մ'աւելի կանուխ և քիչ մ'աւելի ուշն մէջն է, մարդս ինչո՞ւ կը վարանի արդեօք մեռնելու: Նիւթն անկորնչելի է, և բնագէտները, կ'ըսուի մեզ, փոշիին ամենափոքր հատը յանհունս կը տանջեն առանց զայն ջնջել կարենալու երբէք: Եթէ նիւթը դիսպուածին սեպհականութիւնն է, ի՞նչ դէշութիւն կ'ընէ իր տանջանքը փոխելով, քանի որ չկրնար իր տէրը փոխել: Աստուծու հոգն է ընդունած ձևս և վշտիս կրած միաղեստը: Վիշտը դանկիս մէջ կ'այրի. իմս է վիշտը, ուստի կը մեռցնեմ զայն. բայց ոսկրներն իմն չեն, ուստի ետ կը տամ ոսկրներս որու որ ինձ փոխ տուած էր զանոնք. թոյլ բանաստեղծ

մ՚այն ոսկրներով բաժակ մը շինէ որով իր նոր գինին պիտի խմէ։ Ի՞նչ յանդիմանութեան կրնամ ենթարկիլ, և ո՞վ պիտի ընէ ինձ այս յանդիմանութիւնը. որ անողոքելի դատաւորը պիտի զայ ըսէ ինձ թէ չարաչար գործածութիւն մ՚ըրի։ Ի՞նչ գիտէ այս մասին. ներոս էր ան։ Եթէ մէն մի արարած կատարելու յատուկ գործ մ՚ունի, և եթէ ոՀիր մ՚է այս գործը կատարելէ հրաժեշտ տալը, ուրեմն ի՞նչպիսի մեծ յանցաւորներ են զայեկին ծոցը մեռնող մանուկները։ Ինչո՞ւ ասոնց ներուած է չկատարել իրենց գործը։ Մահուանէն ետք հաշիւ պիտի տրուի եղեր, որո՞ւ պիտի ծառայէ դասը։ Հարիւր երկինքն ամայի է քանի որ մարդս կը պատժուի ապրած ըլլալուն համար, վասն զի ապրած ըլլալն արդէն բաւական պատիժ է, և չգիտեմ թէ ո՞վ ուզած է ապրիլ, բայց 'ի Վ.օլթերէն իր մահուան անկողնին վրայ. ծեր և յուսահատ անատուածի մ՚արժանի և յետին աղաղակ անկարողութեան։ Ի՞նչ օգուտ. ի՞նչ հարկ այնքան կուիներու. ո՞վ կայ ուրեմն հոն վերն որ այնքան հոգեվարութեանց կը նայի և անոնցմէ հաճոյք կ՚զգայ. ո՞վ ուրեմն կը զուարճանայ և հոգերէն կ՚աղատի միշտ ծնող և միշտ մեռնող արարածներու այս տեսարանէն առջև, ուր մարդս կը շինէ, և խոտը կը բուսնի. կը տնկէ և շանթը կ՚ընկնի. կը քայլէ, և մահը «Կեցի՛ր» կը գոչէ. կը լայ, և արտասուրը կը ցամքի. կը սիրէ և երեսը կը խորշոմի. կ՚աշխատի, ծուռը կը կրկնէ, կ՚աղերսէ, թեւերը կը տարածէ, և դարձեալ հունձքը ցորենի շիղ մ՚ասելի չունենար։ Ո՞վ է ուրեմն որ այնքան ըրած է իր ամէն ըրածներուն ոչինչ ըլլալը միայն ինք գիտնալու հաճոյքը ունենալու համար։ Երկիրը կը մեռնի. ո՞վ ուրեմն իր ձեռքին մէջ բռնած է սեղմուած շոգիներու այս կաթիլը և այս կաթիլին իր ձեռքին մէջ ցամքելուն կը նայի, ինչպէս ձկնորս մը կը նայի քիչ մը ծովի ջուրի հատ մ՚աղ ունենալու համար։ Զգողութեան այն մեծ օրէնքն որ աշխարհս իր տեղն առ կախ կը պահէ, անհուն փափաքով մը կը մաշէ և կը կրծէ զայն. մէն մի մոլորակ իր թշուառութիւնները կ՚առնու կը տանի իր առանցքին վրայ հեծելով. այս մոլորակներն երկնից մէկ ծայրէն մինչև միւս ծայրը զիրար կը կոչեն և հանդիսաւոր առնչու սաստիկ փափաքով կը նային որ ո՞վ կանչ պի-

տի առնու ամենէն առաջ։ Ուստուած կը կեցնէ այս մոլորակները. ասոնք միշտ և յաւիտենապէս կը կատարեն իրենց դատարկ և անօգուտ գործը. կը դառնան, կը տաղնապին, կ՚այրին, կը մարին և կը վառին, կ՚ինչնեն և կ՚ելնեն, իրարու կը հետևին և իրարմէ կ՚զգուշանան, իրարու խառնուելով կը կապուին իրը օղակներ. իրենց մակերևոյթին վրայ անընդհատ նորոգուող հազարաւոր էակներ ունին. այս էակները նոյնպէս կը շարժին, դէմ առ դէմ կ՚ելնեն, ժամ մը քով քովի կը սեղմուին, ապա կ՚ընկնին, և ուրիշ էակներ կ՚ելնեն. կեանքն ուր որ կը պակսի, արագապէս կը հասնի հոն. օդն ուր որ դատարկութեան էութիւնը կ՚զգայ, հոն կը վազէ. ամենեին անկարգութիւն մը չկայ. ամէն ինչ կարգադրուած, նշանակուած, ոսկեղէն գիծերով և հրեղէն առակներով գրուած է. ամէն բան 'ի ձայն երկնային երաժշտութեան ընդ միշտ կը քայլէ անդուխ շաւիղներու վրայ, Եւ այս ամէն բաներն ոչինչ են։ Եւ մենք, մենք որ անանուն խեղճ երազներ, տժգոյն և յաւահար երևոյթներ, միօրեայ անշնչարելի արարածներ ենք, մենք որ մանրերկրորդ մը տևող շունչով մը կենդանութիւն կ՚առնունք որպէս զի մահը կարենայ էութիւն ունենալ, սաստկապէս աշխատելով կը յոգնինք մենք մեզի հաստատելու համար թէ դեր մը կը խաղանք, և չգիտեմ թէ ինչ բան մեզի կը նշմարէ։ Կը վրանինք երկաթէ պղտի գործի մը մխելու մեր կուրծքը, և մեր ուղեղը ջախջախելու արհամարհական շարժումով մը. կը թուի որ եթէ մենք մեզի մեռցնենք, դասը պիտի վերահաստատուի. աստուածային և մարդկային օրէնքները պրեցինք և շարաղբեցինք, և կը վախնանք մեր քրիստոնէական վարդապետութիւններէն. երուն տարի կը տառապինք անմուն, և կը կարծենք թէ կը կուլինք. վերջապէս վիշտն ամենէն զօրաւորն է. մահ ծայրով սակաւ ինչ վաղ կը դրկենք իմայականութեան սրբավայրը, և ծաղիկ մը կը բուսնի մեր գերեզմանին վրայ։»

Զեռքիս դանակը Պրիժիթին կուրծքին մօտեցուցեր էի այս խօսքերը լսելու համար։ Ա՛լ ինքզինքս չէի զսպեր, և զառանցական կացութեանս մէջ չգիտեմ թէ ինչ պիտի պատահէր. անկին բրի սառանը Պրիժիթին սրտին վրայէն, և ճիշդ իր սպիտակ կուրծքին

վրայ երբենոսէ պղտի խաչելութիւն մը նշմարեցի։ Նահանջեցի՝ ա-
հաբեկ. ձեռքս բացուեցաւ և զէնքն ընկաւ։ Մօրաքոյրը Պրիժիթին
տուած էր այս պղտի խաչելութիւնը մահուան անկողնին մէջ։ Սա-
կայն չէի յիշեր այս խաչը իր վրայ երբէք տեսած ըլլալս. ան-
շուշտ Պրիժիթ Ճամբայ ելնելու միջոցին իր վիզէն կախած էր զայն՝
ուղևորութեան վտանգներուն դէմ իբր պահապան մասունք։ Ցան-
կարծ ձեռնամած դիրք առի և դէպ 'ի գետինը ծռուիլս զգացի։

«Տէր իմ Աստուած, ըսի դողալով, Տէր իմ Աստուած, հոն
էիր։»

Որոնք որ Քրիստոսին չեն հաւատար, թող կարդան այս տողերը.
և աղ չէի հաւատար։ Ոչ մանկութեանս ատեն, ոչ աշակերտու-
թեանս ժամանակ, ոչ ալ՝ երբ ալ մարդ էի՝ եկեղեցի չգացեր էի.
կրօնքս, եթէ կրօնք մ'ունէի, ոչ արարողութիւն մը, ոչ խորհրդա-
նշան մ'էր, և ձև, կրօնք ու յայտնութիւն չունեցող Աստուծու մը
կը հաւատայի միայն։ Զատհասութեանս ատենէն սկսեալ վերջին
դարու բոլոր գրուածներէն թունաւորուելով ամբարշտութեան ա-
մուլ կաթը ծծեր էի այն գրուածներէն։ Մարդկային հպարտութիւնը,
որ ինքնամոլին աստուածն է, բերանս կ'արգիլէր աղօթելու, մինչ-
դեռ ահաբեկ հոգիս չէութեան յոյսին կ'ապաւինէր։ Կարծես արբ-
շիռ և յիմար էի երբ Քրիստոսը Պրիժիթին կուրծքին վրայ տեսայ.
բայց թէև ես ինքս չէի հաւատար Քրիստոսին, սակայն նահանջեցի՝
քաջ դիտնալով թէ Պրիժիթ կը հաւատար։ Սին սարսափ մը չեղաւ
այն սարսափն որ այն միջոցին ձեռքս կեցուց։ Ո՞վ կը տեսնէր զիս։
Մինակ էի զիշերը։ Խնդիրն աշխարհիս նախապաշարումներուն վրայ
էր. ո՞վ կ'արգիլէր զիս նայուածքէն հեռացնելու այս սև փայտին
կտորը։ Կրնայի կրակը նետել զայն, այլ սակայն զէնքս նետեցի։
Ո՜հ, ինչպէս մինչև հոգիս զգացի և սակաւին հիմա կ'զգամ այս
խաչին զօրութիւնը. ինչ ապիրատներ են մարդիկ որք հեգնութեան
առարկայ մ'ըրին ինչ որ կրնայ անձ մ'աղատել։ Ինչ պէտք է ա-
նունը, ձևը, հաւատքը. նուիրական չէ՞ ինչ որ բարի է։ Մարդս
ինչպէս կը համարձակի Աստուծու դպնալու։

Ինչպէս արևին մէկ նայուածքովը ձիւնը լեռէն կ'իջնէ, և երկ-
նից սպառնացող սառնակոյտը հովին մէջ գետ մը կ'ըլլայ, նոյն-

պէս սիրտս կ'իջնէր աղբիւր մ'որ կ'արտահոսէր։ Զիղջը մաքուր
խունկ մ'է. այս խունկն բոլոր տառապանքէս կ'արտաբուրէր։ Թէև
ոՀիր մը գործերէի գոգցես, երբ սակայն ձեռքս զինաթափ մնաց,
զգացի թէ անմեղ է սիրտս։ Վայրկենի մը մէջ հանգարտութիւնս,
ոյժս և խելքս վերստին դտեր էի. նորէն դէպ 'ի ննջեակը յառա-
ջեցի. ծռուեցայ կուռքիս վրայ և իր խաչը պաղի։

«Հանդիստ նիրհէ, ըսի անոր, Աստուած կը հսկէ քու վրայ։
Մինչդեռ երազ մը տեսնելով կը ժպտիր, ահա աղատեցար այն
ամենամեծ վտանգէն որուն կենացդ մէջ առաջին անգամ է ենթար-
կուիլդ։ Սակայն քեզ սպառնացող ձեռքը գէշութիւն պիտի չընէ
որ և է անձի. յանուն քու Քրիստոսի խակ կ'երդնում թէ պիտի
չմեռցնեմ ոչ քեզի և ոչ զիս։ Խենդ մ'եմ, անմիտ մ'եմ, տղայ
մ'եմ որ մարդ մը կարծեցի ինքզինքս։ Օրհնեալ ըլլայ Աստուած,
ծաղկահաս և կենդանի ես, գեղեցիկ ես և պիտի մոռնաս զիս։ Պի-
տի աղատիս այն գէշութենէն զոր քեզ ըրի, եթէ կրնաս ներել
զայն։ Հանդիստ քնացիր մինչև առաւօտ, Պրիժիթ, և անատեն ո-
ռոշէ մեր Ճակատագիրը. ինչ կ'ուզէ թող ըլլայ տալու վՀիդ,
պիտի հնազանդիմ անտրտունջ։ Եւ դո՛ւն, Քրիստո՛ս, որ աղատե-
ցիր զինքը, ներէ ինձ, և մի ըսեր իրեն զինքն աղատելդ։ Ամբա-
րիշտ դարու մը մէջ ծնած եմ, և կը պարտաւորիմ շատ ապաշ-
խարանք կրելու։ Խե՜ղճ որդիդ Աստուծու որ կը մոռցուիս։ Զսորվե-
ցուցին ինձ սիրել քեզի։ Քեզի երբէք չմնաւեցի պատճառներու
մէջ. բայց փառք Աստուծու, տակաւին չսովորեցայ չդողալու ուր
որ կը զտնեմ քեզի։ Մեռնելէս առաջ անգամ մը դէթ քեզի շուր-
թերովս պագած պիտի ըլլամ սրտի մը վրայ որ լի է քեզմով։
Պաշտպանէ այն սիրտը մինչդեռ պիտի շնչէ. այն սրտին մէջ մնա-
ցիր, սրբաղան պահապան. յիշէ որ անբաղդ մը չհամարձակեցաւ
իր վշտովը մեռնելու քեզի խաչիդ վրայ բևեռուած տեսնելով. ամ-
բարիշտ էր այն անբաղդը, և զինքն ամբարշտութեան հիւանդու-
թենէն աղատեցիր. եթէ հաւատք ունեցած ըլլար, զինքը վիրաբ-
ած պիտի ըլլայիր։ Ներէ որոնց որ անհաւատութիւն սորվեցու-
ցին իրեն, քանի որ զղջացող ըրիր զինքը. ներէ այն ամեն մար-
դերուն որք կը հայհոյեն. անշուշտ քեզի բնաւ չտեսան երբ յու-

սահատութեամբ վարակուած էին։ Մարդկային ուրախութիւնները հեղնասէր են, անդթաբար կ'անարգեն. Ո՞ Քրիստոս, այս աշխարհիս երջանիկները կը կարծեն թէ բնաւ հարկաւորութիւն չունին քեզմէ. ներէ՛, երբ անոնց հպարտութիւնը կը թշնամանէ քեզի. իրենց արդիւնքովն անոնք կը մերժուին ազան կամ անազան. յաւէ՛ անոնց վրայ երբ կը կարծեն թէ ազատ են փոթորիկներէն և քեզի դիմելու համար դժբաղդութեան դասերուն կը կարօտին։ Մեր իմաստութիւնն և մեր սկեպտիկութիւնը մանկանց մեծ խաղալիկներ են մեր ձեռքը. ներէ՛ մեզ երբ կ'երազենք թէ ամբարիշտ ենք, դուն որ Գողգոթային վրայ կը ժպտէիր։ Ժամ մը տեղ մեր ամեն թշուառութեանց յոռեգոյնն է՝ մեր մնայարձութեանց համար՝ անոնց քեզի մոռնալու փորձ ընելը։ Բայց՝ ինչպէս կը տեսնես՝ միայն ստուերներ են այս թշուառութիւններն որք քու մէկ նայուածքով կ'ընկնին։ Դուն իսկ մարդ չեղար։ Ցաւն Աստուած ըրաւ քեզի. չարչարանաց գործիի մը շնորհիւ երկինք ելար, այն գործին քեզի թեւաքաց տարաւ փառաւոր հօրդ գիրկը. նոյնպէս է նաև մեր նկատմամբ. ցաւն է մեզի քեզ բերողն ինչպէս քեզի հօրդ տարաւ. մենք ալ փուշերով պսակուած կը դանք ամեն անգամ որ կը խոնարհինք պատկերիդ առջև. միայն արիւնաթաթաւ ձեռներով կը դպինք արիւնաբոյր ոտներուդ, և դու մարտիրոսաբար չարչարուեցար դժբաղդներէն սիրուելու համար։»

Արշալոյսին առաջին ճառագայթները կ'սկսէին երևալ. ամեն բան կը զարթնուր ստկաւ առ սակաւ, և օդը հեռաւոր և շիտակ ձայներով կը լեցուէր։ Տկար և յոգնաբեկ ըլլալով կը պատրաստուէի Պրիժիթը թողլու քիչ մը հանգստանալու համար։ Մինչդեռ դուրս կ'ելնէի, թիկնաթոռի վրայ նետուած բօպա մը ոտհելով գետինն ընկաւ քովս, և բօպայէն ծալլուած թուղթ մ'ընկաւ։ Առի թուղթը. նամակ մ'էր և Պրիժիթին ձեռագիրը ճանչցի։ Պահարանը կնքուած չէր. բայց նամակը և յետագայ տողերը կարդացի.

«25 դեկտեմբեր. 18...

«Երբ պիտի ընդունիս այս նամակը, քեզմէ հեռի պիտի ըլլամ, և թերևս բնաւ չպիտի ընդունիք զայն։ Ճակատագիրս կապուած է այն մարդուն ճակատագրին հետ որուն ամեն բան զոհեցի. առանց ինձի ապրիլն անկարելի է իրեն, և ահա իրեն համար մեռնելու փորձ պիտի ընեմ։ Կը սիրեմ քեզի. մնաս բարեաւ. կարեկցութիւն ունեցիր մեր վրայ։»

Կարդալէն ետք թուղթը դարձուցի, և հասցէն տեսայ որ էր. «Առ Գ. Անրի Սմիթ, 'ի Ն..., մնալ 'ի նամակատան։»

ԳԼՈՒԽ Է

Հետևեալ օրը կէսօրին, մինչդեռ դեկտեմբերի արև մը կը ճառագայթէր, երիտասարդ մ'և կին մը թև 'ի թև մտած անցան Արքայական-Պալատի պարտէզէն։ Գոհարավաճառի մը կրպակը մտան, ուր երկու համանման մատնի ընտրեցին, և ժպտով մ'այն մատնիները փոխադարձապէս իրարու տալէն ետք իւրաքանչիւր ոք մատը դրաւ իրը։ Կարճառև պտոյտէ մ'ետք Գրեր-Բրօվանսոյի պանդոկը դացին և հոն նախաճաշ ըրին այն փոքրիկ և բարձր սենեակներուն մէկին մէջ ուսկից աշխարհիս ամենագեղեցիկ վայրերուն մին կը տեսնուի իր բոլոր մասերովը։ Պանդոկին ծառան երբ գնաց, կինն և երիտասարդն այս սենեկին պատուհանին կոթնեցան առանձնակի և կամաց մ'իրարու ձեռքը սեղմեցին։ Երիտասարդն ուղևորի զգեստներ հագած էր. ով որ տեսնէր անոր երեսին վրայ ուրախութիւնը, պիտի կարծէր թէ նոր փեսայ մ'է որ առաջին անգամ իր ծաղկահաս կնկան ցոյց կը տայ Բարիզի կեանքն և զբօսանքը։ Իր զուարթութիւնը մեղմ և հանդարտ էր, ինչպէս միշտ է երջանիկներուն զուարթութիւնը։ Փորձառութիւն ունեցողը պիտի գիտէր թէ պատանի մ'էր որ մարդ կ'ըլլար և որուն աւելի վստահ նայուածքը կ'սկսի վերահաստատել սիրոյ։ Ժամանակ առ ժամանակ երկինք կը նայէր հոգեպիշ, ապա իր բարեկամուհիին կը նայէր, և իր աչերուն մէջ արտասուք կը փայլէր. բայց թոյլ կը տար որ հոսի արտասուքն իր այտերուն վրայէն, և կը ժպտէր առանց սրբելու այն արտասուքները։ Իսկ կինը տժգոյն և խորհուն էր. միայն իր բարեկամ

մին կը նայէր։ Իր նայուածքին մէջ խորունկ վիշտ մը կար որ պա-
հուէրու ջանք չէր ըներ, և որ սակայն չէր համարձակեր դիմադրե-
լու այն խնդութեան զոր կը տեսնէր։ Ինքն ալ կը ժպտէր երբ իր
ընկերը կը ժպտէր, բայց ինքն առանձին չէր ժպտեր. երբ ընկերը
կը խօսէր, ինքն ալ պատասխան կը տար, և կ'ուտէր ինչ որ ան
իրեն կը տար։ Բայց այս կինն ունէր լռութիւն մ'որ կարծես վայր-
կեան կ'ապրէր։ Իր թախծութիւնը և անփութութիւնը տեսնողը յայտ-
նապէս կը նշմարէր հոգիին մեղկութիւնը, երկու էակներուն տկա-
րագունին քունը, էակներ որք զիրար կը սիրեն, և որոնց մին մու-
սով կ'ապրի միայն և արձաղանքէ կ'ենդանութիւն կ'առնու լոկ։
Երիտասարդը գիտէր այս բանը, և այս պատճառաւ հպարտ և ե-
րախտագէտ կ'երևար. բայց իր հպարտութենէն խակ կը տեսնուէր
թէ իր երջանկութիւնը նոր էր իրեն համար։ Երբ կինը յանկարծ
կը տրտմէր և դէպ 'ի դետինը կը նայէր, երիտասարդն անոր սիրա
տալու համար՝ ջանք կ'ընէր զուարթ և համարձակ կերպարան մ'ու-
նենալու, թէև միշտ չէր յաջողեր ունենալու, և ինքն խակ երբեմ-
նակի կը խռովէր։ Ատարբեր հանդիսականի մ'անկարելի էր հաս-
կընալ այժի և տկարութեան, ուրախութեան և վշտի, խռովու-
թեան և հանդարտութեան այս խառնուրդը. կրնար փոփոխակի կար-
ծուիլ թէ անոնք աշխարհիս ամենէն երջանիկներն և ամենէն դժբաղդ-
ներն էին. սակայն անոնց դաղտնիքը չգիտնալով կ'զգայիր թէ միա-
ցին կը տառապին, և ինչ կ'ուզէր ըլլար իրենց դաղտնի վիշտը,
կը տեսնէիր որ իրենց վիշտերուն վրայ սէրին ուշի զօրաւոր կնիք
մը, այսինքն բարեկամութեան կնիքը դրեր էին։ Մինչդեռ իրարու
ձեռքը կը սեղմէին, իրենց նայուածքը սուրբ կը մնար. թէև մի-
նակ էին, բայց ցած ձայնով կը խօսէին։ Կարծես իրենց խորհուրդ-
ներու բեռին ներքև ճնշուելով իրենց ձակատները իրարու կը թնե-
ցին, սակայն անոնց շուրթերն իրարու չդպան։ Մէկ մէկու կը նա-
յէին գորովալի և հանդիսաւոր կերպով բարեսիրտ ըլլալ ուզող
ուսուցիչներուն պէս։ Երբ ժամը մէկ զարկաւ, կինը խորին հառա-
չանք մը հանեց, և կէս մը դառնալով ըսաւ.

— Օգթաւ, մի՛ գուցէ սխալիս։

— Ո՛չ, սիրելիդ իմ, պատասխանեց երիտասարդը, ապահով է-

զիր թէ չեմ սխալիր։ Հարկ պիտի ըլլայ քեզ շատ տառապիլ,
թերևս երկար ատեն տառապիլ, և ինձ ալ հարկ պիտի ըլլայ միշտ
տառապիլ. սակայն երկուքս ալ բոյժ պիտի դտնենք. գուն ժամա-
նակով, ես ալ Աստուծով։

— Օգթաւ, Օգթաւ, կրկնեց կինը, ապահովես թէ չես սխալիր։

— Սիրելիդ իմ Պրիժիթ, չեմ կարծեր թէ կրնանք զիրար մոռ-
նալ, բայց կը կարծեմ թէ այս միջոցիս տակաւին չենք կրնար ի-
բարու ներել, այլ սակայն ամեն զոհողութիւն, մ՚զիրար բնաւ
չտեսնելու զոհողութեամբ իսկ պէտք է ներել սակայն։

— Ինչո՞ւ ալ չտեսնուինք։ Ինչո՞ւ օրին մէկը . . . ։ Տակաւին ան-
տիսական երիտասարդ մ'ես։

Ասա ժպիտով մը շարայարեց.

«Առաջին սիրոյդ ժամանակ պիտի տեսնուինք անվտանգ։»

— Ո՛չ, սիրելիդ իմ. վասն զի գիտնաս որ երբէք չպիտի տես-
նեմ քեզի առանց սիրոյ։ Իցի՛ թէ քեզ արժանի հանդիսանար ան
որու կը թողում, որու կը տամ քեզի։ Սմիթ քաջ, բարեսիրտ
և պարկեշտ է. բայց ի՞նչ սէր կ'ուզես ունեցիր իր վրայ, կը
սիրես զիս, վասն զի եթէ ուզէի մնալ կամ տանիլ քեզի, կը
հաւանէիր։

— Իրա՛ւ է, պատասխանեց կինը։

— Իրա՛ւ է, իրա՛ւ է կրկնեց երիտասարդը հոգիին բոլոր աչերովն
անոր նայելով, իրաւ կը դաս հետս եթէ ուզեմ։

Ասա մեղմիկ շարունակեց.

«Ահա այս պատճառաւ երբէք պէտք չէ որ տեսնուինք։ Աշ-
խարհիս մէջ կան ինչ ինչ սէրեր որք մարդուս դլուխը, զգայա-
նքը, խելքը և սիրտը տակնուվրայ կ'ընեն. ամեն մարդկան մէջ
կայ սէր մը միայն որ չխռովիր, կը թափանցէ, և այս սէրը կը
մեռնի այն էակին հետ որուն մէջ արմատ ձգած է։

— Սակայն նամակ պիտի գրես ինձ այնպէս չէ։

— Այո՛, նախ ժամանակ մը, վասն զի կրելու տառապանքս այն-
քան խիստ է որ ամեն սովորական և սիրեցեալ ձևի տարակայու-
թիւնը հիմա կրնայ մեռցնել զիս։ Քեզմէ ճանչուած չըլլալով սա-
կաւ առ սակաւ և չափով, նաև վախով մտածեցայ, մտերիմ եղայ

և վերջապէս . . . : Բայց անցելոյն վրայ չխօսինք : Նամակներս սակաւ առ սակաւ պիտի ցանցառին, մինչև այն օրն ուր բոլորովին պիտի դադրին : Այսպէս պիտի իջնեմ այն բլուրէն որու վրայ ե�այ տարիէ մ'ի վեր : Հոն մեծ արտմութիւն մ'և գուցէ նաև հրապոյր մը պիտի ըլլայ : Մարդս երբ դերեզմանատան մէջ կանգ կ'առնու նոր և գալարազարդ դերեզմանի մ'առջև ուր երկու սիրեցեալ անուն քանդակուած են, կ'զգայ բոլորովին խորհրդաւոր ցաւ մ'որ արտասուքը թափել կը տայ առանց դառնութեան. ես ահա այսպէս կ'ուզեմ երբեմնակի յիշել թէ ատեն մը կենդանի էի :»

Կինն այս վերջին խօսքերը լսելով թիկնաթոռի մը նետուեցաւ և հեծկլտաց : Երիտասարդը կը լար. սակայն անշարժ կեցաւ և կարծես չէր ուզեր ինքն իր ցաւը նշմարել : Երբ դադրեցան արտասուքը, մօտեցաւ իր բարեկամուհիին, ձեռքը բռնեց և պաղաւ.

— Հաւատա՛ ինձ, ըսաւ երիտասարդը, երբ մարդս կը սիրուի քեզմէ, ինչ անուն կ'ուզէ թող առնու այն տեղը զոր կը գրաւէ սրտիդ մէջ, սիրուելումն ոյժ և քաջալերութիւն կ'առնու : Ոչ օք ինծի չափ պիտի հասկնայ քու սիրդ և ոգիդ, Պրիժիթ. այս մասին մի՛ տարակուսիր քնաւ. ուրիշ մ'ունի արժանաւորութեամբ պիտի սիրէ քեզի, սակայն ոչ որ ունի սաստկութեամբ պիտի սիրէ : Ուրիշ մը պիտի խնայէ 'ի քեզ այն յատկութեանց զոր ես կը թշնամանեմ, իր սիրովը պիտի շրջապատէ քեզի. լաւագոյն սիրող մը պիտի ունենաս, սակայն լաւագոյն եղբայր մը չպիտի ունենաս : Տո՛ւր ինձ ձեռքդ, և թո՛ղ որ աշխարհս խնդայ վեհ խօսքի մը վրայ զոր չհասկնար. « Բարեկամ մնանք, և մնաս բարեաւ յաւիտեան :» Երբ առաջին անգամ մէկզմէկ գրկեցինք պնդիւ, արդէն երկար ատենէ 'ի վեր բան մը կար 'ի մեզ որ գիտէր թէ դուն և ես պիտի միանանք : Թող մեր մէկ մասը կազմող այն բանն որ առաջի Աստուծու գրկուեցաւ, չդիտնայ թէ երկրիս վրայ կը զատուինք. թո՛ղ ժամանակ մ'ողորմելի վէճը չքակէ մեր յաւիտենական երջանկութիւնը :

Երիտասարդը կնկան ձեռքը կը բռնէր. սա ելաւ, տակաւին արտասուքով ողողուն և տարօրինակ ժպիտով մը հայլիին առջևն երթալով իր մկրատը հանեց և գլխուն վրայէն իր մազերուն մէկ երկայն հիւսակը կտրեց. այսպէս իր կերպարանքը ուրիշ մինչև գեղեցիկ զարդին մէկ մասէն զրկուելէն ետք վայրկեան մ'ինքն իրեն նայեցաւ հայլիին մէջ, և մազին հիւսակը իր սիրողին տուաւ :

Ժամը նորէն զարկաւ. իջնելու ժամանակը հասաւ. երբ նորէն անցան ձեմելու սրահներու տակէն, զուարթ կ'երևայրն ինչպէս երևեր էին հոն գալու ատեն :

— Ահա գեղեցիկ արև մը, ըսաւ երիտասարդը :

— Եւ գեղեցիկ օր մը, ըսաւ Պրիժիթ, զոր ոչինչ պիտի ջնջէ ասկից :

Պրիժիթ ուժգնակի սրտին վրայ զարկաւ. կինն ու երիտասարդը սկսան անձապարումով քայլել և բաղմութեան մէջ անհետացան :

Ժամ մ'ետք իջևանի կառք մը Ֆոնթէնպլոյի դուռին առաջի մէկ բլուրին վրայէն անցաւ : Երիտասարդը մինակ էր կառքին մէջ. վերջին անգամ մ'ալ 'ի հեռուստ նայեցաւ իր ծննդեան երկրին, և շնորհակալ եղաւ Աստուծմէ թոյլ տուած ըլլալուն համար որ իր յանցանքովը տառապող երեք անձանց մին միայն դժբաղդ մնայ :

Վայ դեռ տարեք !!!!!!

Հ. Ս. Հ. Հ. ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Հ. Ս. Հ. Գրականության Բաժնատեղի
7/II-1922
ԵՐԵՎԱՆ, Ազատության
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԵՐՈՒՍ ՄԷԿ ՋՈՒՇԿԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ԳԻՆ 20 ԳՐՈՒՇԻԿՆԵՐ

Handschr. Bibl. — 2. Band
2270
2271
12013